

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

1459

3 K23

---

4-71





3K23

4-71

26 MAY 2005

Վ. Ի. ԼԵՆԻՆ

14 NOV 2009

# ԿՈՌՊԵՐԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Թարգմ. Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆԻ



3K23
4-71

ՄՈՍԿՎԱ-1926



1 00 09:2013 5

1459

«ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԱՎԱՆՏՅՈՒՐԻԶՄ» ՆՈՂ-  
ՎԱԾԻՑ

Հ ա տ վ ա ծ Լ.

Մի փոքր քրքրեցեք սոց.-հեղափոխականին  
և դուք կգտնեք Պ. Վ. Վ.-ին: Հենց վոր բանը  
գործի հասավ, նարողնիկության բոլոր հին նա-  
խապաշարմունքները, վոր ամենաբարեհաջող  
կերպով պահվել էին ճարպիկ ֆրագների պաշա-  
պանության տակ, իսկույն և յեթ գուրս սողա-  
ցին: Պետական հողատիրություն—հողը գյու-  
ղացիությանն անցնելու վերջավորումը պի-  
տության ձեռքով—համայնք — կոոպերացիա —  
կոլեկտիվիզմ պ. պ. Սազանովի, Յուզովի<sup>1)</sup> Ն.-  
ոնի,<sup>2)</sup> սոց.-հեղափոխականների, Հոֆշտետտե-  
րի, Տոտոյանցի<sup>3)</sup> և այլն և այլն,—այս հոյա-  
կապ սխեմայում պակասում է մի բոլորովին  
պզտիկ բան: Նրանում չկա վոչ զարգացող կա-  
պիտալիզմ, վո՛չ գասակարգային կոիվ: Ասե՛նք,  
վո՞րաեղից ել լինեիր այդ պզտիկ բանն այն մարդ-

\*) „Искра“ № 24 от 1 сент. 1902 г.



3415-84



կանց գլխում վորոնց ամբողջ դադափարական կարողութիւնը կազմված է նարոզնիկութեան ցնցոտիներէից և մողայական քննադատութեան շքեղ կարկտաններից: Միթե՞ պ. Բուլգակովն<sup>4</sup>) ինքը չասե՞ց, թե գլուղում անտեսական կովի համար տեղ չկա: Միթե՞ դասակարգային կովի փոխարինումը «ամեն տեսակ կոոպերացիաներով» չի բավարարի և՛ լիբերալներին, և՛ «քննադատներին» և ընդհանրապես բոլոր նրանց ում համար սոցիալիզմն ավանդական ցուցանակ է միայն...

(Собр. соч., т. IV, стр. 132.)

Հատված II.

Սոց.-հեղ. մինիմում-ծրագիրը՝ հիմնված լինելով վերևում քննված տեսութեան վրա՝ մի իսկական կուրյուզ է հանդիսանում: Կա յերկու կետ այդ «ծրագրում». 1) «հողի սոցիալիզացիան, այսինքն՝ նրա ամբողջ հասարակութեան սեփականութիւնը դառնալը և ոգտագործունն աշխատավորներին ձեռքով»: 2) «գյուղացիութեան մեջ ամեն տեսակ հասարակական միացումների և անտեսական կոոպերացիաների զարգացումը... («գոտ» քաղաքակա՞ն կովի համար)... վողային կապիտալի իշխանութիւնից գյուղացիութիւնը աստիճանաբար ազատագրելու համար... (արդունագործականի՞ իշխանութեան տակ անցնելու)... և ապագա հա-

վաքական յերկրագործական արտագրութիւնը նախապատրաստելու համար»: Ինչպես արևը ջրի պզտիկ կաթիլում, այս յերկու կետում անդրադառնում է ժամանակակից «սոցիալ-հեղափոխակա՞նութեան» ամբողջ վողին: Թեորիայում— հեղափոխական Ֆրազ, փոխանակ հայացքների լավ մտածված ու ամբողջական սխտեմի, գործնականում՝ անգոր կալումն այս կամ այն մողայական միջոցիկի, փոխանակ դասակարգային կովին մամակցելու— անա բոլորը, ինչ վոր ունեն նրանք: Մինիմում— ծրագրում հողի սոցիալիզացիան ու կոոպերացիան իրար կողքին դնելու համար անհրաժեշտ էր, խոստովանում ենք, հազվագյուտ քաղաքացիական քաջութիւն: Մեր մինիմում ծրագիրը մի կողմից՝ Բաբլոֆն<sup>5</sup>) է, մյուս կողմից՝ պ. Լեվիտսկին: Աննաման է այս:

Յեթե կարելի լիներ լուրջ վերաբերվել այս ծրագրին՝ մենք սոխաված կլինեյինք սակ թե՛ բառերի հնչյունով խաբելով իրենց՝ սոց.-հեղ. խաբում են նաև գյուղացուն: Խաբեյութիւն է այն՝ իբր թե «ամեն տեսակի կոոպերացիաները» ժամանակակից հասարակութեան մեջ հեղափոխական դեր են խաղում և կոլեկտիվիզմ են նախապատրաստում, այլ վոչ թե գյուղական բուրժուազիայի ամբացումը...

(Собр. соч., т. IV, стр. 133—134)



«ՆԱՐՈՂՆԻԿՈՒԹՅՈՒՆԻՑ ԳԵՊԻ ՄԱՐԻՍԻԶՄ»\*)

### ՀՈՂՎԱԾԻՑ

Նարողնիկական թեորիան ել ավելի պարզ հանդես ե գալիս գյուղացիության մասին առած դատողություններում\*\*): Ամբողջ նախագծում առանց խտրության գործ են ածվում՝ աշխատավորներ, շահագործվողներ, բանվոր դասակարգ, աշխատավոր մասսա, շահագործվողների դասակարգ, շահագործվողների դասակարգեր բառերը: Յեթե հեղինակները մտածելին թեկուզ այդ վերջին, պատահաբար բերանից թռած արտահայտության մասին (դասակարգեր) նրանք կըհասկանային, վոր կապիտալիզմի որով աշխատում և շահագործման են յենթարկվում վո՛չ միայն պրոլետարները, այլև մանր բուրժուականները: Մեր սոց.-հեղ. մասին ել նույնը պիտի ասել, ինչ վոր ասված եր լեգալ նարողնիկներին մասին՝ նրանց պատիվ վիճակվեց բա-

\*) „Вперед», №1 от 11 января 1905 г.

\*\*\*) Խոսքը սոց.-հեղ. կուսակցության ծրագրի նախագծի մասին և:

ցահայտել աշխարհում չտեսնված այնպիսի մի կապիտալիզմ, վոր առանց բուրժուազիայի յեր: Նրանք խոսում են աշխատավոր գյուղացիության մասին՝ աչքերը փակելով այն ապացուցված, ուսումնասիրված, հաշվված, նկարագրված, ծամծամված իրողության առջև, վոր մեզ մոտ, այդ աշխատավոր գյուղացիության մեջ, հենց այժմ անպայման գերակշռում ե գյուղացիական բուրժուազիան, վոր ունևոր գյուղացիությունը՝ անկասկած աշխատավորի կոչման իրավունքն ունենալով՝ այնուամենայնիվ առանց մշակներ վարձելու յոլա չի գնում և իր ձեռքերում հենց այժմ ել պահում ե գյուղացիության արտադրողական ուժերի կեսից ավելին:

Այդ տեսակետից ամենից ծիծաղաշարժը այն խնդիրն ե, վոր իր առաջ դնում ե սոց.-հեղ. կուսակցությունը մինիմում. ծրագրում. «սոցիալիզմի և բուրժուական սեփականատիրական հիմունքների դեմ մղած կռվի շահերի տեսակետից, ոգտագործել ուս գյուղացիության ինչպես համայնական, նույնպես և ընդհանրապես աշխատավորական հայացքները, ավանդություններն ու կյանքի ձևերը և մանավանդ հայացքը հողի մասին, իբրև բոլոր աշխատավորների ընդհանուր սեփականության»: Առաջին հայացքից այս խընդիրը թվում ե, թե թեորիայի և թե կյանքի կողմից



վաղուց հերքված համայնական ուսուցիչները կատարելապես անփնաս, զուտ ակադեմիական կրկնություն: Սակայն այստեղ իրապես մեր առջև դրված է մի կենսական քաղաքական հարց, վորի լուծումը խոստանում է տալ ուսական հեղափոխությունը ամենամոտ ապագայում՝ ո՞վ ո՞ւմ կոգտագործի: Հեղափոխական մտավորականությունը, վոր իրեն սոցիալիստական է համարում, բուրժուական սեփականատիրական հիմունքների դեմ մղած կռվի շահերի տեսակետից կոգտագործի՝ գյուղացիության աշխատավորական հայացքները, թե՛ բուրժուական-սեփականատիրական և միևնույն ժամանակ աշխատավոր գյուղացիությունը՝ կոգտագործի հեղափոխական-դեմոկրատական մտավորականության սոցիալիստական ֆրազեոլոգիան՝ հոգուտ սոցիալիզմի դեմ մղվող կռվի շահերի տեսակետից:

Մենք կարծում ենք, վոր կիրագործվի յերկրորդ հեռանկարը (հակառակ մեր ընդիմախոսների կամքի ու գիտակցության): Մենք համոզված ենք, վոր նա կիրագործվի, վորովհետև նա արդեն ինն տասներրորդականով իրագործվել է: Իսկապես՝ «բուրժուական-սեփականատիրական» (և միևնույն ժամանակ աշխատավոր) գյուղացիությունն արդեն իր շահերի տեսակետից ոգտագործել է սոցիալիստական ֆրազեոլոգիան

նարոզնիկական, դեմոկրատական մտավորականության, վորն իր արտելներով, կոպերացիաներով, խոտարուծություններով, գութանիկներով, զեմստվային պահեստներով, բանկերով կարծում եր թե գորավիզ եր լինում «աշխատավորական ավանդություններին ու կյանքի ձևերին», իսկ իրապես գորավիզ յեղավ կապիտալիզմի զարգացմանը համայնքի ներսում: Այդ կերպ ուս տնտեսական պատմությունն արդեն ապացուցեց այն, ի՞նչ կապացուցի վաղը ուս քաղաքական պատմությունը: Յե՛վ գիտակից պրոլետարիատի ամբողջ խնդիրը կայանում ենրանում, վոր ամենևին չհրաժարվելով բուրժուական աշխատավոր գյուղացիության առաջադիմական ու հեղափոխական ձգտումները պաշտպանելուց՝ պարզաբանի գյուղական պրոլետարին այդ գյուղացիության դեմ վաղը մղվելիք կռվի անխուսափելիությունը, բացառի նրան իսկապես սոցիալիստական նպատակները՝ վորոնք հակառակ են բուրժուական-դեմոկրատական յերազանքներին հողի հավասար ոգտագործման մասին: Բուրժուական գյուղացիության հետ միասին՝ ընդդեմ ճորտատիրության մնացորդների, ընդդեմ ինքնակալության, տերտերների, կալվածատերերի, քաղաքային պրոլետարիատի հետ միասին՝ ընդդեմ բուրժուազիայի ընդհանրապես և բուրժուական գյու-



դացիութեան մասնավորապես անա գյուղական  
պրոլետարի միակ ուղիղ նշանաբանը, անա ներկա  
մոմենտին Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիայի  
միակ ուղիղ հողային ծրագիրը: Հենց այդպիսի  
հողային ծրագիր է ընդունել մեր յերկրորդ  
համագումարը: Բուրժուական գյուղացիութեան  
հետ դեմոկրատիայի համար, քաղաքային պրոլե-  
տարի հետ սոցիալիզմի համար,—գյուղական  
չքավորները այս նշանաբանը կյուրացնեն շատ  
ավելի ամուր կերպով, քան նարոդնիկոթյուն  
անող սոցիալիստ-հեղափոխականների փայլուն,  
բայց զիզիպիզի նշանաբանները...

(Собр. соч., т. VI, стр. 55—57.)

«ՍՈՑԻԱԼԻԶՄԸ ՈՒ ԳՅՈՒՂԱՅԻՈՒԹՅՈՒՆԸ»  
ՀՈՒՎԱԾԻՅ

. . . I. Ս. Կ.\*\*) նախագծում հողային ծրագրի  
մինիմումի մնացած կետերը հետևյալներն են. 4)  
«սեփականութեան իրավունքի սահմանավակու-  
մը, վորչափ նա խոչընդոտ է դառնում ամեն տե-  
սակ յերկրագործական բարելավումների (վոռո-  
գումներ) համար, յեթե այդ բարելավումներն ան-  
հրաժեշտ կճանաչվեն շահագրգռվածների մեծա-  
մասնութեան կողմից... 7) ցանքսերի՝ հրդեհից ու  
կարկուտից, իսկ անասունների՝ համաճարակնե-  
րից ապահովագրման ազգայնացումը. 8) պե-  
տութեան կողմից որենսդրական աջակցութիւն  
յերկրագործական արտելներ և կոոպերացիաներ  
կազմելուն. 9) գյուղատնտեսական դպրոցներ»:  
Այս կետերը լիովին ս.-հեղ. կամ (վորնույն  
բանն է) բուրժուայական ռեֆորմատորութեան

\*) «Пролетарий» № 20 от сентября 1905 г.

\*\*) Լեհական Սոցիալիստական Կուսակցութիւն  
(Թարգմ.).



վոգո՞վ են: Նրանց մեջ հեղափոխական վոչինչ  
չկա: Նրանք, իհարկե, առաջադիմական են, խոսք  
չկա, բայց առաջադիմական են սեփականատե-  
րերի շահերի տեսակետից: Սոցիալիստի կողմից  
նրանց առաջադրումը նշանակում է հենց շոգո-  
քորթումն սեփականատիրական բնազդներին:  
Առաջադրել այդ կետերը—նույնն է թե՛ պա-  
հանջել պետություն աշակցությունը տրեսանե-  
րին, կարտելներին, սինդիկատներին, արդյունա-  
բերողների ընկերություններին, վորոնք պակաս  
«առաջադիմական» չեն, քան կոոպերացիաները,  
ապահովագրումը և այլն՝ յերկրագործություն մեջ:  
Այդ ամենը կապիտալիստական առաջադիմու-  
թյուն է: Դրա մասին հոգալը մեր գործը չէ,  
այլ տերերի, ձերնարկողների գործն է: Պրոլե-  
տարական սոցիալիզմը, հակառակ մանր-բուր-  
ժուայականին, մանր ու խոշոր տերերի կոոպե-  
րացիաների հոգսը վերապահում է դե-Ռոկինի  
կոմսերին, կալվածատեր-գեմցիներին և դրանց  
նմաններին, իսկ ինքը հոգում է ամբողջապես  
ու բացառապես վարձու բանվորների կոոպերա-  
ցիայի մասին տերերի դեմ կռիվ մղելու նպա-  
տակով...

(Собр. соч., т. VI, стр. 491).

### ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ՀԱՐՅԸ ԿՈՊԵՆՀԱԳԵՆԻ ՄԻ- ՋԱԶԳԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿՈՆԳՐԵՍՍՈՒՄ

Այս հոգվածում մտադիր եմ սահմանափակ-  
վել վերնագրում մատնանշած հարցի շուրջը տե-  
ղի ունեցած զբաղմունքների ընթացքը շարա-  
գրելով և բնույթագրելով սոցիալիստական մըա-  
քի այն ուղղությունները, վորոնք այստեղ պայ-  
քարում եյին իբար դեմ:

Մինչև կոնգրեսը կոոպերատիվների մասին  
հրատարակված եյին բանաձևերի յերեք նախա-  
գիծ: Բեղիական նախագիծը («Միջազգային  
Սոցիալիստական Բյուրոյի պարբերական բյու-  
լետենի» № 5, վոր լույս է տեսնում վոչ կանո-  
նավոր կերպով, միջազգային կոնգրեսների յե-  
րեք պաշտոնական լեզուներով) սկսում է նրա-  
նից, վոր սոցիալիստ-բանվորներին նախազգու-  
շացնում է այն մարզկանց ուսմունքի դեմ, վո-  
րոնք կոոպերատիվներն ինչ վոր ինքնամփոփ  
բան են համարում, մի տեսակ միջոց՝ սոցիա-  
լական հարցի լուծման համար: Ապա ընդունե-



լով, թե բանվոր դասակարգը չափազանց շահագրգռված է նրանով, վոր ոգտապործի կոռուպերատիվները, իբրև գործիք իր դասակարգային կռվի, բելգիական կուսակցութեան նախագիծը մասնանշում է կոռուպերատիվների անմիջական յեզրակացութեանները (պայքար առևտրական շահագործման դեմ, մատակարարողների աշխատանքի պայմանների բարելավումն և այլն) և ցանկութուն է հայտնում, վոր սոցիալիստական կուսակցութեանները և կոռուպերատիվների միջև «որգանական, ավելի ու ավելի սերտ կապեր» հաստատվեն:

Փրանսական սոցիալիստական կուսակցութեան մեծամասնութեան նախագիծը կազմված է ժորեսի<sup>6</sup>) վոգով: Կոռուպերատիվները բարձրացնում են մինչև յերկինք և ցուցադրում—ճիշտ այնպես, ինչպես ռեֆորմատորներն են անում—իրբև «սոցիալական վերանորոգման» «անհրաժեշտ» տարր: Մշուշապատ ֆրագներ են ասում կոռուպերատիվների՝ տռանձին անհատների միութեանից, միութեանների ղեկնառու ֆեդերացիաներ դառնալու մասին: Շփոթում են պրոլետարական կոռուպերատիվները մանր սեփականատերերի կոռուպերատիվների հետ (յերկրագործութեան մեջ) կոռուպերատիվների չեզոքութուն են քարոզում, նկարագրում այն վեստը, վոր առաջ կգա սո-

ցիալիստական կուսակցութեան վերաբերմամբ կոռուպերատիվների վրա վորևե պարտավորութուն դնելուց:

Վերջապես՝ ֆրանսական սոցիալիստների վորքրամասնութեան նախագիծը (գեղիստական) վճռաբար հայտարարում է, վոր ըստինքյան կոռուպերատիվներն ամենևին դասակարգային կազմակերպութեաններ չեն հանդիսանում (ինչպիսի յեն, որինակ, արհեստակցական միութեանները), վոր նրանց նշանակութունը վորոշվում է նրանց գործածութեան ձևով: Բանվորները մասսայաբար կոռուպերատիվներ մտնելով՝ կարող են նրանցից ոգուտ քաղել կապիտալի դեմ մղվող իրենց պայքարի համար, որինակով վորոշ չափով կարող են պարզել իրենց համար՝ թե ինչ տեսակ բան կլինի սոցիալիստական հասարակութունը, վորը կը կազմակերպվի ժամանակակից կազմի հակասութեանների վոշնչացումից հետո: Այդ պատճառով ել նախագիծը ընդգծում է կոռուպերատիվների սահմանափակ նշանակութունը և կոչ է անում սոցիալիստական կուսակցութեաններին՝ աջակցել պրոլետարական կոռուպերատիվներին, նախազգուշացնում է կոռուպերատիվային պատրանքներից, հանձնարարում է սոցիալիստների համախումբը կոռուպերատիվներին ներսում, վորպեսզի մասսաների համար պար-



զաբանվի նրանց իսկական խնդիրը՝ քաղաքական իշխանության նվաճումը և արտագրության ու փոխանակության միջոցները ընդհանուր սեփականութուն դարձնելը:

Կատարելապես ակնբերե ե, վոր այստեղ յերկու հիմնական գիծ ե նշվում, մեկը՝ պրոլետարական դասակարգային պայքարի գիծն, այն, վոր կոպերատիվները, արժեքավոր ե ճանաչում այդ պայքարի համար, իբրև նրա գործիքներից, իբրև նրա ոժանդակիչ միջոցներից մեկը, և վորոշում ե այն պայմանները, վորոնց մեջ կոպերատիվներն իսկապես կը կարողանան այդպիսի դեր խաղալ և չեն մնա իբրև սոսկ առևարական ձեռնարկություններ: Մյուս գիծը՝ մանր—բուրժուական ե, պրոլետարիատի՝ դասակարգային կուվում կոպերատիվների ունենալիք գերի հարցը միազնոց, կոպերատիվների նշանակութունը այդ կուվի սահմաններից գենը լայնացնող (այսինքն՝ կոպերատիվների մասին պրոլետարական ու սեփականատիրական հայացքները շփոթող), կոպերատիվների նպատակներն այնպիսի ընդհանուր ֆրագներով վորոշող, վորոնք ընդունելի յեն հաև բուրժուական ու ֆորմատորի՝ առաջադեմ մանր ու խոշոր տերերի այդ գաղափարախոսի համար:

Յավոր սրտի՝ մատնանշված յերկու գծե-

րը ճիշտ վոր մշայն նշված եյին յերեք նախապես պատրաստված նախագծերում, և վոչ թե պարզ, վորոշ, խիստ հակադրված իրար, իբրև յերկու ուղղություն, վորոնց պայքարը պիտի լուծի հարցը: Ուստի և կանգրեսի զբաղմունքները ընթանում եյին անհարթ, խճճված, կարծես տարերային կերպով: Ամեն բոպե «դեմ եյին առնում» տարածայնությունները, բայց չեյին պարզում լիովին, և դրա հետևանքով բանաձեմն ստացվեց մաքի շփոթն արտացոլող, չավող այն ամենը, ինչ կարող եր և պիտի տար սոցիալիստական կուսակցությունների կոնգրեսի բանաձևը:


Կոպերատիվների հարցը քննելու համար կազմված հանձնախմբում մի անգամից գծվեց յերկու հոսանք: Մեկը՝ ժորեսինն ու Ելմինին՝) եր: Ելմը կոպերատիվային հանձնաժողովում գերմանական չորս պատվիրակներից մեկն եր և խոսում եր իբրև գերմանացիների ներկայացուցիչ, խոսում եր վորոշակի ոպորտունիստական վոգով: Մյուս ուղղությունը բելգիականն եր: Միջնորդ, հաշտեցնող հանդիսացավ ավստրիացի Կարպելեսը ավստրիական կոպերատիվային շարժման ականավոր գործիչը, վորը վորոշ սկզբունքային գիծ չեր պաշտպանում, բայց (ավելի ճիշտ՝ վոչ թե «բայց» այլ՝ հենց այդ պատճա-



ուով ել) ավելի հաճախ թեքվում եր դեպի ու-  
պորտունիստները: Ասենք բելգիացիներին՝ ել  
ստիպում եր ժորեսի ու Ելմի հետ վիճել ավելի  
շուտ կոոպերատիվային գործի իսկական պրո-  
լետարական կազմակերման բնագոյը, քան հարցի  
վերաբերմամբ պրոլետարական և մա՛նր-բուր-  
ժուական հայեցակետների թշնամության ու  
անհաշուության ճիշտ ըմբռնումը: Ուստի և որի-  
նակ, Անսելը<sup>8</sup>) (կոոպերատիվային հանձնաժողո-  
վի նախագահը) հանձնախմբում կրակոտ ու հիա-  
նալի ճառեր եր ասում կոոպերատիվի չեզոքու-  
թյան դեմ, նրանց նշանակութունը չափազանց-  
ներու գեմ, ի պաշտպանութունն այն մտքի, թե  
անհրաժեշտ ե, վոր մենք սոցիալիստ—կոոպերա-  
տորներ լինենք, և վոչ կոոպերատոր—սոցիա-  
լիստներ, իսկ բանաձևը մշակելիս նույն Անսելն  
ուղղակի հուսահատության կարող եր հասցնել  
ժորեսի ու Ելմի ձևակերպումների վերաբերմամբ  
ցույց տված իր զիջողությամբ և տարաձայնու-  
թյան պատճառների մեջ խորամուխ լինել չու-  
ղենալու ցանկությամբ:

Սակայն վերադառնամ հանձնախումբի նիս-  
տերին: Հասկանալի յե, վոր աշխատանքների ըն-  
թացքի վրա վճռական ազդեցութուն ունեյին  
ուժեղ կոոպերատիվային շարժումն ունեցող ազ-  
գերի ներկայացուցիչները: Մի անգամից տարա-

ձայնութուն յերևան յեկավ բելգիացիների ու  
գերմանացիների միջև մեծապես աննպաստ վեր-  
ջիններիս համար: Համենայն դեպս բելգիացիներ-  
ը պրոլետարական գիծ եյին վարում, թեև վոչ  
լիովին հեռևողական, վոչ լիովին ճշգրիտ: Ելմը  
հրապարակ եր դուրս գալիս, իբրև իսկական ու-  
պորտունիստ (մանավանդ յենթահանձնախմբում,  
դրա մասին ներքևում): Բնական ե, վոր դեկա-  
վարող դերը պատկանում եր բելգիացիներին:  
Ավստրիացիք հակվում եյին նրանց, և հանձնա-  
խմբի աշխատանքների վերջին կարգացվեց Ավրս-  
տրո-բելգիական բանաձևը մինչդեռ Ելմը, վոր  
առաջարկում եր գերմանական բանաձևը, ուղ-  
ղակի հայտարարեց, վոր լիովին կարելի յե հա-  
մարում ժորեսի նախագծի հետ այն համաձայ-  
նեցնելը: Քանի վոր Ֆրանսիացիների մեջ ուժեղ  
փոքրամասնութուն եր ժորեսի դեմ (նրա տե-  
սակետի կողմն եր 292 մանդատ, իսկ Գեդի տեսա-  
կետի կողմը 142), իսկ գերմանացիների մեջ,  
ուժեղ փոքրամասնութուն կատարվեր Ելմի դեմ  
(յեթե պարզ ու սուր կերպով հարց բարձրանար  
յերկու տեսակետների մասին) ուստի և ավստրո-  
բելգիական դաշնակցութունը հաղթության ըս-  
տույզ շահներ ուներ: Յեվ խոսքը, իհարկե, այն-  
քան բառի նեղ իմաստով «հաղթության» մա-  
սին չեր վորքան կոոպերատիվների վերաբերմամբ





հետևողական պրոլետարական տեսակետի պաշտպանության: Այդ հետևողականությունը շահել չհաջողվեց շնորհիվ յենթահանձնախմբի կողմից ժորեոսին ու ելմին արված չափազանց զիջումների:

Ինչ վերաբերում է մեզ՝ ուս սոցիալ-դեմոկրատներին՝ մենք աշխատում եյինք հանձնախմբում ավատորո-բելգիական զիծը պաշտպանել և այդ նպատակով ավելի վաղ, քան հրատարակվեց ավատորո-բելգիական հաշտեցնող նախագիծը, առաջարկեցինք բանաձևի մեր նախագիծը հետե-վյալ բովանդակությամբ.

Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական պատվիրակության նախագիծը.

Կոնգրեսն ընդունում է.

1) վոր պրոլետարական սպառողական ընկե-րությունները բարելավում են բանվոր դասա-կարգի դրությունը այն տեսակետից, վոր նե-ղացնում են զանազան տեսակ առևտրական միջ-նորդների կողմից շահագործման ծավալը, վոր ազդում են մատակարարողների գործարաններում զբաղված բանվորների աշխատանքի պայմանների վրա և բարելավում են սեփական ծառայողների դրությունը:

2) Վոր այդ ընկերությունները կարող են մեծ նշանակութուն ստանալ պրոլետարիատի շահա-տեսակետից:

սական ու քաղաքական մասսայական պայքարի համար՝ ոգնելով բանվորներին գործադուլներին, լրկառուների, քաղաքական հալածանքների և այլ ժամանակ:

Մյուս կողմից կոնգրեսը մատնանշում է.

1) վոր այն բարելավումները, վորոնք կարող են ձեռք բերվել սպառողական ընկերություն-ների շնորհիվ, կարող են միայն լսխատ չնչին լի-նել, քանի արտադրության միջոցները գտնվում են այն դասակարգի ձեռքում, առանց վորի շահագործման սոցիալիզմն իրականացվել չի կարող:

2) վոր սպառողական ընկերությունները կապիտալի դեմ մղվող անմիջական պայքարի կազմակերպությունները չեն հանդիսանում, և գոյություն ունեն մյուս դասակարգերի նույն տեսակի կազմակերպությունների կողքին վորոնք կարող են իլլյուզիա առաջացնել, թե այդ կազ-մակերպությունները միջոց են հանդիսանում, վորի շնորհիվ սոցիալական հարցը կարող է լուծ-վել առանց դասակարգային կռիվի և բուրժուա-զիային շահագործելու:

Կոնգրեսը կոչ է անում բոլոր յերկրների բանվորներին.

ա) մտնել պրոլետարական սպառողական ըն-կերությունները և ամեն կերպ աջակցել նրանց զարգացման միաժամանակ պաշտպանելով այդ



կազմակերպությունները դեմոկրատիկ բնույթը՝  
բ) սպառողական ընկերություններում ան-  
խոնջ սոցիալիստական պրոպագանդի ճանապարհով նպաստել բանվորների մեջ դասակարգային կռվի ու սոցիալիզմի գաղափարների տարած-  
վելուն:

գ) զրա հետ միասին ձգտել վորջան հնարա-  
վոր և բանվորական շարժման բոլոր ձևերի ավելի  
կատարյալ մերձեցման:

Կոնգրեսը նշում է նաև, վոր արտադրողական  
ընկերությունները միայն այն դեպքում նշա-  
նակություն ունեն բանվոր դասակարգի պայքա-  
րի համար, յերբ սպառողական ընկերություննե-  
րի բազկացուցիչ մասն են հանդիսանում:

Բանաձևերի բոլոր նախագծերը հանձնվեցին  
յենթահանձնախմբին (միջազգային կոնգրեսի  
հանձնախմբերն այնքան մեծ են, — յուրաքանչյուր  
ազգություն չորսական պատվիրակ և ուղարկում  
ամեն մի հանձնախումբ, — վոր հանձնախմբի  
տեքստը հանձնախմբի լրիվ ժողովում մշակելու  
մասին խոսք ել չի կարող լինել): Յենթահանձ-  
նախմբի անդամ ընտրվեցին 10 հոգի՝ յերկու  
բելգիացի (Մնսել, և Վանդերվելդ), մի ֆրան-  
սացի (ժոռես), մի ավստրիացի (Կարպելես) մի  
գերմանացի (Ելմ), մի հոլանդացի (մարքսիստ  
Վիբո), մեկական՝ իտալացի, դանիացի, անգլիա-

ցի, ռուս ս.-դ. (Վոինով և յես—մեր ս.-դ. պատ-  
վիրակությունը չկարողացավ հավաքվել ներկա-  
յացուցիչներ ընտրելու—ուստի յերկուսս ել մաս-  
նակցում եյինք, իսկ քվեարկում եր մեկը):

Յենթահանձնախմբում արդեն ընթացավ բա-  
նաձևի տեքստ կազմելու զուտ գործնական աշ-  
խատանքը: Կոնգրեսը ընդունեց տեքստը, չըն-  
չին, վոճաբանական փոփոխություններով հենց  
այն, վոր մշակել և յենթահանձնախումբը—ըն-  
թերցողները կոնգրեսի բանաձևի տեքստը, կգա-  
նեն այս համարի մի այլ տեղում: Յենթահան-  
ձնախմբում պայքարը—հակառակ հանձնախմբում  
տեղի ունեցածից—կենդրոնացավ վոչ թե կոոպե-  
րատիվների կուսակցության հետ ունենալիք ա-  
ռնչության հարցի, այլ ավելի սկզբունքային հար-  
ցի՝ կոոպերատիվների նշանակության ու դերի  
շուրջը: Բելգիացիները թեքվում եյին դեպինըանյ՝  
կապիտալիստների դասակարգի «լիակատար սե-  
փականազրկման» (expropriation integrale) հա-  
մար մղվող պրոլետարական դասակարգային կռվի  
ոժանդակիչ գործիքներից մեկի դերի՝ սկզբուն-  
քորեն բոլորովին ճիշտ վորոշման: Ելմը, վորին  
պաշտպանում եր ժորեսը, վճռապես ընդդիմա-  
դրեց և ցույց տվեց իր ոպորտունիզմն ամբողջո-  
վին: Նա ասում եր, վոր դեռ անհայտ և, թե  
արդյոք ընդհանրապես բանը մինչև սեփականա-



գրկում կհասնի, վոր ինքն անձամբ կատարելապես անհավանական է համարում այդ, վոր «մեծամասնության» համար այդ հարցը վիճելի չէ, վոր գերմանական ս. գ. կուսակցության ծրագրում սեփականագրկում չկա, վոր հարկավոր է ասել «Ueberwindung des Kapitalismus» «կապիտալիզմի հաղթահարումը»: Հաննովերում՝ ի յեզրափակումն Բերնշտեյնի հետ ունեցած վեճերի՝ Բեբելի ասած նշանավոր խոսքը. «Es bleibt bei der Expropriation» — «ինչպես առաջ, այժմ էլ կողմնակից ենք սեփականագրկման» — մոռացվել էյին գերմանական ոսկորտունիզմի առաջնորդներին մեկի կողմից: Այդ վեճերի հետ առնչաբար ծագեց «սոցիալիզացիայի հարցը»: Ժորեսը ուլտիմատումի ձևով պահանջում էր, վոր կոոպերատիվների նշանակության վորոշման մեջ լինի, «նրանք ոգնում են բանվորներին (ինչպես և գրված է կոնգրեսի ընդունած բանաձևի տեքստում) նախապատրաստել արտադրության ու փոխանակության միջոցների գեմոկրատիզացիան ու սոցիալիզացիան»:

Սա — մեկն է այն ճապարհ, անորոշ, մանր սեփականատերերի գաղափարախոսների ու բուրժուական ռեֆորմիզմի թեորետիկները համար լիովին ընդունելի այն ֆրագներին, վորոնց այդպես վարպետ էր ժորեսը և վորոնց այդպես սիրա-

հար էր հա: Ի՞նչ է նշանակում «արտադրության ու փոխանակության միջոցների գեմոկրատիզացիան»: (Հետո հանձնախմբում, յերբ նախագիծը յենթահանձնախմբից վերադարձավ այնտեղ, ֆրանսիացիք միջոցների — moyens — բառը փոխարինեցին ուժերի — forces — բառով, բայց բանը դրանից ամենևին չփոխվեց): Գյուղացիական արտադրությունը (ասում էյի յես հանձնախմբում) «ավելի գեմոկրատիկ է», քան խոշոր կապիտալիստականը: Արդյոք դա նշանակում է, թե մենք՝ սոցիալիստներս՝ մանր արտադրության ստեղծումն ենք ցանկանում: Ի՞նչ է նշանակում «սոցիալիզացիա»: Գրա տակ կարելի չէ հասկանալ ամբողջ հասարակության սեփականությունը արձնելը, բայց կարելի չէ հասկանալ նաև ինչ տեսակ մասնակի միջոցներ ուղենաս, կապիտալիզմի շրջանակում ինչ տեսակ ռեֆորմներ ուղենաս, գյուղացիական ընկերություններից սկսած և վերջացրած մոնիցիլիալ բաղանիստներով ու պիսսուալներով: Չէ վոր ժորեսը յենթահանձնախմբում մատնացույց էր անում դանիական գյուղատնտեսական ընկերությունները, յենթադրելով, հավանորեն, բուրժուական տնտեսագետներին հետևելով, թե իբր դրանք կապիտալիստական ձեռնարկություններ չեն:

Այդ ոսկորտունիզմին զիմադրություն կազմա-



կերպելով՝ մենք (ուսու և լեհ ս.դ.) փորձում  
եյինք մեր վարքագծի ուղիղ լինելն հաստատե-  
լու համար Եւրոպայի գլխավոր Վուլթին՝ «Neue Zeit»-ի<sup>8)</sup>  
խմբագրակցին, վորը նույնպէս կոտպերատիվային  
հանձնախմբում եր գերմանացիներէ կողմից: Վուլթ-  
մը «գեմոկրատիկացիայի ու սոցիալիզացիայի»  
մասին ասած ֆրագմէնթին հավանութունն չէր  
տալիս, առաջարկում եր (մասնավոր կերպով) մի  
շարք ուղղումներ, բանագնացութունն եր անում  
Եւրոպայի ու մարքսիստներէ միջև, բայց Եւրոպային  
պիտի «հաստատակամութուն» յերևան բերեց,  
վոր Վուլթմը վոչ մի արդյունքի չհասավ: Կոն-  
գրեսից հետո միայն կարգացի «Leipziger Vol-  
kszeitung»-ում<sup>9)</sup> № 201, 13/VIII, 10, 3 «Beilage»),  
վոր գերմանական պատվիրականութեան մեջ դեռ-  
ևս յերեքշաբթի ուրը հարց ե բարձրացրած յեղել  
կոտպերատիվներէ մասին: Ռ. Ֆրիշերը հարցնում  
ե—գրում ե այս թերթի թղթակիցը, — արդյո՞ք  
գերմանական պատվիրակներէ միջև կոտպերա-  
տիվներէ հարցի մասին տարածայնութուններ  
չկան: Եւրոպայի պատասխանում ե. «կան»: Ետորվանից  
եգուց զբանք չես վերացնի: Կոնգրեսներէ վորո-  
շումները միշտ ել կոմպրոմիսային վորոշումներ  
են, տվյալ հարցումն ել գործը, հավանորեն, կոմ-  
պրոմիսով կվերջանա»: Վուլթմը. «Իմ հայացքները  
կոտպերատիվներէ հարցի մասին բոլորովին այլ

են (durchaus andere), քան ֆրոն-Եւրոպայի հայացք-  
ները. բայց մենք այնուամենայնիվ համաձայնու-  
թեան կգանք, հավանորեն, ընդհանուր բանաձևի  
շուրջը»: Դրանից հետո պատվիրականութունը  
քննութեան շարունակութունն ավելորդ համարեց:

Այդ տեղեկութունը հաստատում ե այն յե-  
րևույթը, վոր լիովին ուրվանկարվեց արդեն  
Շտուտտագարաի միջազգային համագումարում:  
Գերմանական պատվիրականութունը կազմվում  
ե հավասար կերպով կուսակցութեան ու արհեստ.  
միութուններէ ներկայացուցիչներէ: Վերջին-  
ներէս կողմից համարյա միշտ ուղորտունիստներն  
են անցկենում, վորովհետև սովորաբար ընտրում  
են քարտուղարներին և միութեան այլ «բյուրո-  
կրատներին»: Ընդհանրապէս միջազգային համա-  
գումարներում գերմանացիք անընդունակ են  
տոկուն ու հավատարիմ սկզբունքային վարքա-  
զիծ վարել, և Ինտերնացիոնալում հեգեմոնիան  
հաճախ դուրս ե պրծնում նրանց ձեռքից:  
Վուլթմի անդորութունն Եւրոպայի գլխաց միայն մի  
ավելորդ անգամ պատկերավորում ե այն ձգնա-  
ժամը գերմանական սոցիալ-գեմոկրատիայի մեջ,  
վոր ուղորտունիստներէ անխուսափելի և վճռա-  
կան կերպով բաժանվելու աճման մեջ ե կայանում:

Կոտպերատիվներէ կողմից կուսակցութեանը  
դրամական ոգնութունն ցույց տալու հարցումն



ել Ելմն ու ժորեսը չափազանց զիջումներ ձեռք բերին բելգիացիներին, վորոնք համաձայնեցին այս բանաձևին. «Յուրաքանչյուր յերկրի կոոպերատիվներին և վերապահվում վճռել՝ հարկավոր և և ինչ չափով անմիջապես իրենց միջոցներից ոգնություն ցույց տալ քաղաքական ու արհեստակցական շարժման»:

Յերբ յենթահանձնախմբի նախագիծը վերջնական հաստատման համար հանձնախումբը վերադարձավ, մենք մեր ամբողջ ուշադրությունը հենց այդ յերկու կետի վրա դարձրինք: Գեղի<sup>10</sup>) հետ միասին յերկու (զլխավոր) ուղղումն առաջարկեցինք, նախ՝ «(կոոպերատիվները) ոգնում են բանվորներին արտադրության ու փոխանակության միջոցների գեմոկրատիզացիան ու սոցիալիզացիան նախապատրաստել» բառերը «(կոոպերատիվները) ոգնում են վորոշ չափով նախապատրաստել փոխանակության գործառնությունը կապիտալիստների դասակարգի սեփականազրկումից հետո» բառերով փոխարինել: Այդ ուղղումի իմաստը, վոր վոճաբանորին շատ էլ հաջող չէր ձեվակերպված, նրանում չէր կայանում, վոր կոոպերատիվներն այժմ բանվորներին ոգնել չեն կարող, այլ նրանում, վոր կոոպերատիվների կողմից արդեն այժմ նախապատրաստվող արտադրության ու փոխանակության

ապագա գործառնությունը կարող և սկսվել միայն կապիտալիստների սեփականազրկումից հետո: Յերկրորդ ուղղումը վերաբերվում էր այն կետին, ուր ասված է կոոպերատիվների կուսակցության հետ ունենալիք կապի մասին: Մենք առաջարկում եյինք կա՛մ ավելացնել հետևյալ բառերը. «վոր (այսինքն՝ բանվորական պայքարին ցույց տված ոգնությունը) համենայն դեպս ցանկալի յե սոցիալիզմի տեսակետից», կա՛մ այդ ամբողջ կետը փոխարինել մի ուրիշով, վորն ուղղակի հանձնարարում է սոցիալիստներին կոոպերատիվներում քարոզել ու պաշտպանել պրոլետարիատի դասակարգային կռիվն ուղղակի ոգնություն ցույց տալու անհրաժեշտությունը:

Յերկու ուղղումն էլ մերժվեցին հանձնախմբի կողմից՝ հավաքելով միայն մոտ 15 ձայն: Սոցիալիստ-հեղափոխականները քվեարկեցին — ինչպես միշտ էլ միջազգային համագումարներում — հոգուտ ժորեսի: Ռուս հասարակության առաջ նրանք պատրաստ են նույնիսկ Բեբելին<sup>11</sup>) ոպորտունիզմի մեջ մեղադրել, իսկ յեվրոպականի առաջ նրանք Ելմի ու ժորեսի յետեվից են գնում: Վուրմը փորձեց ուղղել բանաձևի վերջը յերեք վերջին տողազուխները (աբզաց) տեղափոխելով: Թող սկզբում ասված լինի, վոր կոոպերատիվների մի ֆեդերացիայում միանալը ցան-



կալի յե (յերկրորդ տողագլուխ վերջից): Հետո թող հայտարարվի, թե կոոպերատիվներից ե կախված՝ կուսակցութեանն ուղղակի ոգնութեան ցույց տալ, թե՛ վոչ (յերրորդ տողագլուխ վերջից): Յեզ թող վերջին տողագլուխն սկսվի հետեվյալ բառերով. «բայց» (բայց համագումարը հայտարարում ե, վոր կուսակցութեան, արհեստակցական միութեանները ե կոոպերատիվների միջև ցանկալի յենն ավելի ու ավելի սերտ հարաբերութեաններ): Այդ դեպքում ընդհանուր կոնտեքստից պարզ կլինի, վոր կոնգրեսը հանձնարարում ե կոոպերատիվներին ոգնել կուսակցութեանը: Ելմը մերժեց նույնիսկ ա՛յդ ուղղումը: Այն ժամանակ Վուրմը յետ վերցրեց այն: Այն ժամանակ Վիբոն իր կողմից մտցրեց այդ ուղղումը մենք քվեարկեցինք հոգուտ նրա, բայց ուղղումը մերժվեց:

Այն հարցի աւթիվ, թե ինչ դիրք պիտի բռնենք համագումարի ընդհանուր ժողովում (պլենումում), խորհրդակցութեանն ունեցանք Գեդի հետ: Գեդն այն կարծիքին եր—և նրան համակալծիք եյին գերմանական հեղափոխական ս.՝դ. վոր կարիք չկա համագումարի ընդհանուր ժողովում մասնավոր ուղղումների պատճառով պատերազմ սկսել, վոր քվեարկել հարկավոր ե ընդհանրապես հոգուտ բանաձևի: Նրա պակա-

սութեանները կայանում են՝ մի ուսովիդիոնիստական Ֆրազ թույլ տալում, վորն իրենով սոցիալիզմի նպատակի վորոշումը չի փոխարինում, այլ այդ տեսակ վորոշման կողքին ե կանգնած ե վոչ,—բավականաչափ ուժեղ այն մտքի մի արտահայտութեան մեջ, թե բանվորական կոոպերատիվները պիտի ոգնեն բանվորական դասակարգային կուլին: Այդ տեսակ պակասութեանները պիտի աշխատեյինք ուղղել, բայց հիմք չկա նրանց համար կուլիվ սկսել ընդհանուր ժողովում: Մենք համաձայնեցինք Գեդի կարծիքին ե բանաձևը համագումարի ընդհանուր ժողովում ընդունվեց միաձայն:

Կոնգրեսի կոոպերատիվների հարցի աւթիվում կատարած աշխատանքների արդեյուններն ամփոփելով պիտի ասենք—չթագցնելով վոչ մեզնից, վոչ ել բանվորներից բանաձևի պակասութեանները—վոր Ինտերնացիոնալը հիմնական գծերում պրոլետարական կոոպերատիվների խնդիրների ուղիղ վորոշումն ե տվել: Կուսակցութեան յուրաքանչյուր անդամ, յուրաքանչյուր ս.՝դ. բանվոր, յուրաքանչյուր գիտակից բանվոր-կոոպերատոր պիտի ղեկավարվի ընդունված բանաձևով ե իր ամբողջ գործունեյութեանը տանի նրա վոգով:

Կոոպենհագենի կոնգրեսը նշանավորում ե բանվորական շարժման զարգացման այն աստի-



ճանը, յերբ նա, այսպես ասած, լայնանում եր  
և սկսել եր գոսակարգային կռիւ հունը մացնել  
պրոլետարական կոտորածները: Ռեվոլյուցիոնիս-  
տների հետ տարածայնությունները նշվեցին,  
բայց մինչև ռեվոլյուցիոնիստների ինքնուրույն ծրա-  
գրով ասպարեզ դուրս գալը, դեռ հեռու յե:  
Կռիվը ռեվոլյուցիոնիստների դեմ հետաձգված է,  
բայց այդ կռիվը կսկսվի անխուսափելիորեն:

(«Социал-Демократ» №17 от 25 сентября  
8 октября 1910 года).

### ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՍԵՎԱԳԻՐ ՈՒՐՎԱԳԾԻՅ

(Ս. Ու ջ ա Ր կ ե լ և Ն. Լ ե ն ի ն ը Ռ. Կ. Կ. VII հ ա-  
մ ա գ ու մ ա Ր ու մ).

... բ) Տնտեսական բնագավառում.

Համապետական մաշտաբով արտադրության  
սոցիալիստական կադմակերպումն—կառավարում  
են բանվորական կադմակերպությունները (ար-  
հեստակցական միությունները, Ֆաբրիկա-գործա-  
րանային կոմիտեները և այլն) ընդհանուր ղեկա-  
վարությամբ խորհրդային իշխանության, վոր մի-  
ակ սուվերենն է:

Նույնպես և փոխադրությունն ու բաշխումը  
(սկզբում «առևտրի» պետական մենաշնորհ, ապա  
սուեւորի լիակատար և վերջնական փոխարինումն  
ծրագրյալ կադմակերպված բաշխումով, վորը  
կկատարվի առևտրա արդյունագործական ծառա-  
յողների միությունների միջոցով) ղեկավարու-  
թյամբ խորհրդային իշխանության—ամբողջ ազ-  
գաբնակչության պարտադիր միասնացումն սպա-  
ռողա-արտադրողական կոմունաներում:

Զվերացնելով (ժամանակավորապես) փողը և



չարգելելով առուծախի առանձին գործարքները առանձին ընտանիքների միջև, մենք ամենից առաջ, պարտադիր պիտի դարձնենք, ըստ որենքի, բոլոր այդ տեսակ գործարքների կիրարկությունը սպառողա-արտադրողական կոմունաների միջոցով:

Անմիջական ձեռնարկումն ընդհանուր աշխատանքային պարտավորության (ТРУДОВАЯ ПОВИННОСТЬ) լիակատար իրագործման, մեծապես զգուշ և աստիճանաբար տարածելով այն մանր, առանց վարձու աշխատանքի՝ իր տնտեսությամբ ապրող գյուղացիության վրա:

Առաջին միջոցը, առաջին քայլը դեպի ընդհանուր աշխատանքային պարտավորությունը պիտի լինի մոծումը սպառողական-բանվորական (բյուջետային) գրքույկների (պարտադիր մոծումն) ամսական 500 ուրբ. վորոշված գումարից բարձր յեկամուտ ունեցող բոլոր հարուստ անձանց համար, ապա վարձու բանվորներ ունեցող բոլոր անձանց համար, ապա վարձու բանվորներ ունեցող ձեռնարկությունների տերերի և ծառայաճող ընտանիքների և այլն:

Առուծախը թույլատրելի չե և վոշ իր կոմունայի միջոցով (ճանապարհորդության միջոցին, շուկաներում և այլն), սակայն գործարքի (յեթե նա վորոշ գումարից բարձր ե) պարտադիր զը-

բանցմամբ սպառողական-բանվորական գրքույկներում...

Մրցման կազմակերպումը յերկրի զանազան (բոլոր) սպառողա-արտադիր կոմունաների միջև կազմակերպվածության, զիսցիպլինայի, աշխատանքի արտադրողականության անշեղ բարձրացման, ավելի բարձր տեխնիկայի անցնելու, աշխատանքի ու պրոդուկտների լսնայողության, բանվորական որվա մինչև որեկան 6 ժամ աստիճանաբար կրճատման, բոլոր արհեստներում և կատեգորիաներում բոլոր աշխատավարձերի ու ուճիկների աստիճանաբար հավասարեցման համար:

Անշեղ սիստեմատիկ միջոցներ՝ անցնելու համար անհատական տնային տնտեսությունից, առանձին ընտանիքների տնտեսավարությունից ընտանիքների մեծ խմբերի ընդհանուր սնման:

(Газета "Коммунист", № 5 от 9 марта 1918 г.  
Собр. соч., т. XV, стр. 162—163.)



«ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ  
ԽՆԴԻՐՆԵՐԸ» ՀՈԴՎԱԾԻՅ

Հ ա ա վ ա ծ Լ.

Սոցիալիստական պետութիւնը կարող է առաջ գալ միմիայն՝ իբրև ցանց արտադրողական սպառողական կոմունաների, վորոնք բարեխղճորեն հաշվի յեն առնում իրենց արտադրութիւնն ու սպառումը, անտեսում են աշխատանքը, անշեղ բարձրացնում նրա արտադրողականութիւնը և զբանով բանվորական ուրը մինչեւ յոթն, մինչև վեց ժամ որական և ավելի պակաս կարճացնելու հնարավորութիւնը հասնում: Առանց կարգի ձգելու հացի ու հացի հայթայթման (ապա նաև բոլոր այլ անհրաժեշտ մթերքների) խստագույն համաժողովրդական, ամենապարփակ հաշվառումն ու վերահսկողութիւնը՝ առանց զբան յոլա գնալ չի լինի: Կապիտալիզմը մեզ ժառանգութիւնն է թողել մասսայական կազմակերպութիւններ՝ ընդունակ դուրսացնելու անցումն մթերքների բաշխման

մասսայական հաշվառումին ու վերահսկողութիւնը — սպառողական ընկերութիւնները: Ռուսաստանում նրանք ավելի թույլ են զարգացած, քան առաջավոր յերկիրներում բայց և այնպես նրանք տասն միլիոնից ավելի անդամ ընդգրկեցին: Սպառողական ընկերութիւններն մասին մոտ որերս հրատարակված ղեկընդորդմի շատ նշանակալի յերևույթ է հանդիսանում, վոր ակնառու կերպով ցույց է տալիս Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնն զբութիւնը ու խնդրի առանձնահատկութիւնը ավյալ մոմենտին:

Դեկրետը հանդիսանում է համաձայնութիւնն բուրժուական կոոպերատիվների և այն բանվորական կոոպերատիվների հետ, վորոնք բուրժուական տեսակետին են մնում: Համաձայնութիւնը կամ կոմպրոմիսը կայանում է, նախ, նրանում, վոր հիշյալ հիմնարկների ներկայացուցիչները վոչ միայն մասնակցել են ղեկընդորդմի քննութիւնը, այլև փաստորեն վճռական ձայն են ստացել, վորովհետև ղեկընդորդմի մասերը, վոր այդ հիմնարկների վճռական ընդամադրութիւնն են հանդիպել, դուրս են ձգվել: Յերկրորդ, ըստ ելութիւն, կոմպրոմիսը կայանում է նրանում, վոր խորհրդային իշխանութիւնը հրաժարվեց անվճար կերպով կոոպերատիվի անդամ դառնա-



լու սկզբունքից (միակ հետևողական պրոլետարատիան սկզբունքը), ինչպես և տվյալ տեղի ամբողջ ազգաբնակչությանը մի կոոպերատիվում միացնելուց: Իբրև շեղումն այդ միակ սոցիալիստական սկզբունքից, վոր համապատասխանում է դասակարգերի վոչնչացման խնդրին, մնալու իրավունք տրվեց «բանվորական դասակարգային կոոպերատիվներին» (վորոնք այս դեպքում «դասակարգային» են կոչվում միայն այն պատճառով, վոր յենթարկվում են բուրժուազիայի դասակարգային շահերին): Վերջապես, Խորհրդային իշխանությունն առաջարկությունը՝ կոոպերատիվների վարչություններից բոլորովին դուրս հանել բուրժուազիային՝ նույնպես խիստ թուլացվեց, և վարչության անդամ դառնալու արգելքը տարածվեց միայն մասնավոր-կապիտալիստական բնույթ կրող առևտրական ու արդյունագործական ձեռնարկությունների տերերի վրա:

Յեթե պրոլետարիատը՝ գործելով Խորհրդային իշխանություն միջոցով՝ կարողանար կարգի ձգել հաշվառումն ու վերահսկողությունը համապետական մաշտաբով կամ գոնե այդպիսի վերահսկողության հիմունքները, այդ դեպքում նման կոմպրոմիսների կարիք չեր լինի: Խորհուրդների պարենավորման բաժինների միջոցով,

խորհուրդներին կից մատակարարման որդանների միջոցով մենք կմիասնացնելինք և կդարձնելինք ազգաբնակչությանը, պրոլետարոսներն ղեկավարվող մի կոոպերատիվ առանց բուրժուական կոոպերատիվների աջակցության, առանց զիջումների այն զուտ-բուրժուական սկզբունքին, վորը դրդում է բանվորական կոոպերատիվին բանվորական մնալ բուրժուականի կողքին, փոխանակ այդ բուրժուական կոոպերատիվն ամբողջովին իրեն յենթարկելու՝ յերկուսն իրար միացնելով, մեր ձեռքն առնելով ամբողջ վարչությունը, մեր ձեռքըն առնելով հարուստների սպառման հսկողությունը:

Բուրժուական կոոպերատիվների հետ այդ տեսակ համաձայնություն կնքելով՝ Խորհրդային իշխանությունը դարգացման տվյալ շերտի համար կոնկրետ կերպով վորոշեց իր տակախական խնդիրները և գործողությունների յուրատեսակ մեթոդները, այն ե՛լ ղեկավարելով բուրժուական տարրերին, ոգտագործելով նրանց, վորոշ մասնավոր զիջումներ անելով նրանց՝ մենք պայմաններ ենք ստեղծում այնպիսի առաջխաղացման համար, վորն ավելի դանդաղ կլինի, քան նախապես յենթադրում էլինք, բայց միաժամանակ կլինի ավելի ամուր, բազան և կոմունիկացիոն գիծն ավելի վստահելի ապահովված,



նվաճած դիրքերն ավելի ամրացրված: Խորհուրդները կարող են (յեւ պարտավոր են) այժմ չափել իրենց հաջողութունները սոցիալիստական շինարարութւան գործում, իմիջի ալոց, չափազանց պարզ, հասարակ, գործնական չափերով՝ կոոպերատիւների զարգացումը համայնքներից (կոմունաներից կամ գյուղերից, թաղերից և այլն) հասկապես քանիստ և վորքան ե մտտենում ամբողջ ազգաբնակչութունն ընդգրկելուն...

#### Հ ա տ վ ա ծ II.

Մենք դեռ համարյա չենք ձեռնարկել խոշոր, դժվար, բայց դրա փոխարեն նաև արդյունավոր աշխատանքին՝ կազմակերպել կոմունաների մըրցումն, հացի, հագուստի և այլն արտադրութւան պրոցեսում հաշվետւություն և հրապարակայնություն մտցնել, չոր, մեռած բյուրոկրատական հաշիւները դարձնել կենդանի որինակներ՝ ինչպես վանող, նույնպես և հրապուրող: Արտադրութւան կապիտալիստական յեղանակի որով առանձին որինակի, ասենք, վորևե արտադրողական արտելի նշանակութւունն անխուսափելիորէն ծայր աստիճան սահմանափակ եր, և միայն մանր-բուրժուական իլլուզիան կարող եր յերազել առաքինի հիմնարկների նմուշների ազդեցութւամբ կապիտալիզմն «ուղղելու» մասին:

Քաղաքական իշխանութւունը պրոլետարիատի ձեռքն անցնելուց հետո, սեփականազրկողների սեփականազրկումից հետո հարցն հիմնովին փոխվում ե և համաձայն նրան, ինչ բազմիցս ցույց են ավել ամենաականավոր սոցիալիստները՝ որինակի ույժն տուալին անգամ հնարավորություն կստանա իր մասսայական ազդեցութւունը գործելու: Որինակելի կոմունաները պիտի հանդիսանան և կհանդիսանան դաստիարակիչներ, ուսուցիչներ, զրզիչներ յետամնաց կոմունաների համար: Մամուլը գործիք պիտի հանդիսանա սոցիալիստական շինարարութւան՝ ամենայն մանրամասնութւամբ ծանոթացնելով որինակելի կոմունաների աջողութւուններին, ուսումնասիրելով այդ աջողութւունների պատճառները, նրանց անտեսութւան յեղանակները, մյուս կողմից «սև գրատախտակին» հանելով այն կոմունաները, վորոնք համառ կերպով պահում են «կապիտալիզմի» այսինքն՝ անիշխանութւան, դատարկապորտութւան, անկարգութւան, չարաշահութւան ավանդութւունները: Կապիտալիստական հասարակութւան մեջ ստատիստական «կառնի մարդկանց» կամ նեղ մասնագետների բացառիկ իրավասութւան յենթակա առարկայեր, մենք այն պիտի տանենք մասսաների մեջ, պիտի ժողովրդականացնենք այն, վորպեսզի աշ-



խատավորներն իրենք աստիճանաբար սովորեն հասկանալ ու տեսնել, թե ինչպես և վո՛րքան հարկավոր և աշխատել, ինչպես և վո՛րքան կարելի յե հանգստանալ,—վորպեսզի առանձին կոմունաների տնտեսության գործնական ընդհանուր արդյունքների համեմատությունն ընդհանուրի հետաքրքրության և ուսումնասիրության առարկա դառնա, վորպեսզի աչքի ընկնող կոմունաներն անմիջապես վարձատրվեն (մի վորոշ ժամանակաշրջան կրճատելով աշխատանքի ուրը, ավելացնելով աշխատավարձը, տալով նրանց մեծ քանակությամբ կուլտուրական կամ եստետիքական բարիքներ ու արժեքներ և այլն)...

(Գրված և 1918 թ. մարտ—ապրիլ ամիսներում: Տպագրված և „Известия ВЦИК“ № 85, от 29. апреля 1918 г. Собр. соч., т. XV, стр. 206—208 и 211—212).

ՄՈՍԿՎԱՅԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ ԼԻԱԶՈՐՆԵՐԻ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՐՏԱՍԱՆԱԾ ՃԱՌԸ

(26 նոյեմբերի 1918 թ.)

Ընկերներ, հանձին ձեզ յես վողջուհու՜մ եմ բանվորական այն կոոպերացիայի ներկայացուցիչներին, վորը ահագին դեր պիտի խաղա ամբողջ մատակարարման գործն ուղիղ գնելու խնդրում: Մենք շատ անգամ, մանավանդ վերջերս, ժողկոմխորհում առիթ ենք ունեցել կոոպերացիայի հետ կապված հարցերը քննելու: Ե՛լ առաջ, կապիտալի տիրապետության ուրով, կապիտալիստների դասակարգի դեմ մղած կռվի սկզբունքի վրա կառուցված կոոպերացիան խիստ կարևոր նշանակություն ուներ: Ճշմարիտ և, շատ կոոպերատիվների գործնական սշխատանքը հանգում եր մի պղտիկ խումբ անձանց կենցաղի բարելավմանը, և ղեկավարվելով զուտ առևտրական շահերով՝ կոոպերատորները հաճախ մոռանում եյին այն սոցիալիստական կազմի մասին,



վորը, ինչպես թվում էր նրանց, դեռ չստիպե-  
զանց հեռու և անհասանելի յեր: Թեև կոռուպ-  
ցիայի տարրերի շրջանում մանր-բուրժուական տար-  
րեր շատ կային, սակայն նրանց աշխատանքը  
մեծ արժեք ունեւր նրանով, վոր նրանք զար-  
գացնում էյին մասսաների ինքնագործունեյու-  
թյունը և այդ հիմքի վրա կառուցանում էյին  
խոշոր տնտեսական կազմակերպություններ, վո-  
րոնք կարող էյին լրացնել ու փոխարինել կա-  
պիտալիստական ապարատը: Այն տնտեսական  
քայքայման պահուն, վոր առաջ յեկավ իբրև  
հետևանք իմպերիալիստական պատերազմի, կա-  
տարելապես անհրաժեշտ է մատակարարման  
ապարատը լավ կարգի ձգել: Այդ պատճառով էլ  
ժողկոմխորհում մենք խիստ զգուշ էյինք մո-  
տենում կոռուպցիայի դերի հարցին՝ շատ լավ  
հասկանալով, թե վորքան կարևոր է նրա լավ  
կարգի ձգած ամբողջ ապարատը լիովին ոգտա-  
գործել: Սակայն կոռուպցիայի տարրերի շրջանում  
կային շատ համաձայնողական մանր-բուրժուա-  
կան տարրեր, վորոնք յերբեմն ոգտվում էյին  
կոռուպցիայի փութից նույնիսկ հակահեղափոխա-  
կաններին ու չեխոսւովակներին աջակցություն  
ցույց տալու համար: Բայց այդ տեղի ունեւր  
վո՛չ ամենուրեք, և, յեթե կոռուպցիայի տարրերն  
այդպիսի ցանկություն հայտնում էյին՝ մենք

հաճախ հրավիրում էյինք նրանց մեզ հետ միա-  
սին աշխատելու:

Վերջերս Խորհրդային Ռուսաստանի միջազ-  
գային դրությունն այնպես դարձավ, վոր շատ  
մանր բուրժուական խմբերի համար պարզվեց,  
թե բանվորա-գյուղացիական իշխանությունն ի՛նչ  
նշանակություն ունի: Յերբ մենք Բրեստի հաշ-  
տությունը կնքեցինք, մենշևիկներն ու սոց. հեղ.  
ասում էյին, թե մենք կործանում ենք Ռուսաս-  
տանը: Յերբ մենք խոսում էյինք համաշխար-  
հային հեղափոխության մասին, մեզ անվանում  
էյին կամ ուտոպիստներ կամ ուղղակի գերմա-  
նական իմպերիալիզմի գործակալներ: Սակայն  
վերջերս ամբողջ աշխարհում զարգացող անց-  
քերը շատ բան սովորեցրին մենշևիկներին և աջ  
սոց.-հեղափոխականներին: Մենշևիկների Կ. Կ.  
կոչը բոլոր աշխատավորներին, վոր վերջերս հրա-  
տարակվեց մեր մամուլում, խոսում է այն մա-  
սին, վոր գաղափարապես համաձայն չլինելով  
կոմունիստների հետ, նրանք անհրաժեշտ են հա-  
մարում պայքարել ընդդեմ համաշխարհային իմ-  
պերիալիզմի, վորի գլուխն են անցել անգլո-ա-  
մերիկական կապիտալիստները:

Հիրավի, ահագին կշիռ ունեցող անցքեր տե-  
ղի ունեցան: Բանվորական պատգամավորները  
խորհուրդներ են կազմված Ռուսիայում և



Ավստրո-վենգրիայում: Իսկ Գերմանիայում խորհուրդները սահմանադիր ժողովի դեմ են արտահայտվում և մի քանի շաբաթ հետո, կարող ե պատահել, կրնանի Հաագե-Շեյդեմանի կառավարութունը և փոխարինվի Լիբերալների կառավարութամբ: Միաժամանակ անգլո-ֆրանսական կապիտալիզմը լարում ե իր բոլոր ջանքերը, վորսպեսզի ՉախՉախի ուսսական հեղափոխութունը և զրանով կանգնեցնի համաշխարհային հեղափոխութունը: Այժմ բոլորի համար պարզվեց, վոր դաշնակիցների իմպերիալիզմի բաղձանքներն ե՛լ ավելի հեռու յեն գնում, քան գերմանականինը՝ այն պայմանները, վոր նրանք զրեւ են Գերմանիայի վերաբերմամբ, ավելի վատ են, քան Բրեստի հաշտութունը, և բացի զրանից, նրանք, ընդհանրապես, ուզում են խեղդել հեղափոխութունը և համաշխարհային ժանդարմների դեր խաղալ: Մենշևիկներն իրենց բանաձևով ցույց տվին, վոր իրենք հասկացել են, թե ո՛ւր են փչում անգլիական քամիները: Յեւ այժմ մենք նրանց յետ չպիտի մղենք, այլ, ընդհակառակը, պիտի ընդունենք նրանց, հնարավորութուն պիտի տանք մեզ հետ միասին աշխատելու:

Կոմունիստները դեռ այս տարվա ապրիլին ցույց տվին, վոր իրենք կոսպերատորների հետ

աշխատելուց չեն խուսափում: Կոմունիստների խնդիրը կայանում ե նրանում, վոր, հենվելով քաղաքային պրոլետարիատին, կարողանան ոգտագործել այն բոլորին, ում կարելի յե աշխատանքի կանչել, բոլորին, ով առաջ ընթանում եր սոցիալիստական լոզունգներով, բայց քաջություն չունեցավ նրանց համար կովելու մինչև հաղթութուն կամ պարտութուն: Մարքսն ասաց, թե պրոլետարիատը պիտի սեփականազրկի կապիտալիստներին, իսկ մանր-բուրժուական խմբերին պիտի կարողանա ոգտագործել: Իսկ մենք ասում եյինք, թե կապիտալիստներից պիտի խել ամեն ինչ, իսկ կուլակներին միայն հուպտալ և հացի մենաշնորհի վերահսկողության տակ գնել: Մենք համաձայնության պիտի գանք միջակ գյուղացիության հետ, մեր վերահսկողության տակ պիտի առնենք նրան, փաստորին այնուամենայնիվ իրագործելով սոցիալիզմի իդեյալները

Դեռ ապրիլին ժողկոմխորը համաձայնության յեկավ կոսպերատորների հետ: Դա ժողկոմխորի միակ նիստն եր, ուր ներկա եյին վոչ կոմունիստները, քաղաքացիական կոսպերացիայի ներկայացուցիչները: Այնտեղ վորոշումներն ընդունում եյին վոչ թե մեծամասնութուն կազմող կոմունիստները, այլ փոքրամաս-



նությունը՝ կոոպերատիւնները: Ժողովուրդը զիջումներ է գնաց: Մենք ասացինք, վոր մեր նպատակից չենք հրաժարվի: Ձեզ հետ, կամ թե առանց ձեզ՝ մենք կգնանք դեպի նա: Բայց, յետեւ ուզում եք մեզ հետ դալ, մենք ձեզ վորոշ զիջումներ կանենք, վորպեսզի հնարավորութիւն ունենանք ոգտագործել ձեր փորձն ու գիտութիւնը, ձեր տեխնիքական ապարատը: Դուք բոլորդ գիտեք մատակարարման մասին վերջերս հրատարակված դեկրետը, ուր կարևոր դեր հատկացվում է կոոպերատիւններին: Մինչև այժմ մեզ մոտ շատ բան սխալ եր կատարվում: Կոոպերատիւնները փակվում եյին, ազգայնացվում, մինչդեռ խորհրդային խանութները չեյին կարողանում բաշխումը գլուխ բերել, բավականաչափ լավ կոնսոնավորված չեյին: Համաձայն այդ դեկրետի կոոպերատիւնները պիտի վերականգնվեն, նրանց խանութներն իրենց պիտի վերագարծվեն: Զիշտ ե, հաճախ կոոպերատիւնները փակում եյին հակահեղափոխական գործողութիւններին համար, բայց այդ դեպքում մենք պիտի կարողանանք նրանց մեր վերահսկողութիւնը յետեւադրել, առանց քանդելու նրանց ապարատը: Բոլորի համար պարզ ե, վոր պրոլետարիատի խնդիրն այժմ—պրոդուկտների մատակարարման և բաշխման գործը լավ կարգի ձգելն ե: Հենց

այդ պահանջով ել, քանի վոր կա այնպիսի մի ապարատ, վորն այդ գործում փորձառութիւն ունի և, վոր գլխավորն ե, հիմնված ե մասսաների ինքնագործունեյութիւն վրա, մենք պիտի ծառայեցնենք այն մեր առաջ դրված խնդիրներին իրականացմանը: Հատկապէս կարևոր ե այդ կազմակերպութիւններն ստեղծած մասսաների ինքնագործունեյութիւնն ոգտագործել: Անհրաժեշտ ե, վոր մատակարարման աշխատանքի մեջ քաշվեն ամենից ներքևի խավերը, սա պիտի լինի բանվորական կոոպերացիայի գլխավոր խնդիրը: Աշխատավոր մասսաները պիտի զգան, վոր խորհրդային իշխանութիւնը—իրենց սեփական իշխանութիւնն ե: Նրանք իրենք պիտի մասնակցեն մատակարարման ու բաշխման գործին: Այս գործը բարդ չե, այն կարող ե հասկանալ ամեն մեկը, նույնիսկ նա, ով գլուխ չի կոտրել զրքերի վրա: Իսկ Ռուսաստանում ազգաբնակչութիւնն ահագին մասը դեռ խավար ե ու տգետ, վորովհետև արել են ամեն ինչ, վորպեսզի աշխատավոր մասսաները զրկեն կրթութիւնից: Բայց այդ մասսաներում շատ կենդանի ույժեր կան, վորոնք կկարողանան ահագին ընդունակութիւններ հայանարբերել: Բանվորական կոոպերացիային ե՛ր գրավել այդ ուժերը, հնարավորութիւն տալ նրանց անմիջական կերպով աշխատելու:



տել պրոդուկտները մատակարարման ու բաշխման գործում:

Յե՛վ յես չեմ կասկածում, վոր մասսաների ինքնագործունեյությունը կենտրոնական բանվորական կոոպերատիվում կնպաստի բաշխման գործի իրապես կարգի ձգելուն, և, վոր Մոսկվայում հիմնվում է միասնական սպառողական կոմունա:

(„Рабочий Мир“, 1918 г. № 19).

«ՄԱՆՐ-ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԱՍՎԱԾ ՃԱՌԻՑ, ԱՐՏԱՍԱՆՎԱԾ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԺՈՂՈՎՈՒՄ

(27 նոյեմբերի 1918 թ.)

Մենք պետական իշխանությունը վերապահում ենք մեզ, միայն մեզ: Նրանց վերաբերմամբ, վորոնք չեզոք չիրք են բռնում մեր հանդեպ, մենք դատում ենք, իբրև դասակարգ, վոր իր ձեռքումն ունի քաղաքական իշխանությունը, իր զենքի ամբողջ սրությունն ուղղում է կալվածատերերի ու կապիտալիստների դեմ և ասում է մանրբուրժուական դեմոկրատիային՝ յեթե ձեզ հաճելի յե չեխոսյովակները ու կրասնովցիները կողմն անցնել... մենք ցույց տվինք, թե ինչպես ենք կռվում, կը կռվենք և սրանից հետո: Յեթե ձեզ հաճելի յե, մենք վոտ ենք դնում ձեզ հետ համաձայնության գալու ճամբան, իմանալով, վոր այլ կերպ, քան մի ամբողջ շարք համաձայնումներով, վորոնք մենք պիտի փորձենք, ստուգենք, համեմատենք, — յերկիրը սոցիալիզմին



անցնել չի կարող: Մենք այդ ուղին վտաք զրինք հենց սկզբից, որինակ, նրանով, վոր քվեարկեցինք հողի սոցիալիզացիայի որենքը և այն աստիճանաբար դարձրինք մի միջոց, վորի շնորհիվ հաջողվեց գյուղական չքավորներին խմբել մեր շուրջը և դարձնել կուլակների դեմ: Միայն գյուղերում պրոլետարական շարժման հաղթության չափով մենք սխտեմատիկաբար կանցնենք հասարակական հողատիրության և հողի հասարակական մշակման: Այս խնդիրը չի կարելի իրականացնել այլ կերպ, քան հենվելով գյուղի զուտ պրոլետարական շարժմանը, և այս տեսակետից դեռ անչափ շատ բան կա անելու: Կասկած չկա, վոր այս գործում միայն գործնական փորձը, միայն իրականությունը ցույց կտա, թե ինչ կերպ պիտի վարվել:

(Собр. соч., т. XV, стр. 577—578).

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՌՊԵՐԱՑԻԱՅԻ ՈՒ ՀԱՄԱԳՈՒՄ  
ՄԱՐՈՒՄ ԱՐՏԱՍԱՆԱԾ ՃԱՌԸ

(7 դեկտեմբերի 1918 թ.)

Ընկերներ, ինչպես անտեսական, այնպես ել քաղաքական բնագավառում բանվորական կոպերացիայի առջև, այժմ չափազանց կարևոր մի խնդիր ե զրված: Թե այս և թե այն խնդիրները անտեսական ու քաղաքական կովի իմաստով այժմ պարզ ու անքակտելի կերպով կապված են իրար հետ: Ինչ վերաբերում ե կոպերացիայի ամենամոտ խնդիրներին՝ ուզում եմ ընդգծել «կոպերացիայի հետ համաձայնություն» կնքելու նշանակութունը: Այն համաձայնությունը, վորի մասին մոմուլում վերջերս այդքան շատ եր խոսվում, եյապես տարբեր ե բուրժուազիայի հետ համաձայնություն կնքելու հասկացողությունից, վորը դավաճանություն ե հանդիսանում: Այն համաձայնությունը վորի մասին խոսում ենք այժմ, կատարելապես այլ տեսակի համաձայնություն ե: Հսկայական տար-



բերութիւնն կա խորհրդային կառավարութեան՝  
Գերմանիայի հետ համաձայնութիւնն կնքելու,  
վոր մի՛ տեսակի հետեանքներ տվեց, և այն  
համաձայնութեան միջև, վոր յերկրի համար,  
ամենափաստակար ու ամենակորստաբերն է, այն  
է բուրժուազիայի հետ բանվոր դասակարգի  
համաձայնութիւնը: Խոսքս համաձայնութեան  
գլխակի տակ ինչպէս դասակարգային ապքա-  
րի, նույնպէս և սոցիալիզմի հիմնական սկզբունք-  
ներին կատարելապէս դավաճանելու մասին է:  
Այն սոցիալիստների համար, վորոնք իրենց առ-  
ջև վորոշ խնդիր են դնում՝ պայքարել բուրժուա-  
զիայի դեմ, պայքարել կապիտալի դեմ, այս  
տարբերութիւնը ըստինքյան հասկանալի յէ:

Մենք բոլորս շատ լավ գիտենք, վոր մեր  
դասակարգային կովի համար միայն մի լուծումն  
կարող է լինել՝ կամ կապիտալի իշխանութեան  
ճանաչումը—կամ բանվոր դասակարգի իշխանու-  
թեան ճանաչումը: Մենք գիտենք, վոր մանր-  
բուրժուական կուսակցութիւնները բոլոր փոր-  
ձերն յերկրում ստեղծել և կիրառել իրենց քա-  
ղաքականութիւնն առաջուց լիակատար անհաջո-  
ղութեան են դատապարտված: Մենք պարզ տե-  
սանք վոր այս ու այն մանր-բուրժուական կուսակ-  
ցութիւնները կամ խմբերը, իրենց մի շարք փոր-  
ձերով ձգտում եյին իրենց քաղաքականութիւնն

անցկացնել, և մենք տեսնում ենք, վոր այդ միջա-  
սահման փորձերն անհաջողութիւնն պիտի կրեն:  
Բոլորովին վորոշակի պայմանների զորութեամբ  
միայն յերկու կենտրոնական ուժեր, վորոնք բոլո-  
րովին հակադիր բեռներում են գտնվում, կա-  
րող են Ռուսաստանում իրենց իշխանութիւնը  
իրականացնել, կարող են նրա բախտն այս կողմ  
կամ այն կողմ շուռ տալ: Նույնիսկ ավելին կա-  
սեմ՝ ամբողջ աշխարհն ստեղծվում ու կառավար-  
վում է այդ կենտրոնական ուժերից մեկով կամ  
մյուսով: Ռուսաստանի վերաբերմամբ վորոշակի  
կարելի յէ ասել վոր այդ ուժերից միայն մեկը՝  
կյանքի այս կամ այն տնտեսական պայմանների  
զորութեամբ՝ կարող է շարժման գլուխ անցնել:  
Մնացած միջասահման ուժերը—նրանք շատ են  
բայց յերկրի կյանքում չեն կարող վճռական դեր  
խաղալ:

Ներկա մոմենտում սովետական իշխանու-  
թեան առջև կոոպերացիան սովետական իշխա-  
նութեան հետ համաձայնեցնելու հարցը պիտի կանգ  
նի: Ապրիլին մենք նահանջեցինք մեր նախա-  
նշած նպատակներից ու զիջումի գլխեցինք: Ի-  
հարկե, դասակարգային կոոպերացիան չի կա-  
րող գոյութիւնն ունենալ մի յերկրում, ուր վո-  
չնչացվում են բոլոր դասակարգերը, բայց կրկ-  
նում եմ, վոր ժամանակի պայմանները պահան-



Չուժ եյին վորոշ հասպողումն, և մենք կատարեցինք այն մի քանի ամսով ձգձգման ձևով: Բայց և այնպես, մենք բոլորս գիտենք, վոր այն դիրքից, վորի վրա մեր յերկրում այժմ կանգնած է իշխանութունը, նա յերբեք ցած չի գա: Մենք պիտի անեյինք այդ գիշումը, վորովհետև այն ժամանակ մենք մեն մենակ եյինք ամբողջ աշխարհում, և մեր գիշումը մեր աշխատանքի դժվարությամբ է բացատրվում: Պրոլետարիատի իր վրա վերցրած տնտեսական խնդիրների գորությամբ մենք պիտի հաշտեցնեյինք ու պահպանեյինք մանր-բուրժուական խավերի վորոշ սովորությունները: Այստեղ գլխավոր խոսքը նրա մասին է, վոր ինչ ճանապարհով ել լինի՝ հարկավոր է հասնել այն բանին, վոր աշխատավորներին ու շահագործվողներին ամբողջ մասսայի գործունեյությունն ուղղված լինի ու համաձայնեցրած: Մենք շարունակ պիտի հիշենք, թե պրոլետարիատն ինչ է պահանջում մեզնից: Ժողովրդական իշխանությունը հաշվի պիտի առնի այն, վոր մանր-բուրժուազիայի զանազան շերտերը ավելի ու ավելի ուժեղ կերպով պիտի միանան տիրող բանվոր դասակարգի հետ, յերբ կյանքը վերջի վերջո ցույց կտա, վոր ընտրություն չկա, վոր յերկրի պետական կյանքի հարցը միջին ճանապարհով վճռելու բոլոր հույսերը

խորտակված են վերջնականապես: Բոլոր այն գեղեցիկ լողունները, ինչպես՝ ժողովրդական ազատություն, սահմանադիր ժողով և այլն, վորոնցով ծածկվում եյին բոլոր կիսամիջոցները, խկույն և յեթ ցրիվ յեկան, յերբ խոսեց իսկական ժողովրդական ազատությունը: Դուք ինքներդ տեսնում եք, թե ինչ տեղի ունեցավ, յերբ այդ բոլոր լողունները, կիսամիջոցային լողուններ ջարդ ու փշուր յեղան: Հիմա, մենք տեսնում ենք, վոր այդ տեղի ունի վո՛չ միայն Ռուսաստանում, այլև համաշխարհային մաշտաբով:

Յես ուզում եմ սահմանել տարբերությունը այդ համաձայնության, վոր այնպիսի սոսկալի ատելությունն առաջ բերեց ամբողջ բանվոր դասակարգի մեջ, և այն համաձայնության միջև, վոր այժմ մենք ենք պահանջում՝ համաձայնություն ամբողջ մանր գյուղացիության հետ, ամբողջ մանր բուրժուազիայի հետ: Բրեստի հաշտության ժամանակ, յերբ մենք ընդունում եյինք այդ հաշտության ծանր պայմանները, մեզ ասում եյին, թե համաշխարհային հեղափոխության հույս չկա և չի յել կարող լինել: Մենք բոլորովին մենակ եյինք ամբողջ աշխարհում: Մենք գիտենք, վոր շատ կուսակցություններ այն ժամանակ՝ շնորհիվ Բրեստի հաշտության՝ հեռուցան մեզանից ու բուրժուազիայի



կողմն անցան: Այն մոմենտին մեզ վիճակվեց մի շարք ամենասոսկալի ապրումներ կրել: Դրանից մի քանի ամիս անց կյանքը ցույց տվեց, վոր ընտրութիւնն չկա ու չի կարող լինել, վոր միջին ճանապարհ չկա:

Յերբ սկսվեց գերմանական հեղափոխութիւնը, բոլորի համար պարզ դարձավ, վոր հեղափոխութիւնն անցնում է ամբողջ աշխարհով, վոր Անգլիան, Ֆրանսիան ու Ամերիկան ել հենց դեպի նույն ճանապարհով են գնում՝ մեր ճանապարհով: Յերբ մեր մանր բուրժուական դեմոկրատական խավերը գնում էին իրենց պաշտպանների յետեից, նրանք չէին հասկանում, թե ուր են տանում իրենց. նրանք չէին հասկանում, վոր իրենց տանում են կապիտալիզմի ճանապարհով: Այժմ գերմանական հեղափոխութեան որինակը ցույց է տալիս մեզ, վոր դեմոկրատիայի այդ ներկայացուցիչները, նրա այդ պաշտպանները, պարոնայք վիլսոններն ու ընկերութիւնը հաղթված ժողովրդի վիզն են փաթաթում իրենց դաշնագրերը, վոր շատ ավելի վատ են, քան մեր վզին փաթաթած Բրեստի դաշնագիրը: Մենք պարզ տեսնում ենք, վոր Արևմուտքում ծայր ավող անցքերի գորութեամբ, փոխված սխառացիայի ույժով, միջազգային դեմագոգիայի վերջը հասել է: Այժմ, ազգութիւններ

րից ամեն մեկի դեմքը վորոշակի պարզվեց: Այժմ, դիմակները պատուված են, բոլոր պատրանքները խորատակված են այն ծանր բաբանով, վորպիսին համաշխարհային պատմութեան բաբանն է:

Բնական է, վոր յերբ այդպիսի աստանվող տարրեր կան, վորոնք միշտ լինում են անցողական շրջանում, խորհրդային իշխանութիւնը պիտի ոգտագործի իր ամբողջ նշանակութիւնը և իր հզղեցութիւնը, վորպեսզի կյանքի մեջ իրականացնի այն խնդիրները, վոր մենք այժմ դնում ենք, խնդիրներ, վորոնցով մենք ուժ ենք տալիս դեռ ապրիլին սկսած մեր քաղաքակաւութեան: Այն պահուն վորոշ ժամանակով հետաձգեցինք մեր նախանշած նպատակները, այն ժամանակ գիտակցորեն ու բացահայտ մի շարք զիջումներ արինք:

Այստեղ հարց բարձրացավ, թե ճանապարհի հատկապես վոր կետի վրա յենք գտնվում մենք: Այժմ ամբողջ Յեվրոպան վորոշակի տեսնում է, վոր մեր հեղափոխութեան վրա այլևս վոչ մի վորձ չի կատարվում, և նրանց՝ քաղաքակիրթ ժողովուրդների վերաբերմունքը դեպի մեզ փոխվել է: Նրանք հասկացան, վոր այդ իմաստով մենք նոր ահագին գործ ենք շինում, վոր այդ գործում առանձնապես զժվարութիւնն ենք կրում, վորովհետև համարյա ամբողջ ժամանակ մենք



կանգնած ելինք բոլորովին մեն մենակ ու կատարելապես մոռացված ամբողջ միջազգային պրոլետարիատի կողմից: Այդ իմաստով մեզ բաժին ընկան շատ լուրջ սխալներ, վոր մենք ամենևին չենք ել թագնում: Իհարկե, մենք պիտի ձգտեյինք ամբողջ ազգաբնակչությունը միացնել, վոչ մի յերկպառակություն առաջ չբերել: Յեթե այդ բանը մինչև որս չենք արել՝ մենք մի որ պիտի սկսենք այդ անել: Մենք արդեն շատ կազմակերպությունների հետ միացումն առաջ բերել ենք: Այժմ միացումն պիտի առաջ բերվի բանվորական կոոպերացիայի ու խորհրդրդային կազմակերպությունների միջև: Այս տարվա\*) ապրիլ ամսից մենք ձեռնարկեցինք կազմակերպություն, վորպեսզի սկսենք գործել վորձի ձանադարհով, վորպեսզի կիրառենք կյանքում հասարակական քաղաքական ուժերի այն կուտակումը, վոր ունենք մենք: Մենք ձեռնարկեցինք մատակարարման ու ամբողջ ազգաբնակչության մեջ առարկաների բաշխման կազմակերպման:

Վերստուգելով մեր ամեն մի քայլը՝ ձեռնարկեցինք այդ կազմակերպության, վոր անտեսապես յետամնաց մեր յերկրում առանձնապես

\*) Այսինքն՝ 1918 թ. (թարգմ.)

դժվար եր անցկացնել: Կոոպերացիայի հետ համաձայնություն գալ սկսեցինք ապրիլ ամսից, մատակարարման ու բաշխման լիակատար միացման ու կազմակերպման մասին հրատարակված դեկրետն ել կանգնած ե հենց նույն հիմքի վրա: Մենք գիտենք, վոր այն անհամաձայնությունները, վորոնց իր ճառում մատնացույց արեց նախորդ հոետորը, յերբ նա մատնանշում եր Պետերբուրգը, գոյություն ունեն համարյա ամեն տեղ: Մենք գիտենք, վոր այդ անհամաձայնությունները կատարելապես անխուսափելի յեն, վորովհետև վրա յե համում այն մոմենտը, յերբ հանդիպում ու ձուլվում են յերկու բոլորովին տարբեր ապարատներ, բայց և այնպես մենք այն ել գիտենք, վոր դա անխուսափելի յե, և դրա միջից մենք պիտի անցնենք: Ճիշտ այդպես դուք ել պիտի հասկանաք, վոր բանվորական կոոպերացիայի կողմից այդքան յերկար հանդիպած գիմադրությունը վերջ ի վերջ՝ ի վերաբերմամբ խորհրդային իշխանություն մեջ անվստահություն հարուցեց, և այդ անվստահությունը կատարելապես որինավոր եր:

Դուք ասում եք՝ մենք անկախություն ենք ուզում: Բոլորովին բնական ե, վոր ո՛վ այդպիսի լոգունդ ե առաջ քաշում՝ կարող ե անվստահություն հարուցանել: Յեթե զանգատվում ես



անհամաձայնություններէից և ուզում նրանից ազատվել, այդ դեպքում ամենից առաջ հարկավոր է մնաս ըարև ասել անկախութեան գաղափարին, վորովհետև ամեն մեկը, ով կանգնած է այդ հայեցակետին, արդեն հակառակորդ է հանդիսանում խորհրդային իշխանութեան այն ժամանակ, յերբ ամեն ինչ ավելի ու ավելի սերտ միացման է ձգտում: Հենց վոր տեղի կունենա բանվորական կոոպերացիայի պարզ, ազնիվ ու բացահայտ միացումը խորհրդային իշխանութեան հետ՝ այդ անհամաձայնությունները կսկսեն անհետանալ: Յես շատ լավ գիտեմ, վոր յերբ յերկու խումբ միանում են, առաջին պահին աշխատանքի մեջ վորոշ անհարթություններ են տեղի ունենում, բայց և այնպես ժամանակի ընթացքում, յերբ կոչված խումբը կոչողի վստահությունը ձեռք բերի, բոլոր այդ անհամաձայնությունները աստիճանաբար կանհետանան: Մինչդեռ, յեթե այդ յերկու խումբը բաժանված են մնում, միջվարչական մշտական անհամաձայնությունները հնարավոր են: Մի բան չեմ հասկոնում՝ ի՞նչ գործ ունի այստեղ «անկախությունը»: Ձե վոր մենք կանգնած ենք այն տեսակետին, վոր ամբողջ հասարակությունը թե՛ մատակարարման իմաստով, թե՛ բաշխման իմաստով իրենցից մի ընդհանուր կոոպերատիվ պիտի

ներկայացնի: Մենք բոլորս կանգնած ենք այն հայացակետին, վոր կոոպերացիան սոցիալիստական կուսակցութեան նվաճումներից մեկն է: Դրանում է կայանում սոցիալիստական նվաճումների մեծ դժվարությունը: Դրանում է կայանում հաղթութեան դժվարությունն ու խնդիրը: Կապիտալիզմը դիտմամբ բաժանում էր իրարից ազգաբնակչութեան խավերը: Այդ բաժանումը պիտի անհետանա վերջնականապես ու անդարձ, և ամբողջ հասարակությունը աշխատավորներին միասնական կոոպերատիվ պիտի դառնա: Առանձին խմբերի և վոչ մի անկախութեան մասին խոսք չի կարող լինել ու չպիտի լինի:

Այդպիսի կոպերատիվի մասին եյի յես նոր խոսում՝ իբրև սոցիալիզմի հաղթութեան մի խնդրի: Ահա թե ինչու յենք ասում, թե մեր մեջ մասնավոր հարցերի վերաբերմամբ ինչպիսի տարաձայնություններ ել վոր լինեն՝ կապիտալիզմի հետ մենք վոչ մի համաձայնություն չենք կապի, մեր կուլի սկզբունքից նահանջող վոչ մի քայլ չենք անի: Այն համաձայնությունը, վոր մենք պատրաստվում ենք կապել հասարակական դասակարգերի միջախավերի հետ—դա համաձայնություն է վո՛չ բւրժուազիայի և վո՛չ կապիտալի հետ, այլ պրոլետարատիայի ու դեմոկրատիայի առանձին ղեկավարների հետ: Այդ համաձայնությունից վա-



խենարու կարիք չկա, վորովհետև այդ խավերի միջև յեղած ամբողջ յերկպառակությունը հեղափոխության կրակի մեջ կատարելապես ու անհետ կվերանա: Այժմ հարկավոր է մի բան, վոր միայն միանամուռ ձգտումն լինի ընդանարու բաց սրտով դեպի այդ միասնական համաշխարհային կոոպերատիվը: Այն, ինչ արել է խորհրդային իշխանությունը, և այս, ի՛նչ մինչ այժմ արել են կոոպերացիաները — պիտի միայվի: Այս է խորհրդային իշխանության վերջին դեկրետի բովանդակությունը: Այսպես են մոտեցել խնդրին շատ տեղերում խորհրդային իշխանության ներկայացուցիչները, վորոնք չեն սպասել մեր դեկրետներին: Կոոպերացիայի կատարած խոշոր գործն անսլոյսան պիտի միացվի այն անագին գործի հետ, վոր կատարել է Խորհրդային Իշխանությունը: Ազգաբնակչության այն բոլոր խավերը, վոր պայքարում են իրենց ազատության համար, պիտի միացվեն մի ամուր կազմակերպության մեջ: Մենք գիտենք, վոր շատ սխալներ ենք արել, մանավանդ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, առաջին ամիսներում: Բայց այժմ, ժամանակի ընթացքում, մենք պիտի ձգտենք, վոր ազգաբնակչության մեջ լիակատար միություն ու համաձայնություն լինի: Իսկ դրա համար հարկավոր է, վոր ամեն ինչ յենթարկված լինի Խորհրդային Իշխանության և՛

ինչպես առանձին խավերի, այնպես ել բանվորական կոոպերացիայի բոլոր պատրանքները ինչ վոր «անկախության» մասին վերջ պիտի գտնեն: «Անկախության» այդ հույսը կարող է գոյություն ունենալ միայն այնտեղ, ուր դեռ ևս կարող է լինել վորևէ դարձի հույս դեպի նախկինը:

Առաջ արևմտյան ժողովուրդները մեզ ու մեր ամբողջ հեղափոխական շարժման վրա նայում էյին, իբրև մի կուրյողի: Նրանք ասում էյին. «Թող ժողովուրդը մի քիչ շուլուխ անի, իսկ մենք կնայենք, թե ինչ է դուրս գալու այդ բոլորից... Տարրերինակ ուս ժողովուրդ!»:

Ահա այդ «տարրերինակ ուս ժողովուրդը» ցույց տվեց ամբողջ աշխարհին, թե ինչ է նշանակում իր «շուլուխը»:

Այժմ, յերբ մոտեցել է գերմանական հեղափոխության սկիզբը, այլ յերկրյա հյուպատոսներից մեկն ասում էր Զինովյեին. «Այո՛, դեռ անհայտ է, թե ով ավելի ոգտագործեց Բրեստի հաշտությունը՝ դո՛ւք, թե՛ մենք»:

Նա այդ բանն ասում էր, վորովհետև բոլորն ել հենց նույնն են ասում: Բոլորը տեսան, վոր դա միայն սկիզբն է համաշխարհային մեծ հեղափոխության: Մեծ հեղափոխության այդ սկիզբը դրել ենք մենք՝ յետամնաց «տարրերինակ» ուս ժողովուրդը... Պիտի ասել, վոր պատմու-



Թյունը տարրինակ ճանապարհներով ե գնում.  
յետամնաց յերկրին վիճակվեց մեծ համաշխար-  
հային շարժման գլուխ անյնելու պատիվը: Այդ  
շարժումը տեսնում ու հասկանում ե ամբողջ  
աշխարհի բուրժուազիան: Այդ հրդեհով բռնկ-  
ված են՝ Գերմանիան, Բելգիան, Շվեյցարիան,  
Հոլանդիան...

Որ ավուր ավելի ու ավելի ուժեղ աճում—  
ընդարձակվում ե այդ շարժումը, ու հետն ել աճում,  
ամրանում խորհրդային հեղափոխական կառավա-  
րությունը: Այդ պատճառով ել այժմ բուրժուա-  
զիան կանգնել ե դեպի հարցերն ունեցած իր  
վերաբերմունքի բոլորովին այլ ճանապարհի վրա:  
Այդ պատճառով ել վոչ մի խոսք չի կարող լի-  
նել առանձին կուսակցությունների անկախու-  
թյան մասին, յերբ համաշխարհային կացինը բարձ-  
րացած ե կապիտալիզմի գլխին: Ամենից խոշոր  
որինակը մեզ տալիս ե Ամերիկան: Ամերիկան  
ամենազեմոկրատիկ յերկրներից մեկն ե, ահագին  
դեմոկրատիկ սոցիալական մի հանրապետություն:  
Ո՞ւր, յեթե վոչ այնտեղ, այդ յերկրում, վոր  
ունի բոլոր ընտրական իրավունքները, ազատ պե-  
տության բոլոր իրավունքները, ուղիղ ձեով պի-  
տի լուծվեն իրավական բոլոր հարցերը...

Վիրտնները մեր գործը վախճանին կհասցնե-  
յին վայրկենապես: Այդ պարոնները—ազատ

միլիարդատերեր, ամենահումանիստ մարդիկն  
ամբողջ աշխարհում—կը կարողանային իրենց  
բարեկամներին վարժեցնել, վոր մոռանան վոչ  
միայն խոսել, այլ նույն իսկ մտածել վորևե  
«անկախության» մասին: Նրանք ուղղակի ու  
վորոշակի մի յերկրնորանք կդնեյին ձեր առաջ՝  
դուք կամ կապիտալիստական կարգերի կողմն  
եք, կամ՝ խորհուրդների: Նրանք կասեյին.  
«Դուք այդպես պիտի վարվեք, վորովհետև ձեզ  
այդ բանը մենք ենք ասում»...

Այդ պատճառով ել մենք բացարձակորեն  
վոչ մի հույս չենք կարող ունենալ, թե կարող  
ե թեկուզ վորևե անկախություն պահպանվել:  
Այդ բանը չի լինի, ու անհույս ե դրա մասին  
յերագել: Յերբ, մի կողմից, վորոշ կերպով  
գրվեց իր սեփականության պահպանության  
հարցը, իսկ մյուս կողմից՝ պրոլետարիատն իր  
ուղին գտավ—այլևս միջին ճանապարհ չի կա-  
րող լինել: Կյանքն իր ճյուղերը պիտի հյուսի  
կամ ամուր կերպով կապիտալի հետ, կամ ավե-  
լի ամուր խորհրդային իշխանության հետ: Բո-  
լորի համար ել կատարելապես պարզ ե, վոր սո-  
ցիալիզմն իր իրականացման դարաշրջանն ե  
մտել: Բոլորի համար ել պարզ ե, վոր պաշտ-  
պանել կամ պահել մանր-բուրժուական գոյա-  
վիճակը կատարելապես անկարելի յե, յեթե



անգամ ամբողջ ազգաբնակչութիւնն ընտրական իրավունքներ տրվին: Գուցե պարոնայք Վիլսոնները անվում ել են այդպիսի հույսերով, ավելի ճիշտ, աշխատում են իրենց սեփական նպատակները գեղազարդել նման պատրանքներ իրականացնելով, սակայն պիտի ասեմ, վոր այդ հեքիսթներին հավատացող մարդիկ այժմ շատ քիչ կգտնեք. յեթե այդ տեսակ մարդիկ մնացած ել լինեն, նրանք պատմական հազվագյուտ յերեվույթներ են, կուրյոզ են, վորոնց տեղը թանգարանումն է:

Պիտի ասեմ, թե այն տարածայնությունները, վորը սկսվեցին մեզ մտա դեռ հենց սկզբից կոպերացիայի «անկախության» պանպանման վերաբերմամբ—գրանք վորձեր են միայն, վոր պիտի վերջանան առանց դրական լուծումն ստանալու վորև ե հույսի: Այդ պայքարը լուրջ չե: Մոռանում են, վոր այն բանաձևերը, վոր ամեն որ ընդունում ե աշխարհիս ամենատուժեղ գասակարգը, և վորոնց, անշուշտ, միաձայն կընդունի նաև մեր համագումարը, վորջունում են միմիայն պրոլետարիատի զիկտատուերան ամբողջ աշխարհում: Ընդունելով այդ բանաձևը, մեր համագումարը վոտք գրեց այնպիսի մի ճանապարհի, վորից դեպի այն «անկախությունը», վորի մասին այսօր այստեղ խոսվում ե, վոչ մի կա-

մուրջ այլևս չի մնացել ու մնալ չի կարող: Դուք գիտեք, թե ինչպես կարլ Լիբկնեխտը վոչ միայն վորոչ դիրք բռնեց դեպի գյուղացիությունը, մանր-բուրժուականը, այլև ընդդեմ կանգնեց կոպերացիային: Դուք գիտեք, վոր դրա համար Շեյդեմանն ու ընկերությունը նրան Փանտազիոր ու Փանատիկոս են համարում, և այնուախեսայնիվ դուք ինքներդ նրան վողջույն ուղղեցիք, ճիշտ այնպես, ինչպես վողջույն ուղղեցիք նաև Մակլինին: Համաշխարհային մեծ առաջնորդների հետ ձեր համերաշխությունն արտահայտելով դուք ձեր բոլոր նավերն այրեցիք: Դուք պիտի պինդ կանգնեք ձեր դիրքերի վրա, վորովհետև տվյալ մոմենտում դուք պաշտպանում եք վոչ միայն ձեզ, վոչ միայն ձեր իրավունքները, այլև Լիբկնեխտի ու Մակլինի իրավունքները: Շատ անգամ եմ լսել, թե ինչպես ոուս մենշևիկները դատապարտել են համաձայնությունը, ինչպես անխնա հարվածել են նրանց, վորոնք բանակցությունների մեջ եյին մտել կայգերի լակեյների հետ: Յեվ միայն ոուս մենշևիկները, չեն, վոր մեղավոր են դրանում: Ամբողջ աշխարհն եր մատնացույց անում մեզ, դաժանորեն մեր յերեսին նետելով—«համաձայնողներ» բառը: Իսկ այժմ, յերբ սկսվել ե համաշխարհային հեղափոխությունը, յերբ նրանք հար-



կադրված են խոսել Հաագեյի ու Կառլսկոու հետ, այժմ մենք՝ բնորոշելով մեր դրուժյունը՝ իրավունք ունենք ասելու ուսս գեղեցիկ առածի բառերով. «մի քիչ հեռու կանգնենք ու մտիկ տանք, թե ինչպես լավ ենք նստած մենք»...:

Մեր թերությունները մենք գիտենք, և գրանք մասնացույց անելը հեշտ է: Բայց յերբ կողքից ես նայում՝ այդ ամենն այնպես չի յերեվում, ինչպես իրոք գոյություն ունի: Դուք գիտեք, վոր կա մի մոմենտ, յերբ մարդ չկար, վոր մեր վարքն ու մեր քաղաքականությունը չքննադատեր, իսկ այժմ ամբողջ կուսակցություններ գիտենք, վորոնք մեզ մոտ են յեկել, վորոնք ուղում են մեզ հետ աշխատել: Հեղափոխական շարժման համաշխարհային ողակն այժմ այն կերպ շուռ յեկավ, վոր մեզ համար բացարձակապես վոչ մի համաձայնություն սարսափելի չէ:

Կարծում եմ, վոր մեր համագումարն ել ստեղծված դրությունից իր ուղիղ յելքը կգտնի: Իսկ այդ յելքը վոր միակն է՝ կոոպերացիայի միացումն Խորհրդային իշխանության հետ: Դուք գիտեք, վոր Անգլիան, Ֆրանսիան, Ամերիկան, Սպանիան նայում եյին մեր գործողություններին, իբրև եքսպերիմենտների վրա, իսկ այժմ նրանք այլ կերպ են նայում՝ նրանք նայում են, թե

արդյոք ամեն ինչ բարեհաջող է իրենց սեփական պետություններում: Իհարկե, Ֆիզիքական, նյութական, ֆինանսական տեսակետից նրանք շատ ուժեղ են մեզնից, բայց, Հնայած նրանց արտաքին փայլին, մենք գիտենք, վոր ներսից փտում են նրանք. ներկա մոմենտում նրանք ավելի ուժեղ են մեզնից հենց նույն ուժով, նույն հզորությամբ, վորով ուժեղ եր Գերմանիան Բրեստի դաշնագիրը կնքելու պահին: Իսկ ի՞նչ ենք տեսնում այժմ: Այն ժամանակ բացարձակապես բոլորը հեռացան մեզնից: Իսկ այժմ ամեն ամիս, յերբ մենք Խորհրդային հանրապետության ամբողջութուն ենք պաշտպանում, մենք պաշտպանում ենք վոչ միայն մեզ, այլև այն գործը, վոր սկսել են Լիբանեսիտն ու Մակլինը, և մենք արդեն տեսնում ենք, թե ինչպես Անգլիան, Ֆրանսիան, Ամերիկան ու Սպանիան վարակվում են նույն ախտով, վառվում նույն կրակով, ինչպես և Գերմանիան—բանվոր դասակարգի ու իմպերիալիզմի ընդհանուր ու համաշխարհային պայքարի կրակով:

(Շօք. соч., т. XV, стр. 581—589)



ՀՈՂԱՅԻՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ, ՉՔԱՎՈՐՆԵՐԻ ԿՈՄԻ-  
ՏԵՆԵՐԻ ՈՒ ԿՈՄՈՒՆԱՆԵՐԻ Ի ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ  
ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ԱՐՏԱՍԱՆԱԾ ՃՍՌԻՑ

(11 դեկտեմբերի 1918 թ.)

...Գյուղը դադարեց միասնական լինելուց։ Այն գյուղում, վորը ինչպես մի մարդ կռվում էր կալվածատերերի դեմ, առաջ յեկան յերկու բանակ՝ բանակ աշխատավոր, ամենաչքավոր գյուղացիության, վորը բանվորների հետ միասին հաստատուն կերպով շարունակում էր ընթանալ դեպի սոցիալիզմի իրականացումը և կալվածատերերի դեմ միաժ կռվից անցնում էր կռվին ընդդեմ կապիտալի, ընդդեմ փողի իշխանության, ընդդեմ հողային մեծ վերանորոգման կուլակայնորեն ոգտագործման, և բանակ՝ ավելի ունևոր գյուղացիության։ Այդ կռիվը, վերջնականապես բաժանելով հեղափոխությունից ունևոր, շահագործող դասակարգերը, մեր հեղափոխությունը լիովին փոխադրեց դեպի այն սոցիալիստական ուխտները վորոնց վրա, քաղաքների բանվոր դասակարգը հաստատ ու

վճռական կերպով այն ուզում էր դնել՝ հոկտեմբերին, բայց դեպի ուր նա յերբեք չի կարողանա հաղթական կերպով ուղղել հեղափոխությունը, յեթե գյուղերի կողմից զիտակցական, պինդ համախմբված աջակցություն չգտնի։

Ահա թե ինչու մե ե նշանակությունը այն հեղաշրջումի, վոր տեղի ունեցավ այս ամառ և այս աշնանը գյուղական Ռուսաստանի ամենախուլ անկյուններում, վորն աղմկալի չէր, այնքան պարզ նկատելի չէր, և ամենքի աչքին այնպես չէր խփում, ինչպես անցյալ տարվա հոկտեմբերյան հեղաշրջումը, բայց վորն անհամեմատ ավելի խորը և կարևոր նշանակություն ունի։

Գյուղում չքավորների կոմիտեների կազմվելը դարձակետ էր և ցույց տվեց, վոր քաղաքների բանվոր դասակարգը, վորը հոկտեմբերին միացել էր ամբողջ գյուղացիության հետ, վորպեսզի ջախջախի ազատ, աշխատավոր և սոցիալիստական Ռուսաստանի գլխավոր թշնամուն, վորպեսզի ջախջախի կալվածատերերին— այդ խնդրից դեպի առաջ գնաց, դեպի շատ ավելի դժվարին և պատմականորեն ավելի բարձր և իսկապես սոցիալիստական խնդիրը— և գյուղը մտցնի զիտակցական սոցիալիստական կռիվը, և գյուղում գարթեցնի այն զիտակցությունը, վոր ամենամեծ հողային հեղաշրջումը՝



հոկտեմբերին հողի մասնավոր սեփականատիրու-  
թյան վերացման ազդարարումն եր, վոր այդ հեղաշրջումն անխուսափելիորեն թղթի վրա կը-  
մնար, յեթե քաղաքային բանվորները չզարթնե-  
յին և կյանքի չհրավիրեյին գյուղական պրոլե-  
տարիատին, գյուղական չքավորներին, աշխա-  
տավոր գյուղացիութունը, վորն ահագին մեծա-  
մասնութունն է կազմում, վորը միջակ գյու-  
ղացիության հետ միասին չի շահագործում ու-  
րիշի աշխատանքը, շահագրգռված չէ շահագոր-  
ծման մեջ և վորը, այդ պատճառով ել, ընդու-  
նակ է գնալու և այժմ գնաց ավելի առաջ՝ կալ-  
վածատերերի դեմ միասին մղած կռից դեպի  
հանուր պրոլետարական կռիվ կապիտալի դեմ,  
փողի ուժին, շարժական գույքին հենվող շա-  
հագործողների իշխանության դեմ, Ռուսաս-  
տանը կալվածատերերից մաքրելուց անցավ սոցի-  
ալիստական կարգերի ստեղծման:

Այս քայլը, ընկերներ, իրենից ամենամեծ  
դժվարությունն եր ներկայացնում: Այս քայլի վե-  
րաբերմամբ բոլորը, նրանք ովքեր կասկածում  
եյին մեր հեղափոխության սոցիալիստական բը-  
նույթի վրա, մեր անխուսափելի անաշողությունն  
եյին գուշակում և այդ քայլից է այժմ կախված  
գյուղում սոցիալիստական շինարարություն կա-  
տարելու ամբողջ գործը: Չքավորների կոմիտենե-

րի կազմվելը, այդ կոմիտեների լայն ցանցը, վոր  
փովել է Ռուսաստանով մեկ, նրանց առաջիկա և  
մասամբ ել արդեն սկսված փոխակերպվումը  
լիազոր գյուղական պատգամավորների խոր-  
հուլրդների, վորոնք պետք է իրականացնեն գյու-  
ղում խորհրդային շինարարության—աշխատա-  
վորների իշխանության — հիմնական սկզբունք-  
ները, ահա թե վորտեղ է իսկական գրավակա-  
նը, վոր մենք մեր աշխատանքը չենք սահմա-  
նափակում նրանով, ինչով սահմանափակվում  
եյին սովորական բուրժուական - դեմոկրատա-  
կան հեղափոխությունները արևմտա-յերոպական  
յերկրներում: Վոչնչացնելով միապետությունն  
ու կալվածատերերի միջնադարյան իշխանու-  
թյունը՝ մենք այժմ անցնում ենք իսկական  
սոցիալիստական շինարարության գործին: Այս  
գործը գյուղում ամենից դժվարն է, բայց միև-  
նույն ժամանակ ամենից ել կարևորը: Այս աշ-  
խատանքն ամենաշահականն է: Յեթե աշողվեց  
գյուղում արթնացնել գիտակցությունը գյուղա-  
ցիության աշխատավոր մասի մեջ, յեթե նա հենց  
կապիտալիստական ապստամբությունների ալի-  
քով վերջնականապես բաժանված է կապիտա-  
լիստների դասակարգի շահերից, յեթե աշխա-  
տավոր գյուղացիութունը, չքավորների կոմիտե-  
ներում և կերպարանափոխվող թորհուրդներում,



ավելի ու ավելի սերտ ե միանում քալաքի բան-  
վորներին հետ—ապա սրանում մենք տեսնում ենք  
միակ և միլենուլն ժամանակ ամենավստահելի և  
անկասկած հաստատուն գրավականը, վոր սո-  
ցիալիստական շինարարության գործը Ռուսաս-  
տանում այժմ ավելի հաստատուն ե դարձել:  
Այժմ նա հիմք ե գցել նաև գյուղական յերկրա-  
գործ ազգաբնակչության ահագին մասսայում:

Կասկած չկա, վոր այնպիսի գյուղացիական  
մի յերկրում, ինչպիսին Ռուսաստանն ե, սոցիա-  
լիստական շինարարությունը շատ դժվարին  
խնդիր ե հանդիսանում, կասկած չկա, վոր ցա-  
րիգմի նման, կալվածատերերի իշխանության  
նման, կալվածատիրական հողատիրության նման  
թշնամուն ավել — սրբելը համեմատաբար հեշտ  
եր: Կենտրոնում այդ խնդիրը կարելի յեր լու-  
ծել մի քանի որում, ամբողջ յերկրում կարելի  
յեր լուծել մի քանի շաբաթում, բայց այն խըն-  
դիրը, վորին այժմ մենք ձեռնարկում ենք, ըստ  
իր եյության, կարող ե լուծվել միայն չափա-  
զանց համառ ու յերկար աշխատանքով: Այստեղ  
մենք կանգնած ենք քայլ առ քայլ, մատնաչափ  
առ մատնաչափ մղվող կռիւ առջև. հարկ կլինի  
կռվով խել նոր սոցիալիստական Ռուսաստանի  
նվաճումները, պայքարել հողի հասարակական  
մշակման համար:

Յեվ ինքն ըստ ինքյան հասկանալի յե, վոր  
այդ տեսակի հեղաշրջումը, — մանր առանձին  
գյուղացիական տնտեսություններից հողի հասա-  
րակական մշակմանն անցնելը — յերկար ժամա-  
նակ ե պահանջում, վոր դա վաչ մի դեպքում  
մի անգամից իրագործվել չի կարող:

Մենք շատ լավ գիտենք, վոր մանր գյու-  
ղացիական տնտեսություն ունեցող յերկիրնե-  
րում առանց մի ամբողջ շարք հաջորդական  
նախընթաց աստիճանների սոցիալիզմին անց-  
նելն անհնարին ե: Այդ բանը գիտակցելով  
հոկտեմբերյան հեղաշրջումն իր առաջին խնդիրն  
համարեց միայն քանդել ու վոչնչացնել կալվա-  
ծատիրական իշխանությունը: Հողի սոցիալա-  
կանացման փետրվարյան հիմնական որենքը,  
վոր, ինչպես գիտեք, միաձայն վորոշմամբ  
ընդունեցին և՛ կոմունիստները և՛ խորհրդային  
իշխանության այն մասնակիցները, վորոնք կո-  
մունիստների տեսակետին չեն կանգնած, այդ  
որենքը միլենուլն ժամանակ հանդիսանում ե  
գյուղացիության ահագին մեծամասնության կամ-  
քի ու գիտակցության արտահայտությունը և  
ապացույց ե այն, վոր բանվոր դասակարգը, բան-  
վորական կոմունիստական կուսակցությունը,  
գիտակցելով իր խնդիրը, հաստատակամ, համ-  
բերությամբ, մի շարք աստիճանական անցում-



ներով, արթնացնելով գյուղացիութեան աշխատավոր մասի գիտակցութիւնը և առաջ ընթացնալով միայն այդ գիտակցութեան արթնացման չափով, միայն գյուղացիութեան ինքնուրույն կազմակերպման չափով, առաջ ե շարժվում գեպի նոր սոցիալիստական շինարարութիւնն տանող ուղիով:

Մենք շատ լավ գիտենք, վոր տասնյակ միլիոնավոր մարդկանց կյանքում այդպիսի մեծագույն հեղաշրջումները, վորոնք կյանքի ու կենցաղի ամենախոր հիմքերն են շոշափում, ինչպիսին ե մանր առանձին գյուղացիական տնտեսութիւնից հողի ընդհանուր մշակմանն անցնելը, միայն յերկարատե աշխատանքով կարող են ստեղծվել, վոր նրանք ընդհանրապես իրագործելի յեն միայն այն դեպքում, յերբ անհրաժեշտութիւնն ստիպում ե մարդկանց վերաշինել իրենց կյանքը:

Իսկ ամբողջ աշխարհում տեղի ունեցած կատաղի, յերկարատե պատերազմից հետո—պարզորոշ տեսնում ենք սոցիալիստական հեղափոխութեան սկիզբը. ամբողջ աշխարհում, նույնիսկ ավելի յետամնաց յերկիրների համար ել, ստեղծվել ե այդ անհրաժեշտութիւնը, վորն—անկախ վոր և իցե թեորեական հայացքներից կամ սոցիալիստական ուսմունքներից,—ասում ե

ամենաազդու լեզվով ամեն մեկին, վոր ըստ հնի սպրել չի կարելի:

Յերբ յերկիրն այդպիսի հսկայական ավերումն ու այդպիսի փլուզումն կրեց, յերբ տեսնում ենք, վոր փլուզումը տարածվում ե ամբողջ աշխարհով, վոր կուլտուրայի, գիտութեան և տեխնիկայի նվաճումները, վոր մարդկութիւնը ձեռք ե բերել շատ դարերի ընթացքում, ջնջվել են այս հանցավոր, ավերիչ և թալանչական պատերազմի չորս տարվա ընթացքում, վոչ միայն Ռուսաստանը, այլ և ամբողջ Յեվրոպան, բարբարոս դրութեան են վերադառնում—այդ դեպքում ամենալայն մասսաների առաջ և մանավանդ գյուղացիութեան առաջ, վորը, կարող ե պատահել, ամենից շատ ե տուժել այս պատեմագմից, պարզ կերպով բարձրանում ե այն գիտակցութիւնը, վոր ծայրահեղ ջանքեր են հարկավոր, վոր բոլոր ուժերի լարումն և հարկավոր՝ մեզ լոկ ավեր ու կարիք թողած անիծյալ պատերազմի այդ ժառանգութիւնից ազատվելու համար: Ապրել ըստ հնի, ինչպես սպրում եյին պատերազմից առաջ, չի կարելի, և մարդկային ուժի ու աշխատանքի այնպիսի կողոպուտը, վորպիսին մանր առանձին գյուղացիական տնտեսութեան հետ ե կապված, այլևս շարունակվել չի կարող: Կրկնակի ու յեռակի կը



բարձրանար աշխատանքի արտադրողականությունը, կրկնակի ու յեռակի կլինայվեր մարդկային աշխատանքը յերկրագործության և մարդկային տնտեսության համար, յեթե այդ բաժան-բաժան մանր տնտեսությունից անցնեյին հասարակական տնտեսության:

Պատերազմից մեզ ժառանգություն մնացած ավերումն ուղղակի-թույլ չի տալիս վերականգնել այդ հին, մանր գյուղացիական տնտեսությունը: Բավական չէ, վոր գյուղացիներին՝ մասսայորեն վերցրած՝ պատերազմն արթնացրեց, բավական չէ, վոր պատերազմը ցույց ավեց նըրանց, թե ներկայումս տեխնիկայի ինչպիսի հրաշալիքներ գոյություն ունեն և, վոր տեխնիկայի այդ հրաշալիքները հարմարեցրած են մարդկանց վոչընչացնելու, այլ և նա զարթեցրեց և այն միտքը, թե տեխնիկայի հրաշալիքներն առաջին հերթին ամենից հասարակական, ամենից շատ մարդ զբաղեցնող, ամենից յետամնաց արտադրության՝ յերկրագործական արտադրության բարեփոխման համար պիտի գործադրվեն: Բավական չէ, վոր այդ գիտակցությունը արթնացած է, այլ և մարդիկ ժամանակակից պատերազմի հրեշային սոսկումներից համոզվեցին, թե ժամանակակից տեխնիկան ինչպիսի ուժեր է ստեղծել, թե ինչպես են վատնըվում այդ ուժերը ամենասոսկալի, ամենատանձրա-

պատերազմում և, վոր այդ սոսկումներից փրկվելու միակ միջոցը տեխնիկայի հենց նույն ուժերն են հանդիսանում: Մեր պարտականությունն ու պարտքն է այդ ուժերն այնպես ուղղել, վոր ամենից յետամնաց արտադրությունը՝ յերկրագործականը, գյուղատնտեսականը նոր ունեների վրա դրվեն, վոր նա բարեփոխվի, և յերկրագործությունն անգլիտակցորեն, ըստ հնալանդ յեղանակի տարվող զբաղմունքից, գիտության, տեխնիկայի նվաճումների վրա հենված զբաղմունք դառնա: Պատերազմն այդ գիտակցությունն անչափ ավելի շատ արթնացրեց, քան կարող է դատել մեզինց ամեն մեկը: Սակայն, բացի այն, վոր պատերազմն արթնացրեց այդ գիտակցությունը, նա խլեց նաև արտադրությունն ըստ հնի վերականգնելու հնարալորությունը:

Նրանք, վոր յերազում են, թե այս պատերազմից հետո կարելի կլինի վերականգնել պատարագմից առաջ գոյություն ունեցած զրությունը, վերականգնել տնտեսության սխտեմն ու կազմությունը աշխատաքի հին յեղանակները պահելով—զրանք սխալվում են և որ ավուր ավելի ու ավելի յեն նկատում իրենց սխալը: Պատերազմն այնպիսի սոսկալի ավերում առաջացրեց, վոր մեզ մոտ առանձին մա՛ր տնտեսություններն այժմ վո՛չ լծկան ունեն, վո՛չ ինվեն-



տար, վո՛չ գործիքներ: Ժողովրդական աշխատանքի այդպիսի կողոպտումը մենք շարունակել չենք կարող: Աշխատավոր ամենաաղքատ գյուղացիու-  
ությունը, վորն ամենից շատ է գո՛հ ավել հե-  
ղափոխության համար և ամենից շատ է տուժել  
պատերազմից, կալվածատերերից հողը նրա հա-  
մար չի խլել, վոր այդ հողերը նոր կուլակներին  
ճանկն ընկնեն: Այդ աշխատավոր գյուղացիու-  
թյան առաջ այժմ կյանքն ինքը դեմ հանդիման  
հողի հասարակական մշակման անցնելու հարցն է  
գնում, իբրև միակ միջոց վերականգնելու այն կուլ-  
տուրան, վոր այժմ քանդվել ու ավերվել է պատե-  
րազմից: Իբրև միակ միջոց գուրս գալու այն  
խավարից, այն ընկճված ու ճնշված գրությու-  
նից, վորին կապիտալիզմը գտտապարտել է գյու-  
ղական ազգաբնակչության ամբողջ մասան, այն  
խավարից ու ընկճված գրությունից, վոր կապիտա-  
լիստներին թույլ տվեց 4 տարի ճնշել մարդկությու-  
նը պատերազմով և վորից այժմ ինչ գնով էլ վոր լի-  
նի, բոլոր յերկրների աշխատավորները հեղափո-  
խական յեռանդով ու կրքով վճռում են ազատվել:  
Ահա, թե ընկերներ, ինչպիսի պայմաններ  
պիտի ստեղծվեյին համաշխարհային մոշտարով,  
վորպեսզի այդ ամենազժվարին և միևնույն  
ժամանակ ամենագլխավոր սոցիալիստական ռե-  
ֆորմի, այդ ամենից գլխավոր ու արմատա-  
կան սոցիալիստական բարեփոխության հարցը

հերթական խնդիր դառնար, և նա Ռուսաստա-  
նում դրված է իբրև հերթական խնդիր: Զբավոր-  
ների կոմիտեների կազմվելը, հողային բաժին-  
ների, չքավորների կոմիտեների և գյուղատըն-  
տեսական կոմունաների այժմյան միատեղ հա-  
մագումարը—այս ամենը՝ գյուղի ներսում այս  
տարվա ամառն ու աշնանը տեղի ունեցած  
պայքարի հետ կապված՝ մեզ ցույց է տա-  
լիս, վոր աշխատավոր գյուղացիության ամե-  
նալայն մասաներում գիտակցությունը զարթ-  
նել է և, վոր հողի հասարակական մշակումն հա-  
ստատելու ձգտումը գոյություն ունի հենց ի-  
րեն գյուղացիության, աշխատավոր գյուղա-  
ցիության մեծամասնության մեջ: Իհարկե, կրթ-  
կնում եմ, բարեփոխություններից այդ ամենա-  
խոշորին պիտի մոտենանք աստիճանաբար: Այս-  
տեղ անմիջապես վոչինչ չի կարելի անել. սակայն  
պիտի հիշեցնեմ ձեզ, վոր հողի սոցիալականաց-  
ման այն հիմնական որենքումն էլ, վոր նախո-  
րոշված է հոկտեմբերի 25-ի հեղաշրջման հենց  
հետևյալ որը, խորհրդային իշխանության հենց  
առաջին որգանի՝ խորհրդների II համառուսական  
համագումարի հենց առաջին նիստին, որենք հրա-  
տարակվեց վոչ միայն այն մասին, վոր հողի մաս-  
նավոր սեփականությունն ընդամիշտ վերացվում  
է, վոչ միայն այն մասին, վոր կալվածատիրական



սեփականութիւնը վոչնչացւում ե, այլև իմիջի  
այլոց, այն մասին, վոր ժողովրդի տիրութեան  
և աշխատավոր տնտեսութիւնների տիրութեանն  
անցնող ինվէնտարը, լծկաններն ու գործիքները  
նույնպէս հասարակական սեփականութիւն պիտի  
դառնան, նույնպէս պիտի դադարեն առանձին  
տնտեսութիւնների մասնավոր սեփականութիւն  
լինելուց. և հողի սոցիալիզացիայի որենքում, վոր  
ընդունված է 1918 թվի փետրվարին, մի որենք  
վոր շոշափում է հիմնական այն հարցը թե այժմ  
մենք մեր առաջ ինչ նպատակներ ենք դնում, հողի  
տնօրինութեան ինչպիսի խնդիրներ ենք ուղում  
իրականացնել և այդ հարցի վերաբերյալ ինչ  
բան իրագործելու կոչ ենք անում խորհրդային  
իշխանութեան կողմնակիցներին՝ աշխատավոր  
գյուղացիութեանը, այս հարցին այդ որենքը իր  
11-րդ հոդվածում պատասխանում է, վոր այդ-  
պիսի խնդիր հանդիսանում է յերկրագործու-  
թեան մեջ, ի հաշիվ անհատական տնտեսութիւն-  
ների՝ կողեկտիվ տնտեսութեան դարգացումը, իբ-  
րև ավելի ձեռնտու՝ աշխատանքի և պրոդուկտ-  
ների խնայողութեան իմաստով, նպատակ ունե-  
նալով անցումն դեպի սոցիալիստական տնտե-  
սութիւն:

Ընկերներ, մեզ մոտ, յերբ մենք ընդունում  
եյինք այդ որենքը, կոմունիստների և մյուս կու-

սակցութիւնները միջև լիակատար միաբանու-  
թիւնն ու հաճախութիւնն ամենևին չկար,  
ընդհակառակը, մենք այդ որենքը ընդունում  
եյինք այն ժամանակ, յերբ Սորհրդային իշխա-  
նութեան և Սորհրդային կառավարութեան մեջ  
գոյութիւն ունեւ կոմունիստների և կոմունիս-  
տական հայացքներ չունեցող ձախ սոց հեղ. կու-  
սակցութեան միավորումը, և այնուամենայնիւ  
մենք հասանք համերաշխ ու միաձայն վճռի,  
վորը հիմք ենք ընդունում. և այժմ, դարձյալ  
պիտի հիշել, վոր անհատական տնտեսութիւն-  
ներից հողի հասարակական մշակմանն անցնելը,  
նորից ասեմ, միանգամից իրականացվել չի կա-  
րող և վոր քաղաքներում սկսված պայքարը  
հարցն ավելի պարզ եր դնում: Այնտեղ հազար  
բանվորի դիմաց մի կապիտալիստ եր կանգնած  
և նրան դեն շարտելու համար մեծ ջանք հար-  
կավոր չեր: Իսկ այն պայքարը, վոր գյուղում  
սկսվեց, շատ ավելի բարդ եր: Սկզբում տեղի  
ունեցավ գյուղացիների բռնն գրոհը կալվածա-  
տերերի դեմ, սկզբում տեղի ունեցավ կալվածա-  
տիրական իշխանութեան լիակատար վոչնչացումն  
այնպէս, վոր նա այլևս վերականգնել չկարողա-  
նա, ապա սկսվեց պայքար իրեն՝ գյուղացութեան  
ներսում, ուր հանձին կուլակների, հանձին շահա-  
գործողների ու չարաշահների, վորոնք ոգավում  
եյին հացի ավելցուկներով՝ Ռուսաստանի քաղ-



ցած վոչ-յերկրագործ մասի հաշվին, շահվելու հա-  
մար, նոր կապիտալիստներ առաջացան: Այստեղ  
նոր պայքարի առաջ ելինք կանգնած, և դուք  
բոլորդ գիտեք, թե ինչպես այս տարվա ամառը  
այդ պայքարը մի ամբողջ շարք ապստամբու-  
թյունների բռնկումներին հասցրեց: Իսկ, ապա,  
մնում ելին դեռ աշխատավոր գյուղացիու-  
թյան ամենաչքավոր մասի հարաբերություն-  
ները դեպի միջակ գյուղացիությունը, և  
այստեղ մեր քաղաքականությունը միշտ նույն-  
պիսի անխնա պայքար եր վարում, ինչպես և  
կալվածատերերի ու կապիտալիստների դեմ: Կու-  
լակի վերաբերմամբ մենք չենք ասում, ինչ-  
պես կալվածատեր կապիտալիստի վերաբերմամբ,  
թե նա պիտի զրկվի ամբողջ սեփականութունից:  
Մենք ասում ենք, թե պիտի խորտակել այդ կուլա-  
կի դիմադրու թյունը վոր նա ցույցե տալիս մեր ան-  
հրաժեշտ միջոցների վերաբերմամբ, ինչպես որի-  
նակ, հացի մենաշնորհի դեմ, վորը նա չի կատա-  
րում, վորպեսզի շահվի հացի ավելցուկերի չարաշահ  
վաճառից, այն պահուն, յերբ վոչ-յերկրագործա-  
կան տեղերի բանվորներն ու գյուղացիները տան-  
ջալի քաղցում են: Միջակ գյուղացիության վե-  
րաբերմամբ մեր քաղաքականությունը միշտ յեղել  
ե—դաշնակցություն նրանց հետ: Նա ամենևին  
թշնամի չե խորհրդային հիմնարկներին, և թշնա-

մի չե պրոլետարիատին, և թշնամի չե սոցիա-  
լիզմին: Նա, իհարկե, պիտի տատանվի և կհա-  
մաձայնի սոցիալիզմին անցնել միայն այն ժա-  
մանակ, յերբ կտեսնի հաստատուն, գործով  
ցույց տվող որինակն այն բանի, վոր այդ ան-  
ցումն անհրաժեշտ ե: Այդ միջակ գյուղացիու-  
թյանն, իհարկե, չի կարելի համոզել թեորիական  
դատողություններով կամ ագիտացիոն ճառերով,  
դրա վրա մենք հույս չենք դնում, բայց նրան  
կհամոզի գյուղացիության աշխատավոր մասի  
որինակն ու համախմբվածությունը, նրան կհա-  
մոզի այդ աշխատավոր գյուղացիության դաշ-  
նակցությունը պրոլետարիատի հետ, և այստեղ  
մեր հույսը դնում ենք յերկարատև, աստիճանա-  
բար համոզելու վրա, մի շարք անցողական մի-  
ջոցների վրա, վորոնք կիրականացնեն ազգաբնա-  
կության պրոլետարական սոցիալիստական մասի,  
կապիտալի բոլոր ձևերի դեմ վճռական պայքար  
մղող կոմունիստների համաձայնեցնումն մի-  
ջակ գյուղացիության հետ:

Ահա, հաշվի առնելով այս պարագաները,  
հաշվի առնելով այն, վոր գյուղում մենք գործ  
ունենք անհամեմատ ավելի զժվարին խնդրի  
հետ, մենք ել հարցն այնպես ենք դնում,  
ինչպես այն դրված եր հողի սոցիալականաց-  
ման որենքում: Դուք գիտեք վոր այնտեղ



ազդարարած է հողի մասնավոր սեփականու-  
թյան վերացումը, ազդարարած է հողի հա-  
վասարար բաժանումը, դուք գիտեք, վոր այդ  
կերպ ել սկսված է այդ որենքի իրակա-  
նացումը և վոր մենք անց ենք կացրել այն  
գյուղացիական վայրերի մեծ մասում, և մի-  
կնույն ժամանակ, միաբան համաձայնությամբ  
և՛ կոմունիստներին, և՛ բոլոր նրանց, վորոնք  
այն ժամանակ կոմունիզմի հայացքները դեռ  
չեյին ընդունում, որենքում դրած է այն  
միտքը, վորը հենց նոր կարգացի ձեզ և վորն  
ասում է, թե մեր ընդհանուր խնդիրը, մեր ընդ-  
հանուր նպատակը սոցիալիստական անտեսու-  
թյան, հողի հասարակական մշակման կոլլեկտիվ  
հողատիրությանն անցնելն է հանդիսանում: Քա-  
նի առաջ է գնում շինարարության շրջանը այն-  
քան ավելի պարզ է դառնում այժմ և՛ գյուղա-  
ցիներին համար, վորոնք արդեն նստել են հողե-  
րին, և՛ այն ռազմագերիներին համար, վորոնք  
այժմ հարյուր հազարներով ու միլիոններով  
տանջված ու չարչարված վերագտնում են  
գերությունից, ավելի ու ավելի պարզ կանգնում  
են նրանց առաջ ամբողջ հսկայական մեծությունն  
այն գործի, վոր մենք պիտի անենք անտեսու-  
թյունը վերականգնելու համար, նրա համար,  
վորպեսզի ընդմիջտ դուրս բերենք գյուղացուն

մոռացության, ընկճվածության ու խավարի հին  
դրու թյունից, և ավելի ու ավելի պարզ է դառ-  
նում, վոր յեւթը՝ իսկապես հաստատուն, և  
գյուղացիների մասսան կուլտուրական կյանքին  
մոտեցնող, նրանց իսկապես մյուս քաղաքացիներին  
հավասար դիրքի վրա դնող—այդ յեւթը  
միայն հողի հասարակական մշակումն է հանդի-  
սանում, և հողի այդ հասարակական մշակմանն  
է այժմ ձգտում Խորհրդային իշխանությունը  
աստիճանական միջոցներով, սիստեմատիկաբար:  
Հանուն հողի այդ հասարակական մշակման կազ-  
մվում են կոմունաներ և խորհրդային անտե-  
սություններ: Այդ տեսակի անտեսությունների  
նշանակությունը ցույց է տված հողի սոցիալի-  
զացիաի որենքում, նրա այն մասում ուր հարց  
է դրվում, թե ո՞վ կարող է ոգտվել հողից, դուք  
կկարգաք, վոր հողից ոգտվելու իրավունք ունեցող  
անձերի և հիմնարկների մեջ առաջին տեղը գրա-  
վում է պետությունը, յերկրորդը՝ հասարակա-  
կան կազմակերպությունները, ապա՝ գյուղա-  
անտեսական կոմունաները և չորրորդ տեղը՝  
գյուղատնտեսական ընկերությունները: Դար-  
ձյալ ձեր ուշադրությունը դարձնում եմ այն  
բանի վրա, վոր հողի սոցիալիզացիաի որեն-  
քի այս հիմնական կանոնները կազմված է  
այն ժամանակ, յերբ կոմունիստական կուսակ-



ցութիւնը միայն իր կամքը չէր անցկացնում. յերբնա գիտակցորեն զիջումներ եր անում նրանց, ովքեր այս կամ այն կերպ միջակ գյուղացիութեան գիտակցութիւնն ու կամքն ելին արտահայտում: Մենք արինք և անում ենք այդ տեսակի զիջումներ: Մենք յեկանք ու գալիս ենք այդ տեսակի համաձայնութիւններին, վորովհետև հողատիրութեան կուլեկտիվ ձևին, հողի հասարակական մշակմանը, խորհրդային տնտեսութիւններին, կոմունաններին մի անգամից անցնելն անհնարին է, այս հարցում պահանջվում է համառ ու հաստատակամ ազդեցութիւնը Սորհրդային իշխանութեան, վորը գյուղատնտեսութեան բարելավմանը մի միլիարդ ուրբի յէ հատկացրել՝ հողի հասարակական մշակմանն անցնելու պայմանով: Այդ որենքը ցույց է տալիս, վոր մենք ցանկանում ենք ամենից շատ որինակի ուժով, դեպի տրնտեսութեան բարելավումը գրավելու ուժով, ազդել միջակ գյուղացիների մասսայի վրա և յերկրագործական Ռուսաստանի տնտեսութեան մեջ այդ խորը և կարեվորագույն հեղաշրջման համար հույս ենք դնում այդ տեսակի միջոցների աստիճանական ներգործութեան վրա:

Չբավորների կոմիտեներին, գյուղատնտեսական կոմունաներին և հողային բաժինների դաշնակցութիւնը, դաշնակցում, վոր տեսնում ենք ներ-

կա համագումարում, մեզ ցույց է տալիս և լիակատար վատահութեան ընձեռնում, վոր այդ անցումով դեպի հողի հասարակական մշակումը գործն այժմ ճիշտ է դրված, իսկական սոցիալիստական մաշտաբով: Այդ անշեղ ու սխտեմատիկ աշխատանքով պիտի հասնել աշխատանքի արտադրողականութեան բարձրացմանը: Դրա համար մենք պիտի կիրառենք յերկրագործութեան լավագույն յեղանակները և գործի կանչել Ռուսաստանի ագրոնոմական, ուժերն այնպես, վոր մենք կարողանանք ոգտագործել լավագույն կերպով դրված բոլոր տնտեսութիւնները, վորոնք մինչև այժմ ծառայել են իբրև առանձին տնտեսների հարստացման աղբյուր, ծառայել են իբրև աղբյուր կապիտալիզմի վերածնութեան, նոր ստրկացման, վարձու բանվորների նոր ձորտացման և վորոնք այժմ, յերբ հրատարակված է սոցիալիզացիաի որենքը և լիովին վերացված է հողի մասնավոր սեփականութիւնը, պիտի ծառայեն իբրև աղբյուր գյուղատնտեսական գիտութեան ու կուլտուրայի և բոլոր միլիոնավոր աշխատավորների համար արտադրողականութեան բարձրացմանը: Քաղաքի բանվորների և աշխատավոր գյուղացիութեան այս դաշինքի, չբավորների կոմիտեների այս կազմակերպման և նրանց՝ խորհրդային հիմնարկների



վերընտրութեան մեջ և գրավականն այն բանի, վոր յերկրագործական Ռուսաստանն այժմ կանգնել և մի ճանապարհի վրա, ուր մեզնից ուշ, բայց դրա փոխարեն՝ մեզնից ավելի հաստատուն, մեկը մյուսի հետեից վտոք են դնում արևմտա-յերոպական պետութիւնները: Նրանց համար շատ ավելի դժվար եր հեղաշրջումն սկսել, վորովհետև նրանց թշնամին փառած ինքնակալութիւնը չէր, այլ ամենից կուլտուրական ու միասնացած կապիտալիստական դասակարգը, բայց դուք գիտեք, վոր հեղաշրջումն սկսել և, և դուք գիտեք, վոր այդ հեղափոխութիւնը չսահմանափակվեց Ռուսաստանի սահմաններով, վոր մեր գլխավոր հույսը, մեր գլխավոր սյունը— արևմտա—յևրոպական, ավելի առաջավոր յերկիրների պրոլետարիատն է, վոր համաշխարհային հեղափոխութեան այդ գլխավոր նեցուկը մերձեցման յեկավ, և մենք հաստատ համոզված ենք, և գերմանական հեղափոխութեան ընթացքն ել իրապես ցույց և տալիս այդ, վոր այնտեղ սոցիալիստական տնտեսութեանն անցնելը, ավելի բարձր յերկրագործական տեխնիկայի ոգտագործումը, գյուղի աշխատավոր ազգաբնակչութեան ավելի արագ միասնացումը—այնտեղ այդ ավելի արագ կրնթանա և ավելի հեշտ կը կասարվի, քան մեզ մոտ: Դաշնակցած քաղաքնե-

րի բանվորների հետ, դաշնակցած ամբողջ աշխարհի սոցիալիստական պրոլետարիատի հետ, ուս աշխատավոր գյուղացիութիւնն այժմ կարող և հավատացած լինել, վոր ինքը կհաղթահարի բոլոր ձախորդութիւնները, իմպերիալիստների բոլոր գրոհները և կիրականացնի հողի հասարակական մշակման գործը, մանր անհատական տնտեսութիւններից հողի հասարակական մշակման աստիճանաբար, բայց անշեղորեն անցնելու գործը, մի գործ, առանց վորի աշխատավորների ազատագրումն չի կարող լինել:

(Собр. соч., т. XV, стр. 590-599)



ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴՆԵՐԻ Ի  
ՀԱՄԱՌՈՒՄ. ՀԱՄԱԳՈՒՄՍՈՒՄ «ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԱՐՏԱՍԱՆԱԾ ՃԱՌԻՑ

(19 դեկտեմբերի 1918 թ.)

... Ինչ վերաբերում է կոոպերատիվներին՝ նրանց ել անհրաժեշտ է մոտենալ գործնական կողմից: Յերբ տեսնում եմ ժողանախորհի անդամներ, վորոնք հայտարարում են, թե կոոպերացիան—խանութի գործ է, թե այնտեղ մենշևիկներ են կանգնած, թե այնտեղ սպիտակ գվարդիականներ են կանգնած և այդ պատճառով նրանցից հեռու պիտի մնալ,—յես պնդում եմ, վոր այդ մարդիկ գործի լիակատար անհասկացողութուն են հայտնաբերում: Նրանք բացարձակ կերպով չեն հասկանում մոմենտի խընդիրները, յերբ փոխանակ մատնացույց անելու պիտանի կոոպերատորներին իբրև մատնագետներ, մատնանշում են նրանց, իբրև սպիտակ գվարդիականների ձեռք մեկնող մարդկանց: Յես պնդում եմ, վոր նրանք զբաղվում են ի-

րենց չի վերաբերող գործով. սպիտակ գվարդիականներին գտնելու համար մենք արտակարգ հանձնաժողովներ ունենք, նրանց ել հարկավոր է թողնել, վոր իրենց գործն անեն: Իսկ կոոպերատիվները — իմպերիալիստական հասարակության ստեղծած միակ ապարատն է, վոր մենք պիտի ոգտագործենք: Այդ պատճառով ել ըստ պատերազմական դրության, անխնա ռեպրեսիաների միջոցով կհալածենք ամեն մի վորձ վորը գործը վերածում է այնպիսի դատողությունների, վորոնք իրենցից կարճատեսության և ամենակողմ բթամտության, մտավորականի մեծամըտության մարմնացումն են ներկայացնում:

Յեթե մինչև որս, մի տարի անց, գործը կարգի չի ձգած, ինչպես հարկավոր է, յեթե այն ժամանակ, յերբ մեր առաջ գործնական խնդիրներ են դրած, մենք ելի դեռ շարունակում ենք նախագծերի քննությունը, իսկ յերկիրը հաց, թաղիքե վոտնաման, հում նյութի առարկաների իր ժամանակին բաշխումն է պահանջում. գործի նման ձգձգումը և ուրիշի բնագավառը ներխուժելը անհանդուրժելի յե...

Մեր ապարատում յերբեմն կանգնած են դեպի սպիտակ գվարդիականները թեքվող տարբեր, սակայն մեր բոլոր հիմնարկներում կոմունիստական վերահսկողության որոք, այդ



մարդիկ քաղաքական նշանակութիւնն և դեկավար գեր ձեռք բերել չեն կարող: Այդ մասին խոսք ել չի կարող լինել: Մինչդեռ նրանք մեզ հարկավոր են, իբրև գործնական աշխատավորներ, և նրանցից վախենալու բան չկա: Չեմ կասկածում, վոր կոմունիստները—ամենահիանալի մարդիկ են, նրանց մեջ հիանալի կազմակերպիչներ կան, սակայն մեծ թվով այդպիսի կազմակերպիչներ ստանալու համար շատ տարիներ են հարկավոր, իսկ մենք սպասել չենք կարող:

Այժմ այդպիսի աշխատավորներ կարող ենք ձեռք բերել բուրժուազիայի շրջանում, մասնագետները և մտավորականութեան շրջանում: Յեւ մենք կպահանջենք ժողտնտեսում աշխատող յուրաքանչյուր ընկերից՝ պարոնայք, ի՛նչ եք արել փորձված մարդկանց գործի կանչելու համար, ի՛նչ եք արել մասնագետներին կանչելու համար, գործախտաբաններին, բանիմաց գործունե յա բուրժուական կոոպերատորներին կանչելու համար, վորոնք ձեզ մոտ ամենևին ավելի վատ չպիտի աշխատեն, քան աշխատել են ի՛նչ վոր կոոպայեցիների ու Ռադուկայեցիների մոտ: Ժամանակ է, վոր ազատվենք հին նախապաշարմունքից և մեզ հարկավոր բոլոր մասնագետներին մեր աշխատանքին կանչենք: Այդ բանը պիտի իմա-

դան մեր բոլոր կոլեգիալ վարչութիւնները, մեր ժողոր կոմունիստական աշխատավորները: Դեպի գործն ունեցած այդպիսի վերաբերմունքի մեջ է մեր աջողութեան գրավականը:

Բավական է, ինչ դատարկ զրույցներով զբաղվեցինք, այժմ հասել է ժամանակը գործնական աշխատանքի անցնելու, վորը կարող է դուրս բերել մեր յերկիրը այն շրջագծից, վորի մեջ փակում են նրան իմպերալիստները: Այդ տեսակետին պիտի կանգնած լինեն բոլոր խորհրդային, բոլոր կոոպերատիվային ապարատները: Մենք գործ և միայն գործ պիտի անենք: Յեթե պրոլետարիատը՝ իշխանութիւնն իր ձեռքն առնելով՝ չկարողանա ոգտվել այդ իշխանութիւնից, չկարողանա հարցը գործնականորեն դնել ու գործնականորեն ել այն լուծել, նա շատ ու գործնականորեն էլ թողնելու այն նաբան իր կորցնի: Ժամանակ է թողնելու այն նախապաշարմունքը, թե իբր միայն կոմունիստները, վորոնց մեջ, անշուշտ, կան և՛ շատ լավ մարդիկ, կարող են վորոշ աշխատանք տանել: Ժամանակն է այդ նախապաշարմունքը թողնելու՝ մեզ հարկավոր են գործի և միայն գործի աշխատավորներ, և մենք նրանց բոլորին աշխատանքի պիտի կանչենք:

Կապիտալիզմը մեզ անագին ժառանգութիւնն է թողել, թողել է մեզ իր ամենախտոշոր մաս-



նագեաներին, վորոնցից մենք անպայման պիտի ոգտովենք և պիտի ոգտովենք լայն, մասսայական չափով, նրանց բոլորին գործի դնելով: Մեր կոմունիստներից, մասնագետներ պատրաստելու համար ժամանակ կորսնցնելու բոլորովին միջոց չունենք, վորովհետև այժմ ամբողջ խնդիրը գործնական աշխատանքի, գործնական հետևանքների մեջ է:

Հարցն այնպես պիտի դնել, վոր կուլեգիայի յուրաքանչյուր անդամ, պատասխանատու հիմնարկի յուրաքանչյուր անդամ գործն իր ձեռքը վերցնի՝ ամբողջովին պատասխանատու լինելով նրա համար: Անպայման հարկավոր է, վոր ամեն մեկը, ով հանձն է առել վորոշ ճյուղ, պատասխանատու լինի, ամեն բանի համար՝ և՛ արտադրության և՛ բաշխման: Յես ձեզ պիտի ասեմ, վոր մեր Սորհրդային հանրապետության գրությունն այնպես է, վոր հացի և մյուս պրոդուկտների կանոնավոր բաշխման դեպքում մենք շատ ու շատ յերկար կարող ենք դիմանալ: Բայց դրա համար անպայման հարկավոր է ամեն տեսակի ձգձգումներից վճռապես ձեռք վերցնելու ուղիղ քաղաքականություն, հարկավոր է գործել արագ և վճռական, հարկավոր է նշանակել վորոշ անձանց վորոշ պատասխանատու աշխատանքի, վորպեսզի այս անձնավորություններից ամեն

մեկը վորոշակի իր գործն իմանա, վորոշակի պատասխանատու լինի նրա համար, պատասխանատու լինելով մինչև գնդակահարություն: Ահա այն քաղաքականությունը, վոր մենք վարում ենք և ժողկոմխորհում, և՛ Պաշտպանության Սորհրդում, և այդ քաղաքականությանն անհրաժեշտ է յենթադիել ժողտնտխորհերի և կոոպերատիվների ամբողջ գործունեյությունը: Ահա այն ուղին, վորով պիտի ընթանա պրոլետարիատի քաղաքականությունը:

Հարցն այնպես պիտի դնել, վոր մեզ մոտ ապրանքային շրջանառության անիվը կանոնավոր պտույտ գա: Դրանումն է այժմ ամբողջ խնդիրը: Այդ բնագավառում մեծ աշխատանք ունենք կատարելու, և վորպես յեզրակացություն իմ ասածների՝ յես թույլ եմ տալիս ինձ դեպի այդ աշխատանքը յեռանդագին կոչելու ձեզ, բոլորիդ:

(Сообр. соч., т. XV, стр. 603—605.)



ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ ՄԻՏԻՆԳԻՆ ԱՐՏԱՍԱՆԱԾ  
«ԽՈՐՀՐԴՍՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱԶՈ-  
ՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆ-  
ՆԵՐԸ» ՃԱՌԻՑ

(13 մարտի 1919 թ.)

...Այն կոմունիստը, վորն ասում է, թե չի կարելի այդպիսի դրոթյան մեջ ընկնել, առանց ձեռքերը կեղտոտելու, թե ինքը մաքուր կոմունիստական ձեռքերով պիտի կառուցանե կոմունիստական հասարակությունը, առանց հակահեղափոխական բուրժուական կոոպերատիվներով ոգտվելու, — այդպիսի կոմունիստը դատարկ ֆրազիոր է, վորովհետև, ընդհակառակը, նրանցից չոգավել չի կարելի:

Այժմ խիզիրը գործնականորեն այնպես է դրված, վոր պետք է բոլոր նրանց, ում կապիտալիզմը կրթել է մեր դեմ, շուռ տալ՝ մեզ ծառայելու, պետք է ամեն ոք նրանց հսկել, նրանց վրա բանվորական կոմիսարներ կարգել կոմունիստական կազմակերպության պարագաներում,

ամեն ոք խափանել հակահեղափոխական նկրտումները և միևնույն ժամանակ սովորել նրանցից:

Մեզ մոտ, լավագույն դեպքում, կա գիտություն ագիտատորի, պրոպագանդիստի, մի մարդու, վոր միավել է ֆաբրիկային բանվորի կամ քաղցած գյուղացու դժոխային-ծանր վիճակով, գիտություն, վոր սովորեցնում է յերկար դիմանալ, կռվի մեջ համառություն ցույց տալ, վորը և վրկում եր մեզ մինչև որս, այս ամենը անհրաժեշտ է. բայց դա քիչ է, միայն դրանով հաղթել չի կարելի. վորպեսզի հաղթությունը լիակատար ու վերջնական լինի, հարկավոր է նաև վերցնել այն բոլոր արժեքավոր բաները, վոր կա կապիտալիզմի մեջ՝ վերցնել ամբողջ գիտությունն ու կուլտուրան...

(Собр. соч. т. XXI, стр. 75.)



Ռ. Կ. Կ. VIII ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ «ԳՅՈՒՂՈՒՄ  
ՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ» ԱՐՏԱ-  
ՍԱՆԱԾ ՃԱՌԻՑ

(23 մ ա ր ա ի 1919 թ.)

Հատված I.

... Կոմունաները մենք խրախուսում ենք, բայց նրանք այնպես պիտի զբվեն, վոր նվաճեն գյուղացու հավատը: Իսկ մինչ այդ՝ մենք— գյուղացիների աշակերտն ենք և վոչ նրանց ուսուցիչները: Ավելի հիմար բան չկա, քան այն, յերբ մարդիկ, վորոնք չգիտեն գյուղական տնտեսությունն ու նրա առանձնահատկությունները, յերբ մարդիկ, վորոնք գյուղ են նետվել միայն այն պատճառով, վոր լսել են հասարակական տնտեսություն ոգտի մասին, հոգնել են քաղաքի կյանքից և ցանկանում են գյուղում աշխատել, յերբ այդ տեսակ մարդիկ ամեն բանում գյուղացիների ուսուցիչ են համարում իրենց: Ավելի հիմար բան չկա, քան միջակ գյուղացու տնտեսական հարաբերությունների բնագավառում սոսկ բռնություն գործ դնելու միտքը:

Խնդիրն այստեղ վոչ թե միջակ գյուղացու սեփականազրկմանն է վերաբերում, այլ նրան, վոր հաշվի առնվեն գյուղացու կյանքի հասուկ պայմանները, և գյուղացուց սովորենք ավելի լավ կարգերին անցնելու յեղանակներն ու չհամարձակվենք հրամաններ արձակել: Ահա այն կանոնը, վոր մենք մեր առջև ենք դրել...

(Собр. соч., т. XVI стр. 151).

Հատված II.

... Գյուղացիական տնտեսությունն վերաբերող մեր դեկրետները հիմնականում ուղիղ են: Մենք հիմք չունենք նրանցից և վոչ մեկից հրաժարվելու, և վոչ մեկի մասին ավստասլու: Բայց յեթե դեկրետներն ուղիղ են, այդ դեպքում սխալ է դրանք բռնի գյուղացու վիզը փաթածելը: Վոչ մի դեկրետում այդ չի ասված: Նրանք ուղիղ են, իբրև նշված ուղիներ, իբրև կոչ գործնական միջոցների: Յերբ մենք ասում ենք՝ «խրախուսեցեք միասնացումը», մենք զիրեկտիվներ ենք տալիս, վորոնք սակայն շատ անգամ պիտի փորձվեն, վորպեսզի գտնվի նրանց իրագործելու վերջնական ձևը: Յեթե ասած է, թե անհրաժեշտ է ձգտել կամավոր համաձայնություն հասնելու, նշանակում է հարկավոր է գյուղացուն համոզել և հարկավոր է համոզել գործ-



նականապես: Խոսքերով նրանք չեն համոզվի և շատ ել լավ կանեն, վոր չեն համոզվի: Վատ կլինեք, յեթե նրանք համոզվեյին միայն դեկրետները ընթերցումով և ազիտացիոն թերթիկներով: Յեթե այդ կերպ կարելի լինեք տնտեսական կյանքը փոխել, այդ ամբողջ փոփոխումը մի քոռ գոռ չեք արժենա: Նախ հարկավոր ե ապացուցել, վոր այդպիսի միասնացում ավելի լավ ե, միասնացնել մարդկանց այնպես, վոր նրանք իրոք միասնանան և վոչ թե թքոտեն, — ապացուցանել, վոր այդ ձեռնառու յե: Այդպես ե հարցը դնում գյուղացին, այդպես են հարցը դնում և մեր դեկրետները: Յեթե մինչև որս զբան հասնել չենք կարողացել, զբանում ամոթալի վոչինչ չկա, մենք պարզ կերպով պիտի խոստովանենք այդ...

(Собр. соч., т. XVI, стр. 152).

Ո. Կ. Կ. VIII ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ԱՐՏԱՍՍԱՆԱԾ ՃԱՌԻԾ

(19 մարտի 1919 թ.)

... Ապա կցանկայի կանգ առնել կոոպերացիայի վրա, դա §—48 ըզն ե: Այդ պարագրաֆը վորոշ աստիճան հնացել ե: Յերբ այդ գրում եյինք հանձնաժողովում, մեզ մոտ գոյություն ուներ կոոպերացիան, և չկային սպառողական կոմունաները, բայց մի քանի որ անց ընդունվեց բոլոր տեսակի կոոպերացիաներն մի միասնական սպառողական կոմունայում միացնելու գեկրետը: Այս տեսակետից այդ պարագրաֆն արդեն հնացել ե, բայց ինձ թվում ե, թե նա ա՛յնուամենայնիվ հարկավոր ե, վորովհետև բոլորս ել լավ գիտենք, վոր դեկրետից մինչև կատարումն—բավական մեծ տարածություն կա: Կոոպերատիվները վրա ջանք ենք թափում ու չարչարվում՝ դեռ 1918 թ. ապրիլից, ու թեև հասել ենք անքի ընկնող աջողության, բայց դեռ վոչ վճռական աջողության: Կոոպերատիվները միջոցով ազգաբնակչության միասնացմանը յեր-



բեմն այնպիսի չափերով ենք հասել, վոր շատ  
գավառներում գյուղական ազգաբնակչությունը  
98% -ով արդեն միասնացած է: Բայց այդ կոո-  
պերատիվները, վորոնք գոյություն ունեյին կա-  
պիտալիստական հասարակության մեջ, ամբողջո-  
վին տոգորված են բուրժուական հասարակու-  
թյան վոգով, և նրանց գլուխ են կանգնած մեն-  
շևիկներն ու սոց. - հեղ. բուրժուական մասնա-  
գետները: Նրանց մեզ հնազանդեցնել դեռ չենք  
կարողացել, այս հարցում մեր խնդիրը մնում է  
չլուծված: Մեր գեկրետը մի քայլ առաջ է գը-  
նում սպառողական կոմունաներ ստեղծելու ի-  
մաստով, հրամայում է, վոր ամբողջ Ռուսաս-  
տանում կոոպերացիայի բոլոր տեսակները պի-  
տի միանան: Սակայն այդ գեկրետն էլ, յեթե  
նույնիսկ լիովին իրականացնենք այն, ապագա  
սպառողական կոմունայի ներսում կթողնի բան-  
վորական կոոպերացիայի ինքնավար սեկցիան:  
Գործին գործնականորեն ծանոթ ընկերներն  
ասացին ու ապացուցեցին մեզ, վոր բանվորա-  
կան կոոպերացիան, իբրև ավելի զարգացած  
կազմակերպություն, պիտի պահպանվի, քանի վոր  
նրա գործողություններն անհրաժեշտությամբ  
են պայմանավորված: Մեզ մոտ՝ կուսակցու-  
թյան մեջ քիչ չեյին տարածայնություններն ու  
վիճերը կոոպերացիայի վերաբերմամբ, անհա-

մաճայնություններ եյին տեղի ունենում կոո-  
պերացիայում և խորհուրդներում աշխատող  
բոլշևիկներին միջև: Թվում է ինձ, թե սկզբ-  
բունքորեն հարցն անկասկած այն իմաստով  
պիտի լուծվի, վոր այդ ապարատը, իբրև  
միակը, վոր կապիտալիզմը նախապատրաստել  
է մասսաների մեջ, իբրև միակը, վոր գոր-  
ծում է դեռևս պրիմիտիվ կապիտալիզմի աս-  
տիճանին կանգնած գյուղական մասսաներում—  
ինչ գնով էլ լինի պիտի պահպանվի, զարգաց-  
վի և համենայն դեպս դեն չպիտի նետվի: Այս-  
տեղ խնդիրը դժվարին է, վորովհետև մեծ մա-  
սամբ կոոպերատիվների առաջնորդները բուր-  
ժուական մասնագետներ են, ամբողջովին, իսկա-  
կան սպիտակ գվարդիականներ: Այստեղից ա-  
ռաջ յեկավ ամելությունը նրանց դեմ— իրավա-  
ցի ատելություն, այստեղից առաջ յեկավ պայ-  
քաբը նրանց դեմ: Բայց այդ պայքարը ճարտա-  
րությամբ պիտի վարել— հարկավոր է խափանել  
կոոպերատիվների հակահեղափոխական նկրտում-  
ները, բայց պայքար տեղի չպիտի ունենա կոո-  
պերացիայի ապարատի դեմ: Կտրելով ու հեռաց-  
նելով այդ հակահեղափոխական գործիչներին,  
ապարատը պիտի հնազանդեցնենք մեզ: Այս-  
տեղ խնդիրը ճիշտ նույն կերպ է դրված,  
ինչպես և բուրժուական մասնագետների վերա-  
բերմամբ:



Բուրժուական մասնագետների հարցը շատ անհամաձայնություններ ու տարաձայնություններ է առաջացնում: Յերբ վերջին որերս ինձ վիճակվեց հանդես գալ Պետրոգրադի Սորհրդում, ինձ տրված թերթիկներինց մի քանիսը ուժիկի հափի հարցին եյին նվիրված: Ինձ հարցնում եյին՝ մի՞թե կարելի յե Սոցիալիստական Հանրապետություն մեջ մինչև 3000 ուրլի վճարել: Մենք իսկապես այդ հարցը ծրագրի մեջ ենք դրել, վորովհետև այդ խնդրի վերաբերմամբ դժգոհությունը բավական հեռու յե գնացել: Բուրժուական մասնագետների հարցը գոյություն ունի բանակում, արդյունագործություն մեջ, կոոպերատիվներում, ամեն տեղ...

(Собр. соч. т. XVI, стр.122-123.)

ԳԵՊԻ ՄԻՋԱԿ ԳՅՈՒՂԱՅԻՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՆԵՆԱ-  
ԼԻՔ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ  
ԲԱՆԱԶԵՎԻՑ

(Ընդունված է Ռ. Կ. Կ. VIII համագումարի կողմից  
1919 թ. մարտի 23-ին.)

... 4) Սրախուսելով ամեն տեսակի ընկերությունները, ուրեմն և միջակ գյուղացիների գյուղատնտեսական կոմունաները, խորհրդային իշխանությունն աներկայացուցիչներն այդպիսիներն հիմնելիս ամենափոքր բռնադատություն իսկ չպիտի թույլ տան: Արժեքավոր են միայն այն միացումները, վորոնք առաջացած են գյուղացիները՝ իրենց ձևով, իրենց ազատ նախաձեռնությունը և վորոնց ոգուտներն գործնականում իրենք են իրականացրել: Չափազանց շտապումն այս գործում վրասակար է, վորովհետև նա ընդունակ է նորմուծությունների դեմ միայն միջակ գյուղացիության կանխակալ կարծիքներն ուժեղացնելու:

Սորհրդային իշխանությունն այն աներկայացուցիչները, վորոնք թույլ են տալիս իրենց վոչ



միայն ուղղակի, այլ թեկուզ և անուղղակի բըն-  
նադատություն գործ ղնել գյուղացիներին և ո-  
մունաների մեջ միացնելու նպատակով, պիտի  
յենթարկվեն խստագույն պատասխանատուության  
և գյուղական աշխատանքից պիտի հեռացվեն:

... 9) Գյուղացիների կոոպերատիվային միա-  
ցումները գյուղացիական արտադրության բարձ-  
րացման նպատակով, մանավանդ գյուղատնտեսա-  
կան արտադրանքի մշակման, գյուղացիական հո-  
ղերի մեղիորացիայի, անայնագործական արդյու-  
նագործությանն աջակցելու և այլն նպատակով,  
պետության կողմից ինչպես ֆինանսական, նույն-  
պես և կազմակերպչական լայն ոգնություն պի-  
տի գտնեն...

(Собр. соч., XVI, стр. 159 и 161.)

ՖԱՅՐԻԿԱՆԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ  
ՅԵՎ ԱՐՀՄԻՌՈՒՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ  
ԱՐՏԱՍԱՆԱԾ ՃԱՌԻՅ

(29 հուլիսի 1919 թ.)

... Թույլ եմ տալիս ինձ արտահայտելու  
իմ ցանկությունը, վոր ձեր վրա ընկնելիք խն-  
դիրը—աշխատավոր մասսաներն ընդգրկող սպառ-  
ման կոոպերատիվային ընկերության սանդ-  
ժումը, ահագին կարևորություն ունեցող այդ  
գործը՝ աջ զուրթյամբ ի կատար ածվի: Կոոպերա-  
տիվները կապիտալիստական հասարակության  
պայմաններում, անխուսափելիորեն վերին շեր-  
տեր եյին կազմում, վորոնք ղեկավարում եյին  
կոոպերատիվները, և այդ վերին շերտերն անխտիր  
սպիտակ-գվարդիական եյին: Վոչ միայն մեզ  
մոտ այդ այդպես յեղավ, այդ ապացուցեցին  
այն վերին շերտերն, վորոնք դաշինք են կնքում  
կոլչակի հետ: Այդ տեղի ունեցավ կապիտալիս-  
տական յերկրներում—Անգլիայում և Գերմա-  
նիայում: Յերբ պատերազմն սկսվեց, մաքր կապի-



տալիստները վերին շերտերը, վորոնք սովոր եյին յեկամուսներով ապրել, ամբողջովին իմպերիալիստները կողմն անցան:

Այդպես յեղավ ամբողջ աշխարհում. Ռուսաստանն ել սուրբ յերկիր չե, մեզ ել վիճակվեց այդ բարձր շերտերի դեմ ծանր պատերազմ մղել: Այդ պատերազմը դեռ չի ավարտած: Նրանք, ովքեր շահագործումը իրենց սեփական կոնսակին են կրել, չեն մոռանալ այն, յերբ բաշխման գործը իրենց ձեռքն կառնեն: Հնարավոր ե, վոր այդ գործում քիչ պարտություններ չենք կրի: Մենք գիտենք, վոր մեզ մոտ խավարն ու անկրթությունը շատ ե. այդ յերևան պիտի գա մեկ այնտեղ, մեկ այստեղ, բայց մենք այն ել գիտենք, վոր մի հարվածով վոչնչի չես հասնի: Մենք, վոր գիտակցորեն վարում ենք խորհրդային աշխատանքը, մենք՝ գիտակից գյուղացիներս ու բանվորներս, վորոնք կառուցում են սոցիալիստական Ռուսաստանը, կվարենք այդ պատերազմը: Այդ պատերազմը դուք կվարեք մեզ հետ միասին և այդ պատերազմը, վորքան ել դժվարին ու ծանր լինի, մենք, ընկերներ, կավարտենք լիակատար հաղթանակով...

(Собр. соч., т. XVI, стр. 293.)

ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՐԾԿՈՄԻ, ՄՈՍԿՎԱՅԻ  
ԽՈՐՀՐԴԻ ՅԵՎ ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՆԵ-  
ՐԻ ՆԻՍՏԻՆ ԱՐՏԱՍԱՆԱԾ ՃԱՌԻՑ

(8 նոյեմբերի 1919 թ.)

... Մենք գիտենք, վոր բոլոր այն ճյուղերում, ուր վոր կարող եյինք վերջ տալ բուրժուազիային՝ մենք այդ արել ենք, բայց ինչ ե արժեք մեզ այդ: Յուրաքանչյուր շրջան նվաճել ենք թիզ առ թիզ և առաջ ենք քաշել բանվորներին՝ դարձնելով, դնելով մեր առաջավոր մարդկանց, վորոնք անցել են կառավարման, պետական իշխանության կազմակերպման դժվարին դպրոցը: Կարող ե պատահել, հեռվից նայելիս՝ այս ամբողջ գործն իրենից մեծ դժվարություն չի ներկայացնում, բայց իրականության մեջ, յետ խորամուխ լինեք, կտեսնեք, թե բանվորները, վորոնք ապրել են պայքարի բոլոր փուլերը, ինչպիսի դժվարությամբ ձեռք բերին իրենց իրավունքները, ինչպես անցան նրանք բանվորական վերահսկողությունից մինչև ար-



դյունագործության բանվորական կառավարումը  
տանող դժվարին ուղին, և կամ յերկաթուղային  
ասպարեզում սկսելով հռչակավոր Վիկտեղից, ինչ-  
պես աշխատունակ ապարատ ձեռք բերին: Մենք  
տեսնում ենք, թե բանվոր դասակարգի ներկայա-  
ցուցիչներն ինչպես քիչ-քիչ մուտք են գործում  
մեր բոլոր կազմակերպությունները, ամենուրեք  
ամրացնելով նրանց: Վերցնենք, որինակ, կոոպե-  
րացիան, ուր մենք բանվորական ներկայացու-  
ցիչների ահագին թիվ ունենք: Մենք գիտենք,  
վոր կոոպերացիան առաջ համարյա ամբողջովին  
վոչ բանվոր դասակարգի ներկայացուցիչներից  
եր կազմված: Հին կոոպերացիայում հանդիպում  
եյինք մարդկանց, վորոնք տոգորված էին բուր-  
ժուական հասարակության հայացքներով ու  
շահերով: Բանվորներն ստիպված էին յերկար  
պայքարել՝ կոոպերացիան իրենց ձեռքն առնե-  
լու և իրենց շահերին յենթարկելու համար...

(Собр. соч., т. XVI, стр. 368.)

ԳՅՈՒՂՈՒՄ ՏԱՆԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ ՎԵՐԱ-  
ԲԵՐՈՂ ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒ-  
ԹՅԱՆՆ ԱՐՏԱՍՆԱԾ ՃԱՌԻՑ

(18 նոյեմբերի 1919 թ.)

...Միջակ գյուղացուն մենք ասում էյինք.  
«Վորևե կերպ բռնությամբ, վիզը փաթաթելու  
միջոցով սոցիալիզմին անցնելու մասին խոսք  
անգամ լինել չի կարող»: Բայց այդ հարկավոր է  
նրան հասկացնել, հարկավոր է կարողանալ այդ  
ասել այնպիսի լեզվով, վոր ամենից հասկանալին  
է գյուղացու համար: Այս խնդրում ազդել կա-  
րելի յե միայն որինակով, հասարակական տըն-  
տեսությունն աջողակի դնելով: Իսկ վորպեսզի  
արտելային, ընկերային աշխատանքի՝ որինակ  
ցույց տրվի, հարկավոր է, վոր նախ ինքներս  
աջող կերպով այդպիսի տնտեսություն կազմա-  
կերպենք: Յերկրագործական կոմունաներ և ար-  
տեղներ հիմնելու շարժումը այս յերկու տարվա  
ընթացքում հսկայական էր: Բայց իրերին զգա-  
տաբար նայելով պիտի տեսնենք, վոր բազմա-



թիվ ընկերներ, գյուղացիական կյանքի անտեսական պայմանների անբավարար գիտությամբ նետվել են կոմունաներ հիմնելու, մտել են յերկրագործության, գյուղական անտեսության մեջ: Ուստի և այստեղ հարկավոր եր վերացնել անպիսի թվով այն սխալները, վորոնք հետևանք եյին հապճեպ քայլերի, գործին սխալ մոտենալու...

(Собр. соч , т. XVI, стр. 377—378.)

ՀՈՂԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼՆԵՐԻ Կ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ԱՐՏԱՍԱՆՍԾ ՃԱՌԸ

(3 դեկտեմբերի 1919 թ.)

Ընկերներ, շատ ուրախ եմ, վոր կառավարության անունից վողջունում եմ յերկրագործական կոմունաների և գյուղատնտեսական արտելներին ձեր առաջին համագումարը: Դուք, իհարկե, խորհրդային իշխանության ամբողջ գործունեյուկութունից գիտեք, թե մենք ինչ անպիսի նշանակութուն ենք տալիս կոմունաներին, արտելներին և ընդհանրապես բոլոր այն տեսակի կազմակերպություններին, վորոնք մանր, անհատական գյուղացիական տնտեսությունը հասարակականի, ընկերայինի կամ արտելայինի փոխարկմանը և այդ փոխարկմանն աստիճանաբար նպաստելուն են ուղղված: Դուք գիտեք, վոր խորհրդային իշխանությունն այդ տեսակ ձեռնարկումներին ոժտանգակելու համար վաղուց արդեն միլիարդանոց ֆոնդ ե սահմանել: Սոցիալիստական



հողաշինարարական կանոնադրութեան մեջ առանձնապէս ընդգծած է կոմունիստներին, արտելներին և հողի հասարակական մշակման բոլոր ձեռնարկութեաններին նշակութունը, և Սոցիալդեմոկրատիկ իշխանութունը իր բոլոր ջանքերն ուղղում է, վոր այդ որեւէ լոկ թղթի վրա չմնա, այլ վոր նա հերավի բերի այն ոգուաբ, վոր նա պիտի բերի: Բոլոր այդ տեսակի ձեռնարկութեաններին նշանակութունը ահագին է, վորովհետև յեթե նախկին, աղքատիկ, մուրացիկ գյուղացիական անտեսութեանը մնալու լինեք ըստ հնի, այդ դեպքում սոցիալիստական հասարակութեան հաստատուն կառուցման մասին խոսք անգամ լինեք չեք կարող: Միայն այն դեպքում, յերբ աջողի գյուղացուն գործով ցույց տալ հողի հասարակական, կոլեկտիվ, ընկերային, արտելային մշակման առավելութեանները, միայն յեթե աջողի ոգնել գյուղացուն ընկերային, արտելային անտեսութեան միջոցով, միայն այդ դեպքում բանավոր դասակարգը, վորի ձեռքում է իշխանութեանը, իսկապէս գյուղացուն կապացուցանի իր իրավացի լինելը, հերավի հաստատուն կերպով և ինչպէս հարկն է իր կողմը կգրավի բազմամիլիոն գյուղացիական մասսան: Ուստի և ընկերային, արտելային յերկրագործութեանն ա-

ջակցութեան ցույց տալու ամեն տեսակի ձեռնարկութեաններին նշանակութունը չափազանցնել չի կարելի: Մենք միլիոնավոր ցիրուցան, գյուղերի խուլ անկյուններում շաղ տված, առանձին անտեսութեաններ ունենք: Այդ անտեսութեանների վորևէ արագ յեղանակով, վորևէ հրամանով, դրսից, արտաքուստ գործած աղղեցութեամբ փոփոխելը—կատարելապէս անհեթեթ մի միտք կլինեք: Մենք հիանալի կերպով ըմբռնում ենք, վոր միլիոնավոր մանր գյուղացիական անտեսութեանների վրա կարելի յե աղղեցութեան գործել միայն աստիճանաբար, զգուշութեամբ, լոկ աջող գործնական որինակով, վորովհետև գյուղացիները—չափազանց գործնական մարդիկ են, չափազանց պինդ են կապված հին հողային անտեսութեան հետ, վորպէսզի սոսկ զըքույկներին, խորհուրդներին ու ցուցմունքներին հիման վրա վորևիցե լուրջ փոփոխութեանների դիմեն: Այդպիսի բան չի կարող լինել, և նույնիսկ անհեթեթ մի բան կլինեք այդ: Միայն այդ դեպքում, յերբ գործնականորեն, գյուղացիներին մոտիկ փորձով կապացուցվի, վոր ընկերային, արտելային յերկրագործութեանն անցնելը անհրաժեշտ է ու հնարավոր, միայն այն ժամանակ մենք իրավունք կունենանք ասելու, վոր այնպիսի մի ահագին գյուղացիական յերկրում ինչպիսին



Ռուսաստանն է, դեպի սոցիալիստական յերկրագործություն տանող ուղիով լուրջ քայլ է արած: Ուստի և կոմունաների, արտեղների ու ընկերությունների այդ խոշոր նշանակությունը, վոր ձեր բոլորի վրա անագին պետական ու սոցիալիստական պարտականություններ է դնում, բնականաբար ստիպում է Նորհրդային իշխանությանն ու նրա ներկայացուցիչներին այդ հարցին առանձին ուշադրությամբ ու զգուշությամբ վերաբերվել:

Սոցիալիստական հողաշինարարական մեր որենքում ասված է, վոր մենք ընկերային, արտելային յերկրագործության ամեն տեսակի ձեռնարկությունների անպայման պարտականությունն ենք համարում չառանձնա՛նալ, իրենց հեռու չպահել շրջակա գյուղացիական ազգաբնակչութունից, այլ պարտագիր կերպով ոգնություն ցույց տալ նրան: Որենքում դա գրված է, կոմունային կանոնադրվածում դա կրկնված է, մեր յերկրագործության կոմիսարիատի հրահանգներում դա շարունակ զարգացվում է—և դա ամենից գլխավորն է: Բայց ամբողջ հարցը նրանումն է, վոր կյանքում այդ կերարկելու իսկապես գործնական յեղանակ գտնվի: Այստեղ, դեռ վստահ չեմ, թե մենք այդ գլխավոր դժվարությունն հաղթել ենք: Յեւ յես

կցանկանայի, վոր ձեր համագումարը, ուր դուք հնարավորություն ունեք Ռուսաստանի բոլոր ծայրերից հավաքված հասարակական տնտեսությունների գործնական աշխատավորների փորձից միմիանց մասն հանելու, վերջ դներ բոլոր կասկածներին և ապացուցեր, վոր մենք տիրանում ենք, սկսում ենք գործնականորեն տիրանալ արտեղներին, ընկերությունների, կոմունաների և ընդհանրապես, ամեն տեսակի կոլլեկտիվ, հասարակական յերկրագործական ձեռնարկությունների գործին: Սակայն այդ բանը ապացուցանելու համար հարկավոր են, հերավի, գործնական հետևանքներ:

Յերբ մենք կարդում ենք յերկրագործական կոմունաների կանոնադրությունները կամ այդ հարցին նվիրված գրքերը՝ թվում է, թե նրանցում մենք չափազանց շատ տեղ ենք նվիրում պրոպագանդին, կոմունաներ կազմակերպելու անհրաժեշտության թեորյական հիմնավորմանը: Իհարկե, դա անհրաժեշտ գործ է, առանց հանգամանորեն մղած պրոպագանդի, առանց ընկերային յերկրագործության առավելությունների բացատրության, առանց այդ միտքը հաղարավոր ու հաղարավոր անգամ կրկնելու, մենք չենք կարող հուսալ, վոր գյուղացիական չենք կարող հուսալ, վոր գյուղացիական մասսաներում հետաքրքրություն կգոր-



գանա և կակավի կյանքում նրա իրականացման յեղանակներն գործնական փորձը: Իհարկե, պրոպագանդն անհրաժեշտ է, և կրկնություններն չպիտի վախենանք, վորովհետև այն, ինչ մեզ համար կրկնություն է թվում, շատ հարյուրավոր ու հազարավոր գյուղացիներն համար, թերևս, կրկնություն չի լինի, այլ իրենց կողմից առաջին անգամ բացահայտած ճշմարտություն: Յեվ յեթե մեր գլխում այն միտքն է ծագում, թե մենք պրոպագանդին չափազանց շատ ուշադրություն ենք նվիրում, այդ դեպքում պիտի ասել, վոր մեզ անհրաժեշտ է ելի հարյուր անգամ ավելի այդ բանն անել: Սակայն յեթե յես ասում եմ այդ, ասում եմ այն մտքով, վոր, յեթե մենք մոտենում ենք գյուղացիությանը յերկրագործական կոմունաների կազմակերպման ոգտակարության ընդհանուր բացատրությամբ և դրա հետ միասին, չենք կարողանում գործով ցույց տալ այդ գործնական ոգուտը, վոր բերում են նրան ընկերային, արտելային տնտեսությունները, այդ դեպքում նա մեր պրոպագանդին վստահություն ցույց չի տա:

Որենքն ասում է, վոր կոմունաները, արտերները, ընկերությունները պիտի ոգնեն շրջակա գյուղացիական ազգաբնակչությանը: Սակայն

պետությունը, բանվորական իշխանությունը, միլիարդանոց ֆոնդ է տալիս նրա համար, վոր ոգնություն ցույց տրվի յերկրագործական կոմունաներին ու արտերներին: Յեվ, իհարկե, յեթե այս կամ այն կոմունան սկսի այդ ֆոնդից ոգնություն ցույց տալ գյուղացիներին՝ վախում եմ, թե դա գյուղացիների կողմից միայն ծաղր կառաջացնի: Յեվ դա կատարելապես ճիշտ կլինի: Յյուրաքանչյուր գյուղացի կասի. «հասկանալի յե, յեթե ձեզ միլիարդանոց ֆոնդ են տալիս՝ իհարկե, մեզ ել դրանից մի կտոր ձգելը դժվար չե ձեզ համար»: Վախում եմ, թե գյուղացին կծիծաղի միայն դրա վրա, վորովհետև նա դրան վերաբերվում է խիստ ուշադիր և խիստ անվստահ: Գյուղացին սովորել է պետական իշխանության կողմից դարեր շարունակ միմիայն ընշում տեսնել, այդ պատճառով ել նա սովորել է անվստահաբար վերաբերվել այն ամենին, ինչ վոր գանձարանից է գալիս: Յեվ յեթե գյուղաճյուղ տեսական կոմունաների կողմից գյուղացիներին ցույց տալիք ոգնությունը պիտի իրականանոգուտ կլինի, այլ և նրանից միայն փնտս կարող է ստացվել: Վորովհետև յերկրագործական կոմունաների անունը շատ խոշոր է և կապված է



կոմունիզմի հասկացողութեան հետ: Լավ է, յեթե կոմունիստները գործնականում են ցույց տալիս, վոր իրենցում հիրավի գյուղացիական անտեսութունը բարելավելու լուրջ աշխատանք է տարվում—այն ժամանակ, անշուշտ կբարձրանա կոմունիստները, և կոմունիստական կուսակցութեան հեղինակութունը: Բայց համարյա միշտ այնպես եր պատահում, վոր կոմունիստները գյուղացիութեան մեջ դեպի իրենց միայն բացասական վերաբերմունք եյին հարուցանում, և «կոմունա» բառը յերբեմն նույնիսկ կոմունիզմի դեմ պայքարելու լողունգ եր դառնում: Յեվ այդ պատահում եր վոչ միայն այն ժամանակ, յերբ գյուղացիներին բռնի կերպով կոմունիստներ քշելու անմիտ փորձեր եյին կատարվում: Դրա անհեթեթութունն այնպես խիստ եր բոլորի աչքին ընկնում, վոր Խորհրդային իշխանութունն արդեն շատ վաղուց է, վոր դուրս է յեկել դրանց դեմ: Յեվ յես հույս ունեմ, վոր, յեթե այժմ պատահում ել են այդպիսի բռնութեան յեզակի դեպքեր՝ նրանք քիչ են, և դուք կոգտվեք ներկա համագումարից, վորպեսզի այդ խայտառակութեան վերջին հետքերը լիովին ջնջեք Խորհրդային հանրապետութեան յերեսից և վուպեսզի շրջակա գյուղացիական ազգաբնակչութունը չկարողանա մատնանշել և վոչ մի որի-

նակ՝ պաշտպանելու համար այն հին կարծիքը, թե իբր կոմունա մտնելը վորև է բռնութեան հետ է կապված:

Սակայն նույնիսկ, յեթե մենք ազատվենք այդ հին թերութեանից և լիովին հաղթենք այդ խայտառակութեանը՝ այնուամենայնիվ դա ամենափոքր մասը կլինի այն բանի, ինչ վոր մենք պիտի անենք: Վորովհետև պետութեան կողմից կոմունիստներին ոգնութուն ցույց տալու անհրաժեշտութունը մնացել է, և մենք կոմունիստներ ու սոցիալիստական անտեսութուն մտցնելու կողմնակիցներ չեյինք լինի, յեթե չիրագործեյինք պետական ոգնութունը ամեն անասակի կոլեկտիվ յերկրագործական ձեռնարկութունները վերաբերմամբ: Մենք ստիպված ենք այդ անել նաև այն պատճառով, վոր դա համապատասխանում է մեր բոլոր խնդիրներին և, վորովհետև մենք շատ լավ գիտենք, վոր այդ ընկերութունները, արտեղներն ու կոլեկտիվ կազմակերպութունները նորութուն են հանդիսանում և յեթե դրան՝ իշխանութեան գլուխ անցած բանվոր դասակարգի կողմից աջակցութուն ցույց չտրվի, նա չի պատվաստվի: Իսկ վորպեսզի այդ նորութունը պատվաստվի, մենք նկատի ունենալով հենց այն, վոր պետութունը մոտենում է նրան դրամական և ամեն անասակի այլ ոգնութեամբ, պիտի ձգտենք, վոր



գյուղացիները չկարողանան ծաղրով ընդունել այդ։ Մենք միշտ պիտի վախենանք, վոր գյուղացին կոմունարի և արտելների ու ընկերությունների անդամների մասին չասի, թե նրանք պետական թոշակառուներ են և գյուղացիներից միայն նրանով են տարբերվում, վոր նրանց արտոնություններ են տալիս։ Յեթե հող և հետն ել շինության համար միլիարդանոց ֆոնդից նպաստ տաս, ամեն մի հիմար մի քիչ ավելի լավ կ'սկսի, քան հասարակ գյուղացին։ Ել այստեղ ի՞նչ կա կոմունիստական և ի՞նչ բարելավում կա այստեղ—կասի գյուղացին—ի՞նչ բանի համար մենք նրանց պիտի հարգենք։ Իհարկե, վոր մի քանի տասնյակ կամ հարյուրակ մարդ ջոկես ու նրանց միլիարդներ տաս՝ նրանք կաշխատեն։

Գյուղացիների կողմից հատկապես այդ տեսակի վերաբերմունքն ամենից շատ վտանգներ ե առաջացնում։ Յես կուզենայի այս համագումարին ժողովված ընկերների ու շաղրությունն այդ հարցի վրա դարձնել։ Այդ հարցն անհրաժեշտ ե գործնականորեն այնպես լուծել, վոր մենք մեզ կարողանանք ասել, թե մենք վոչ միայն խուսափեցինք այդ վտանգից, այլ և միջոցներ գտանք պայքարելու այն բանի համար, վոր գյուղացին այդպես չմտածի, այլ, ընդհակառակը, վորպեսզի նա յուրաքանչյուր կոմունիստ, յուրա-

քանչյուր արտել նկատի իբրև մի այնպիսի բան, վորին պետական իշխանությունն ոգնում ե, և նրանում՝ վոչ գրքերում և վոչ ճառերում (դա շատ աժան ե), այլ գործնական կյանքում, գանի յերկրագործության նոր ձևեր, վորոնք ցույց են տալիս իրենց առավելոթյունները հնի հանդեպ։ Ահա թե ինչու մն ե խնդրի լուծման դժվարությունը, և ահա թե ինչու մենք ել աչքներիս առաջ ունենալով լոկ չոր թվերը, դժվարանում ենք դատել, թե արդյոք գործով ապացուցե՞լ ենք, վոր յուրաքանչյուր կոմունիստ, յուրաքանչյուր արտել հիշավի բարձր ե հին կարգի բոլոր ձեռնարկություններից, վոր այս խընդրում բանվորական իշխանությունը գյուղացուն ոգնում ե։

Կարծում եմ, վոր այդ հարցի լուծման համար գործնականորեն շատ ցանկալի կլինեն, վոր դուք՝ ունենալով գործնական ծանոթություն մի ամբողջ շարք շրջակա կոմունիստների, արտելների ու ընկերությունների հետ, մշակեյիք իրապես փաստական վերահսկողության ձևերը՝ թե ինչպես ե իրագործվում այն որեքը, վոր պահանջում ե գյուղատնտեսական կոմունիստներից ոգնություն ցույց տալ շրջակա ազգաբնակչությանը. ի՞նչպես ե իրականացվում անցումը դեպի սոցիալիստական յեկրագործություն և կոնկրետ կերպով ինչու՞մն



ե արտահայտվում դա յուրաքանչյուր կոմունա-  
յում, արտելում, ընկերության մեջ. հատկապես  
ի՞նչ կերպ ե իրականացվում դա, քանի՞ ընկերու-  
թյուն, կոմունա իրականացնում ե իրապես,  
իսկ քանի՞սը պատրաստվում ե միայն. քանի ան-  
գամ ե նկատվել, վոր կոմունաներն ոգնություն  
են ցույց տալիս և ի՞նչ բնույթ ե կրել այդ ոգ-  
նությունը՝ մարդասիրական, թե սոցիալիստա-  
կան:

Յեթե կոմունաներն ու ար. տեղները պետու-  
թյան կողմից իրենց ցույց տված ոգնությունից  
մասն են հանում գյուղացիներին՝ դա յուրա-  
քանչյուր գյուղացու առիթ կտա մտածելու, թե  
այստեղ սոսկ բարի մարդիկ ոգնում են իրեն,  
բայց մամենեին չի ապացուցանում անցումը դե-  
պի սոցիալիստական կարգը: Իսկ գյուղացիները  
վաղուց ի վեր սովորել են այդ տեսակ «բարի  
մարդկանց» անվատահությամբ վերաբերվել: Հար-  
կավոր ե կարողանալ ստուգել, թե ինչո՞ւմ  
ե իրոք յերևան յեկել այդ նոր հասարակա-  
կարգը, ի՞նչ ճանապարհով են ապացուցանում  
գյուղացուն, վոր հողի ընկերային, արտելային  
մշակումը գյուղացիական անհատական մշակու-  
մից ավելի լավ ե և ավելի լավ ե վոչ շնորհիվ պե-  
տական ոգնության. հարկավոր ե կարողանալ  
գյուղացիներին ապացուցել վոր այդ նոր կար-

դը գործնականորեն կարելի յե իրականացնել  
առանց պետական ոգնության:

Յավոք սրտի, յես ձեր համագումարին մին-  
չև վերջը ներկա լինել չեմ կարող, ուստի և  
չեմ կարողանալու ստուգման այդ ձևերի մշակ-  
մանը մասնակցել: Սակայն վստահ եմ, վոր  
դուք՝ յերկրագործության մեր կոմիսարիատը դե-  
կավարող ընկերներին հետ միասին, այդպիսի ձե-  
վեր կգտնեք: Հաճույքով կարգացի յերկրագոր-  
ծության ժողովրդական կոմիսար ընկ Սերեդա-  
յի հողվածը, ուր նա ընդգծում ե, վոր կոմու-  
նաներն ու ընկերությունները չպիտի կտրվեն  
շրջակա գյուղացիական ազգաբնակությունից,  
այլ պիտի ջանան նրա անտեսությունը բարելա-  
վել: Հարկավոր ե կոմունան այնպես դնել, վոր  
նա որինակելի դառնա և հարևան գյուղացիները  
իրենք ձգտեն դեպի նա. հարկավոր ե կարողանալ  
նրանց գործնական որինակ ցուց տալ, թե ինչ-  
պես պիտի ոգնել մարդկանց, վորոնք անտեսու-  
թյուն են վարում ապրանքի բացակայության և  
ընդհանուր քայքայման այնպիսի ծանր պայ-  
մաններում: Դրա իրականացման գործնական  
յեղանակները վորոշելու համար, հարկավոր  
ե մի խիստ մանրամասն հրահանգ մշակել,  
վորը պիտի թվի շրջակա գյուղացիական ազգա-  
բնակությանն ոգնելու բոլոր ձևերը, հարց ու



փորձ անի ամեն մի կոմունայի, թե նա ինչ է արել գյուղացիներին աշակցություն ցույց տալու համար, պիտի ձևեր ցույց տա, թե ինչպես հասնել այն բանին, վոր յերկու հազար կոմունայից և մոտ չորս հազար արտելից ամեն մեկը դառնա մի բլի՛ջ՝ ընդունակ գյուղացիներին շրջանում գործնականորեն ամրացնելու այն համոզմունքը, վոր կոլեկտիվ յերկրագործությունը, իբրև անցնումը դեպի սոցիալիզմ, ոգտակար բան է և վո՛չ քմահաճույք, վո՛չ սոսկ զառանցանք:

Յեա արդեն սասցի, վոր որենքը պահանջում է կոմունաներից ոգնություն ցույց տալ շրջակա գյուղացիական ազգաբնակչությանը: Որենքում վորևե այլ կերպ արտահայտվել, նրանում վորևե գործնական ցուցմունք տալ մե՛ք չենք կարող: Մենք պիտի սահմանեյինք ընդհանուր սկզբունքները և հույս դնեյինք, վոր տեղերում, գիտակից ընկերները բարեխղճորեն կը կիրառեն այդ որենքը և հազար յեղանակ կը կարողանան գտնել, թե յուրաքանչյուր վայրի կոնկրետ տնտեսական պայմաններում գործնականորեն ինչպես կիրառել նրան: Սակայն, հասկանալի յե, վոր ամեն մի որենք կարելի յե անտեսել, նույնիսկ այն կատարելու պատրվակով: Գյուղացիներին ոգնելու որենքն էլ՝ անբարեխղճորեն կիրառելիս՝ կարող է կատարյալ խա-

ղալիք դառնալ և բուրբուրի հակառակ հետևանքները հասնել:

Կոմունաներն այն ուղղությամբ պիտի զարգանան, վոր նրանց հետ շփվելիս՝ տնտեսական ոգնություն գտնելով՝ գյուղացիական տնտեսության պայմաններն սկսեն փոխվել, և վորպեսզի կոմունան, արտելը կամ ընկերությունը կարողանան սկիզբ դնել այդ պայմանների բարելավմանը և գործնականորեն իրականացնել այն՝ զործով ապացուցանելով գյուղացուն, վոր այդ փոփոխությունը նրանց միայն ոգուտ է բերում:

Դուք, բնականաբար, կարող եք մտածել, թե մեզ կասեն. տնտեսությունը բարելավելու համար պիտի ունենալ տարբեր պայմաններ, քան ներկա քայքայման պայմանները, մի քայքայում վոր իմպերիալիստների կողմից մեր վիզը վաթաթված չորս տարվա իմպերիալիստական և յերկու տարվա քաղաքացիական պատերազմն է առաջացրել: Այն պայմաններում, վոր մեզ մոտ գոյություն ունեն, ինչ մտածես յերկրագործական տնտեսությունների բարելավման, նրա լայն տարածման մասին, տա՛ աստված, վոր մի կերպ ղիմանանք ու սովից չմեռնենք:

Կատարելապես բնական է, վոր այդ տեսակ կասկածանքներ կարող են առաջանալ:



Բայց յեթե ինձ վիճակվեր նման առարկությունների պատասխանել՝ յես հետևյալը կասեյի: Յենթադրենք, վոր հիրավի, քայքայված սնտեսության ավերմունքի, ապրանք չլինելու, փոխադրության թույլ լինելուն, անասունների ու գործիքների վոչնչացման շնորհիվ, սնտեսության լայն բարելավումն իրականացնել չի կարելի: Կասկած չկա, սակայն, վոր մի շարք առանձին դեպքերում սնտեսության վոչ-լայն բարելավումն իրագործելի յե: Բայց յենթադրենք, նույնիսկ այդ ել չկա: Արդո՞ք դա նըշանակում է, վոր կոմունաները՝ շրջապատող գյուղացիական կյանքում փոփոխություններ մտցնել չեն կարող և չեն կարող գյուղացիներին ապացուցանել, վոր կոլեկտիվ յերկրագործական ձեռնարկությունները—արհեստական կերպով հասցրած ջերմոցի բույս չե, այլ բանվորական իշխանության մի նոր ոգնությունը աշխատավոր գյուղացիությանը, աջակցություն նրան կուլակների դեմ մղած իր պայքարում: Համոզված եմ, վոր յեթե նույնիսկ այս կերպ դրվի հարցը, յեթե ընդունենք, վոր արդի քայքայված պայմաններում բարելավման իրականացումն անհնարին է այնուամենայնիվ կոմունաներում ու արաելներում բարեխիղճ կոմունիստներ ունենալով՝ շատ ու շատ բան կարելի յե անել:

Անհիմն չլինելու համար, մատնացույց անեմ այն, ինչ մեզ մոտ քաղաքներում շաբաթորյակներ են կոչել: Այսպես են անվանել քաղաքի բանվորների ձրի աշխատանքը, վոր ավելին է՝ քան պահանջվում է յուրաքանչյուր բանվորից, և վոր մի քանի ժամվա ընթացքում նվիրված է վորևե հասարակական կարիքի: Շաբաթորյակներն առաջին անգամ մտցրին Մոսկվայում—Մոսկվայական յերկաթուղու ծառայողները: Խորհրդային իշխանության կոչերից մեկին, վորը մատնանշում եր, թե կարմիր բանակայինները ռազմաճակատներում չլսված դոհեր են տալիս և չնայած այն բոլոր տառապանքներին, վոր նրանց վիճակվում է կրել, թշնամիներ ղեմ չտեսնըված հաղթանակներ են տանում, ուր միաժամանակ ասում եր, թե այդ հաղթանակները մինչև վերջը կկարողանանք տանել միայն այն դեպքում, յեթե այդ հերոսությունը, այդ լինքնագոհությունը տեղի կունենա վո՛չ միայն ռազմաճակատներում, այլ և թիկունքում—Մոսկվայի բանվորները շաբաթորյակների կազմակերպումով պատասխանեցին այդ կոչին: Անկասկած, Մոսկվայի բանվորներին շատ ավելի տառապանք ու նեղություն է վիճակվում կրել, քան գյուղացիներին, և յեթե դուք ծանոթանաք նրանց կյանքի պայմաններին, և մտածեք, վոր նրանք այդ չի-



լաված ծանր պայմաններում կարողացան շաբաթորյակներէ իրականացումն սկսել ապա դուք կհամաձայնեք, վոր պատճառ բերելով պայմանները, վորքան ել ծանր լինեն նրանք, չի կարելի հրաժարվել նրանցից, ինչ վոր կարելի յե անել ամեն տեսակի պայմաններում, կիրառելով միևնույն եղանակը, վոր կիրառեցին Մոսկվայի բանվորները: Վոչ մի բան չնպատեց քաղաքում կոմունիստական կուսակցութեան հեղինակութունն այնպես բարձրացնելուն, անկուսակցական բանվորներէ կողմից դեպի կոմունիստները տածած հարգանքն այնպես մեծացնելուն, ինչպես այդ շաբաթորյակները, յերբ նրանք այլևս յեզակի յերևույթ չեյին և յերբ անկուսակցական բանվորները գործով տեսան, վոր տիրող կոմունիստական կուսակցութեան անդամները պարտականութուններ են կրում և կոմունիստները նոր անդամներ են ընդունում կուսակցութեան մեջ վո՛չ նրա համար, վոր նրանք կառավարչական կուսակցութեան ղրութեան հետ կապված ոգուսներով շահվեն, այլ նրա համար, վոր նրանք որինակ ցուցց տան իսկական կոմունիստական աշխատանքի, այսինքն՝ այնպիսի աշխատանքի, վոր ձրի յե տարվում: Կոմունիզմը սոցիալիզմի զարգացման բարձրագոյն աստիճանն է, յերբ մարդիկ աշխատում են այն գիտակցութեամբ, թե անհրա-

ժեշտ է աշխատել հոգուտ ընդհանուրի: Մենք գիտենք, վոր այժմ սոցիալիստական կարգեր մտցնել չենք կարող, տա աստված, վոր մեր զավակներէ, գուցե՛ և, մեր թոռներէ որով նրանք մեզ մոտ հաստատվեն: Բայց մենք ասում ենք, վոր տիրող կոմունիստական կուսակցութեան անդամներն իրենց վրա յեն առնում նաև դժվարութուններէ մեծ մասը կապիտալիզմի դեմ մղած պայքարում՝ գորակոչի յենթարկելով ամենալավ կոմունիստներին ճակատ ուղարկելու համար և պահանջելով շաբաթորյակներ կատարել նրանցից, վորոնց այդ նպատակի համար ոգտագործել չի կարելի:

Կիրառելով այդ շաբաթորյակները, վորոնք տարածումն են գտել յուրաքանչյուր խոշոր արդյունաբերական քաղաքում, վորոնց մեջ մասնակցութուն ունենալը կուսակցութունն այժմ պահանջում է իր ամեն մի անդամից, չկատարման դեպքում պատժելով նույնիսկ կուսակցութունից վտարմամբ, կոմունիստներում, արտելներում ու ընկերութուններում այդ միջոցը կիրառելով, դուք ամենավատ պայմաններում կկարողանաք և պիտի հասնեք նրան, վոր գյուղացին յուրաքանչյուր կոմունա, արտել, ընկերութուն նկատի իբրև մի միութուն, վորն աչքի յե ընկնում վոչ թե նրանով, վոր պետական նպատ է պտանում, այլ նրանով, վոր այն-



տեղ հավաքված են բանվոր դասակարգի ամե-  
նալավ ներկայացուցիչները, վորոնք վոչ միայն  
սոցիալիզմ են քարոզում ուրիշների համար, այլ  
և իրենք կարողանում են այն իրագործել, կա-  
րողանում են ցույց տալ, վոր իրենք նույնիսկ  
ամենավատ պայմաններում կարողանում են կո-  
մունիստորեն տնտեսութուն վարել և ոգնել ին-  
չով կարող են, շրջակա գյուղացիական ազգաբնա-  
կությանը: Այս կետի վերաբերմամբ վոչ մի առար-  
կութուն չի կարող լինել. այստեղ չի կարելի ար-  
դարանալ ապրանք չլինելով, սերմացուի բացա-  
կայությամբ կամ անասունների կոտորվելով:  
Սա մեզ համար ստուգումն է, վորը, համենայն  
դեպս, թույլ կտա մեզ վորոշակի ասելու, թե  
վորչափ գործնականորեն տիրել ե՞ք այն դժվա-  
րին խնդրին, վոր մենք զրել ենք մեր առաջ:

Համոզված եմ, վոր ընդհանուր ժողովը՝ կո-  
մունիստների, ընկերութունների և արտելների  
ներկայացուցիչները՝ կքննի այդ և կհասկանա,  
վոր այդ յեղանակի կիրառումը հիրավի կոմու-  
նիստների ու արտելների ամբացման գործում մեծ  
առաջդիմութուն կհանդիսանա և կհասնի այն գործ-  
նական հետևանքներին, վոր Ռուսաստանում վոչ  
մի տեղ գյուղացիների կողմից թշնամական վե-  
րաբերմունքի վոչ մի դեպք չլինի դեպի կոմու-  
նիստները, արտելներն ու ընկերութունները: Սա-

կայն դա քիչ է. հարկավոր է, վոր գյուղա-  
ցիութունը համակրանքով վերաբերվի նրանց:  
Մենք, Սորհրդային իշխանության ներկայա-  
ցուցիչներս, մեր կողմից ամեն ինչ կանենք  
վորպեսզի դրան ոգնենք և վորպեսզի միլիարդա-  
նոց ֆոնդից կամ այլ աղբյուրներից ցույց տված  
մեր պետական ոգնութունը գործադրվի միայն  
այն դեպքերում, յերբ իսկապես կսկսվի գործնա-  
կանորեն իրականացվել աշխատավոր կոմունա-  
ների ու արտելների մերձեցումը շրջակա գյու-  
ղացիների կյանքի հետ: Այս պայմաններից դուրս,  
արտելներին կամ ընկերութուններին վորևե  
ոգնութունը համարում ենք վոչ միայն անո-  
գուտ, այլ և անպայման վնասակար: Կոմու-  
նիստների տված ոգնութունը շրջակա գյուղա-  
ցիներին, չի կարելի համարել մի ոգնութուն,  
վոր առաջ է գալիս միայն առատութունից, այլ  
հարկավոր է, վոր այդ ոգնութունը լինի սո-  
ցիալիստական, այսինքն՝ գյուղացիներին հնա-  
րավորութուն տա առանձնացած, անհասակուն  
տնտեսութունից՝ ընկերայինին անցնելու: Իսկ  
այդ կարելի յե անել միայն շաբաթորյակների  
այն յեղանակով, վորի մասին այստեղ խոսեցի:

Յեթե դուք հաշվի առնեք քաղաքի բանվոր-  
ների այս փորձը, վորոնք շարժումն են սկսել  
հոգուտ շաբաթորյակների, ապրելով անչափ ավե-



լի վատ պայմաններում, քան զյուզացիները՝ ապա ես համոզված եմ, վոր ձեր ընդհանուր, համերաշխ ոգնությամբ մենք կհասնենք նրան, վոր այժմ գոյություն ունեցող մի քանի հազար կոմունստներինց ու արտելներինց ամեն մեկը կզառնա զյուզացիներին շրջանում կոմունիստական գաղափարներին ու պատկերացումներին իսկական տընկարան, գործնական որինակ, վորը ցույց կտանրանց, վոր ինքը, թեկուզ և դեռ թույլ, պըզտիկ մի ծիւե, բայց վո՛չ արհեստական և շերմոցի, այլ սոցիալիստական նոր կարգի կենդանի ծիւե: Միայն այն ժամանակ մենք հաստատուն հաղթանակ կտանենք խավարի, ավերի ու կարիքի վրա, միայն այն ժամանակ մեր առաջիկա ճանապարհին վոչ մի դժվարություն սոսկալի չի լինի մեզ համար:

(Собр. соч., т. XVI. стр. 391—400.)

Ռ. Կ. Կ. IX ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ԿՈՈՊԵՐԱՑԻԱ-  
ՅԻ ՄԱՍԻՆ ԱՐՏԱՍԱՆԱԾ ՃԱՌԸ

(3 ապրիլի 1920 թ.)

Միայն յերեկ իրիկուն ու այսօր, ինձ հաշտովեց մասամբ ծանոթանալ յերկու բանաձևերի հետ: Յես կարծում եմ, վոր կոմիսիայի փոքրամասնության բանաձևին ավելի ուղիղ ե: Ընկ. Միլյուտինը<sup>12)</sup> նրա վրա հարձակվեց սոսկալի բռուերի մեծ պաշարով, գտավ նրանում և՛ կիսատություն, և՛ նույնիսկ կիսակիսատություն, մեղադրեց նրան ոպորտունիզմի մեջ: Բայց ինձ թվում ե, թե սատանա՛, այնքան սարսափելի չե, ինչպես նկարում են նրան: Յեթե քննենք ըստ եյության հենց ընկ. Միլյուտինի փաստերը, վորն աշխատում եր հարցը սկզբունքային հողի վրա դնել, հենց պրակտիկ, գործնական ու մարքսիստական տեսակետից յերևան են բերում անճշտությունն ու անպետքությունը այն բանաձևի, վոր պաշտպանում եր ընկ. Միլյուտինը:



Այդ անճշտութիւնը հետևյալումն է կայա-  
նում: Ընկ. Միլլոտինը մատնանշում էր, վոր  
իր բանաձևում—կոմիսիայի մեծամասնության  
բանաձևում, խոսվում է կոոպերացիայի՝ վորոստի  
գործկոմի հետ միացնելու, վորոստի գործկոմին  
յենթարկելու մասին, և սրանում նա նկատում է  
իր բանաձևի շիտակութիւնն ու վճռականու-  
թիւնը համեմատած փոքրամասնության բանա-  
ձևի վոչ-բավականաչափ հեղափոխականության  
հետ: Մեր հեղափոխական կովի յերկար տարի-  
ների ընթացքում, մենք արդեն տեսել ենք, վոր  
յերբ մեր հեղափոխական գործողութիւնները  
նախապատրաստված են յեղել, նրանք պսակվել  
են հաջողությամբ. յերբ նրանք տոգորված են յե-  
ղել միայն հեղափոխական յեռանդով, նրանք  
վերջացել են անհաջողությամբ: Ի՞նչ է ասում  
կոմիսիայի փոքրամասնության բանաձևը: Փոք-  
րամասնության բանաձևը ասում է,—ուշադրու-  
թիւնդ ուղղիր այն բանի վրա, վոր սպառողական  
ընկերութիւններում ու ժեղանա կոմունիստական  
աշխատանքը և նրանցում մեծամասնութիւն  
ձեռք բերվի, նախապատրաստիր այն որգանները,  
վորոնց կոոպերացիան հանձնել էս ուզում և  
հետո կհանձնես: Համեմատեցեք սրա հետ այն  
գիծը, վոր Միլլոտինն է վարում: Նա ասում  
է՝ կոոպերացիան վատ է, ուստի հանձնեցեք այն

վորոստի գործկոմին: Իսկ դուք կոմունիստական  
բազա ունեք այդ կոոպերացիայում, վորը հանձ-  
նել եք ուզում: Գործի եյութիւնը—նախապատ-  
րաստութիւնը, անուշադրության յե առնվում:  
Տրվում է միայն վերջին լողունգը: Յեթե այդ կո-  
մունիստական աշխատանքը նախապատրաստված  
է և ստեղծված են այն որգանները, վորոնք կկա-  
րողանան վերցնել ու տանել այն, այդ դեպքում  
հանձնումը հասկանալի յե, այդ դեպքում վոչ մի  
կարիք ել չկա կուսակցության համագումարում  
ազդարարել այն: Բայց դուք քիչ եք ձեռք բարձ-  
րացրել գյուղացիների վերաբերմամբ: Հենց նույն  
ժ. Տ. Բ. Ս. ը կտավատը հավաքելու գործում քիչ  
է ձեռք բարձրացրել գյուղացիութիւնն ու կոոպե-  
րացիայի վրա: Յեթե դուք վերհիշեք մեր տեղի և  
ժողկոմխորհի աշխատանքի գործնական փորձը՝  
դուք կասեք, վոր գործին այդ կերպ մոտե-  
նալը սխալ է, և ուղիղ է այն բանաձևը, վորն  
ասում է, թե անհրաժեշտ է կոմունիստական  
դաստիարակութիւնն աշխատա՞քը և աշխատա-  
վորների կազրի նախապատրաստումը, առանց  
վորի հանձնումն անհնարին է:

Յերկրորդ հիմնական խնդիրը՝ սպառողական  
կոոպերացիայի հետ կապվելն է: Այստեղ ընկ.  
Միլլոտինը արտակարգ անհետևողականութիւն  
է ցույց տալիս: Յեթե սպառողական կոոպերա-



ցիան բոլոր խնդիրները չի կատարում, այսինքն  
այն, ինչի մասին յերկու տարի յե վոր խոսվում  
ե գյուղական կուլակների դեմ ուղղված մի ամ-  
բողջ շարք դեկրետներում, այդ դեպքում հարկա-  
վոր ե հիշել վոր իշխանության այն միջոցները,  
վոր մենք ունենք կուլակի դեմ, ուղղված են  
նաև սպառողական կոոպերացիայի դեմ: Յեվ այդ  
երագործվում ե լիովին: Այժմ ամենից գլխավորն  
ե բարձրացնել արտադրությունն ու պրոդուկտնե-  
րի քանակը: Յեթե սպառողական կոոպերացիան  
չի կարողանա այդ անել, այդ դեպքում դրա հա-  
մար նա կպատժվի: Իսկ յեթե նա կապված լի-  
նելով արտադրական կոոպերացիայի հետ, թեկուզ  
քիչ չափով կշատացնի պրոդուկտները, հարկավոր  
ե խոնարհվել նրա առաջ և դարգացնել նրա նա-  
խաձեռնությունը: Յեթե սպառողական կոոպե-  
րացիան, չնայած արտադրության հետ ունեցած  
ավելի սերտ տեղական կապին, չի կարողանա  
ավելացումն տալ—նշանակում ե՝ նա չի կատա-  
րել Սորհրդային իշխանության ուղղակի խնդի-  
րը: Յեթե կա գավառում գոնե յերկու-յերեք  
յեռանդոս ընկեր՝ պատրաստ կովելու կուլակ-  
ների ու բուրժուազիայի դեմ, այդ դեպքում  
գործը շահված ե: Իսկ վորտեղ ե յետ մղված  
ընկ. Չուչինի<sup>13</sup>) նախաձեռնությունը: Նա վոչ  
մի որինակ չբերեց: Բայց այն միտքը, թե

արտադրական կոոպերացիան հարկավոր ե կա-  
պել սպառողականի հետ ու ամեն տեսակ զի-  
ջումներ անել, միայն թե ամենամոտ ապագա-  
յում պրոդուկտների քանակը ավելանա, այդ միտ-  
քը բղխում ե մեր յերկու տարվա փորձից: Այդ  
միտքը ամենևին չի խանգարում վո՛չ կոմու-  
նիստական, վո՛չ խորհրդային աշխատավորներին  
կուլակային, բուրժուազական տիպի կոոպե-  
րացիայի դեմ մղված կովում: Նա վոչ մի-  
այն չի խանգարում, այլ նոր դենք ե տալիս  
նրանց ձեռքը: Յեթե դու կարող ես վորևե բան  
կազմակերպել՝ մենք քեզ մրցանակ կտանք, իսկ  
յեթե այդ խնդիրը չես կատարի՝ մենք քեզ կծե-  
ծենք վոչ միայն նրա համար, վոր դու հակա-  
հեկափոխական ես,—դրա համար կա Չեկա, ինչ-  
պես նկատեցինք այստեղ,—վո՛չ, մենք քեզ կծե-  
ծենք նրա համար, վոր դու չես կատարում պե-  
տական իշխանության, Սորհրդային իշխանու-  
թյան ու պրոլետարիատի աված խնդիրները:

Սպառողական կոոպերացիաների միացման  
դեմ ընկ. Միլյուտինը վոչ մի գործնական փաստ  
չբերեց,—միայն մասնանշեց, թե այդ նրան  
ոպորտունիզմ կամ կիսատություն ե թվում:  
Տարրերնակ ե, վոր այդ բանը լսում ենք ընկ.  
Միլյուտինից, վորը պատրաստվում եր ընկ. Ռի-  
կովի հետ խոշոր քայլեր անել և համոզվեց, վոր



մի տասներորդական քայլ ել անել չի կարող: Այդ կողմից սպառողական կոոպերացիայի հետ կապը — մի պլյուս ե, նա հնարավորութունն է տալիս իսկույն և եթ արտադրութեան ձեռնարկել: Քաղաքական աշխատանքին միջամտելու դեմ բոլոր միջոցները տրվում են, իսկ արտադրական ու տնտեսական տեսակետներից յենթարկելը ամբողջովին կախված է Հոլժողկոմատից, ժ. Տ. Ս.-ից: Բոլոր այդ միջոցներն ունենք այն չափով, վոր դուք կարող եք հսկել կոոպերացիային:

Այժմ մոտենում ենք յերրորդ հարցին — պետականացման հարցին, վորը Միլյուտինն այդպես պաշտպանում եր, — այդ պաշտպանութունը շատ տարրինակ եր լսել: Հանձնախումբ կազմվեց, և ընկ. Կրեստինսկու տեսակետը կոմիսիայում պաշտպանութուն գտավ փոքրամասնութեան կողմից, իսկ ընկ. Միլյուտինը հաղթող դուրս յեկավ, բայց նա այժմ ասում ե. «ինչ վերաբերում ե պետականացմանը՝ համաձայն եմ չվիճել»: Իսկ ի՞նչու յեր այդ դեպքում հանձնախումբը վիճում: Յեթե դուք նայում եք այնպես, ինչպես նայում ե ընկ. Չուչինը, այդ դեպքում դուք իրավացի չեք, հրաժարվելով պետականացումից: Այստեղ ասում եյին. «Յեթե ազգայնացրինք կապիտալիստներին՝ ի՞նչու չի կարելի ազգայնացնել կուլակներին»: Բայց ի-

դուք տեղը չեք, վոր այդ փաստն այստեղ ծիծաղ առաջացրեց: Յեվ հիրավի, ինչպես ել հաշվելու լինենք ունեվոր գյուղացիներին, վորոնք առանց ուրիշի աշխատանքը շահագործելու չեն կարող յուր գնալ, այնուամենայնիվ նրանք կես միլիոնից քիչ չեն, իսկ կարող ե պատահել, նույնիսկ մոտ մի միլիոն. և ի՞նչպես կարող ենք նրանց ազգայնացնել: Դա ֆանտազիա յե: Դրա համար մենք այժմ ուժ չունենք:

Ընկ. Չուչինը բոլորովին իրավացի յե, ասելով, թե կոոպերացիայում հակահեղափոխականները մի ամբողջ շարք ե նստած, բայց այդ այն յերգից չե: Այստեղ արդարացի կերպով ասեցին Չեկա-ի մասին: Յեթե շնորհիվ ձեր կարծատեսութեան չեք կարողանում կոոպերացիայի առանձին ղեկավարներին մերկացնել, այդ դեպքում նստեցրեք այնտեղ մի կոմունիստ, վորպեսզի նա գտնի այդ հակահեղափոխութունը, և յեթե նա լավ կոմունիստ ե, իսկ լավ կոմունիստը միևնույն ժամանակ լավ ել չեկիստ ե, ապա մտնելով սպառողական ընկերութեան մեջ՝ այնտեղից պիտի քարշ տա-բերի, գոնե, յերկու հակահեղափոխական կոոպերատոր:

Ահա, թե ինչու ընկ. Չուչինն անմիջական պետականացման իր քարոզով իրավացի չե: Այդ լավ կլիներ, բայց անհնարին ե, այն պատճառով



վոր մենք գործ ունենք մի դասակարգի հետ, վորը մեզ համար ավելի քիչ մատչելի յե և վոչ մի դեպքում ազգայնացման չի յենթարկվում: Արդյունագործական ձեռնարկությունները բոլորը չենք ազգայնացրել: Մինչև վոր գլխավոր կոմ. - ի և կենտրոնների անուսից հրամանը տեղ ե հասնում նա բորբուկին անգոր ե դառնում, նա բորբուկին խեղդվում ե չգիտեմ, թղթերի ծովի մեջ, թե՛ ճանապարհների, հեռագրի բացակայության և այլնի շնորհիվ: Ուստի և այժմ հնարավոր չե կոպերացիայի ազգայնացման մասին խոսել:

Ընկ. Միլյուտինն իրավացի չե նաև սկզբունքորեն. նա զգում ե, վոր թույլ ե ու մտածում ե, թե այդ կետը կարելի յե ուղղակի դուրս ձգել... Բայց այդ դեպքում դուք, ընկ. Միլյուտին, տակից կտրում եք ձեր բանաձևը, դուք վկայական եք տալիս վոր փոքրամասնության բանաձևն իրավացի յե, վորովհետև ձեր բանաձևի վորդին—յենթարկել վոլոստի գործկոմին (առաջին կետում հենց այդպես ել ասվում ե «միջոցներ ձեռք առնել») — չեկիստական վոգի յե, վոր սխալ կերպով մտքրած ե անաեսական հարցի մեջ: Մյուս բանաձևն ասում ե, թե առաջին հերթին հարկավոր ե կոմունիստների թիվը շատացնել, ուժեղացնել կոմունիստական պրոպագանդն ու ագիտացիան, թե հարկավոր ե բազիս ստեղծել:

Այստեղ առանձնապես մեծադրորդ վոչինչ չկա, մի անգամից կաթ ու մեղր հոսող գետեր չեն խոստացվում: Բայց յեթե տեղերում կոմունիստներ կան նրանք գիտեն, թե ինչ ե հարկավոր անել, և կարիք չի լինի ընկ. Չուչինին ել պարզաբանել, թե ո՛ւր պիտի քարշ տալ հակահեղափոխականներին...

Յերկրորդը—հարկավոր ե որդան նախապատրաստել: «Որդան նախապատրաստիր ու գործի մեջ ստուգիր այն, ստուգիր՝ ավելանում ե արտադրությունը, թե՛ վոչ».— ահա, թե ինչ ե ասում փոքրամասնության բանաձևը: Ամենից առաջ բազա ստեղծիր, իսկ հետո, հետո կտեսնենք... Ինչ վոր հարկավոր ե, ինքն ըստ ինքյան առաջ կգա դրանից: Վոր հակահեղափոխականներին հարկավոր ե Չեկա ուղարկել, իսկ յեթե Չեկա չկա՝ հեղկոմ—սրա մասին բավականաչափ առատությամբ գեկրետներ կան: Այդ տեսակի ցուցումներն հարկավոր ե մի քիչ պակսեցնել: Հարկավոր ե ընդունել փոքրամասնության բանաձևը, վորը հիմնական գիծն ե տալիս:

(Сообр. соч , т. XVII, стр. 91—94.)



Ռ. Կ. Կ. X ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ԱՐՏԱՍԱՆԱԾ  
ՃԱՌԻՑ

(Մարտ 1921 թ.)

... Այժմ մի քանի խոսք տեղական տնտեսական շրջանառության մասին: Նախապես պիտի շոշափեմ կոոպերացիայի հարցը: Իհարկե, տեղական տնտեսական շրջանառության դեպքում կոոպերացիան մեզ հարկավոր է պահպանել: Մեր ծրագրում ընդգծվում է, վոր բաշխման համար ամենալավ ապարատը, վոր մնացել է կապիտալիզմից— դա կոոպերացիան է և վոր այդ ապարատն հարկավոր է պահպանել: Այդ ասված է ծրագրում: Ոգտագործել ենք արդյոք կոոպերացիան: Շատ անբավարար, դարձյալ մասամբ սխալի, մասամբ պատերազմական կարիքի հետևանքով: Կոոպերացիան ավելի անտեսուհակ, տնտեսական տեսակետից ավելի բարձր տարրեր արտադրելով, հենց զբաղում քաղաքականության մեջ մենշևիկներ ու սոց. հեղ. եր արտադրում: Սա քիմիական որենք է, այստեղ վոչինչ չես կարող անել... Մենշևիկներն ու սոց. հեղ. ը մարդիկ են,

վորոնք զիտակցորեն թե անզիտակցորեն վերականգնում են կապիտալիզմը և ոգնում Յուզենիչներին: Այս ել որենք է: Մենք զբաղեմ պիտի պատերազմենք: Ուրեմն—պատերազմել ըստ պատերազմական պահանջների: Մենք պիտի պաշտպանեյինք մեզ և մենք մեզ պաշտպանեցինք: Բայց կարելի՞ յե անպայման ներկա դրության մեջ մնալ: Անկարելի յե: Չեռները կապելն անպայման սխալ կլինի: Ահա թե ինչու կոոպերացիայի հարցի վերաբերմամբ առաջարկում եմ մի բանաձև, վորը շատ կարճ է, յես կկարդամ այն.

«Նկատի ունենալով, վոր Ռ. Կ. Կ. IX համագումարի բանաձևը դեպի կոոպերացիան ունենալիք վերաբերմունքի մասին ամբողջովին կառուցված է հավասարաբար բաշխման սկզբունքի ճանաչման վրա, վորն այժմ փոխարինվում է բնատուրքով՝ Ռ. Կ. Կ. X համագումարը վորոշում է.

Մատնանշված բանաձևը վերացնել:

Համագումարը հանձնարարում է Կ. Կ. եյին մշակել և կուսակցական ու խորհրդային կարգով իրագործել վորոշումներ, վորոնք բարելավեյին ու զարգացնեյին կոոպերատիվների կազմն ու գործունեյությունը, համաձայն Ռ. Կ. Կ. ծրագրին և հավասարաբար բաշխումը բնատուրքով փոխարինելուն»:



Ստեփանն ԸՄ համագումարի բանաձևը կապում է մեր ձեռքերը, նա ստում է. «Յենթարկել Պարենկոմին»: Պարենկոմը շատ լավ հիմնարկ է, բայց կոոպերացիան անսպալման յենթարկել նրան և մեր ձեռքերը կապոտել, յերբ վերաքննում ես դեպի մանր յերկրագործներն ունենալիք վերաբերմունքը, կնշանակի քաղաքականորեն ակներև սխալ գործել: Մենք պետք է հանձնարարենք ընտրված Կ. Կ. մշակել ու սահմանել միջոցներն ու փոփոխությունները: Մենք այդ տեսակետից, թերյապես սսած, կանգնած ենք մի մաբողջ շարք անցողական սստիճանների, անցողական միջոցների առաջ: Մի՛ բան մեզ համար պարզ է—ԸՄ համագումարի բանաձևը յենթարկում էր, թե մեր շարժումն ուղիղ գծով է գնալու: Պարզվեց, ինչպես պարզվում էր շարունակ հեղափոխությունների ամբողջ պատմության մեջ, վոր շարժումը գնաց զիգզագներով: Այդպիսի բանաձևով մեր ձեռքերը կապելը—քաղաքական սխալ է: Վերացնելով այն, մենք ստում ենք, թե հարկավոր է զեկավարվել մի այնպիսի ծրագրով, վորն ընդգծում է կոոպերատիվ ապարատի նշանակությունը:

Վերացնելով այն, մենք ստում ենք—հարմարվեցեք հավասարաբ բաշխումը հարկով փոխարինելուն: Բայց յե՞րբ գործադրենք այդ.—վոչ շուտ,

քան հունձը, այսինքն՝ մի քանի ամսից հետո: Միատեսակ կլինի դա զանազան վայրերում: Վոչ մի զեպըում: Կենտրոնական Ռուսաստանը, Ուկրայինան, Սիբիրը շարունացնելը, նրանց վորոշ շաբլոնի յենթարկելը ամենամեծ հիմարությունը կլինի: Յես առաջարկում եմ, տեղական շրջանառության ազատության այդ հիմնական միտքն ընդունել իբրև համագումարի վորոշում: Մտածում եմ, թե սրանից հետո, մոտ որերս անսպալման Կ. Կ. նամակը կլինի, վորը կասի և, իհարկե, նա այդ բանը կասի ավելի լավ, քան յես եմ ստում այժմ. «վոչ մի բան մի կոտրեք, մի՛ շտապեք, հապճեպ կերպով խելքներիդ զու մի՛ տվեք, վարվեցեք այնպես, վոր ամենամեծ չափով բավարարեք միջակ գյուղացիությանը, առանց խախտելու պրոլետարիատի շահերը: Փորձեցեք այս, փորձեցեք մյուսը, ուսումնասիրեցեք գործնական փորձով, հետո հաղորդեցեք մեզ և սսացեք—ի՛նչ աջողվեց ձեզ, իսկ մենք կստեղծենք հատուկ հանձնախումբ կամ նույնիսկ մի քանի հանձնախմբեր, վորոնք հաշվի կառնեն հավաքված փորձը: Հետո փորձի հիման վրա ընթանալու համար, մենք տասն անգամ պիտի ստուգենք ընդունված միջոցները»:

Մեզ հարց կտան և կուզենան իմանալ—վո՞ր-



տեղից ապրանք ձեռք բերել: Այժմ կարող ենք վորովհետև մեր տնտեսական դրությունը միջազգային մաշտաբով մեծ չափով լավացել է: Թե ի՞նչպես պիտի կարողանանք այդ անել,— դա այլ հարց է, բայց վորոշ հնարավորություն կա:

Կրկնում եմ, տնտեսական հարաբերությունների տիպը, վոր ստանում է գաղնակից պետու- ների այս բլովը՝ վերևում, պրոլետարական պե- տական իշխանության համար հնարավորություն կատեղծի գյուղացիության հետ ազատ շրջանա- ություն հաստատելու՝ ներքևում: Յես զիտեմ, այդ մասին ինձ արդեն վիճակվել է խո- սել, վոր դա վորոշ հեղնանք էր առաջացնում: Մոսկվայում կա մտավորական-բյուրոկրատիկ մի ամբողջ խավ, վորն աշխատում է «հասարակա- կան կարծիք» ստեղծել: Նա սկսել է զվարճա՛ւալ — ա՛յ քեզ կոմունիզմ, վոնց վոր մի մարդ անթացուպերով, իսկ զեմքի փոխարեն ամբող- ջովին վերակապ և ահա այդ կոմունիզմից հանելու- կային պատկեր է մտնում: Այս տեսակի կատակներ բավականաչափ լսել եմ, սակայն այդ կատակները կամ բյուրոկրատիկ են, կամ վոչ լուրջ: Ռու- սաստանը պատերազմից այնպիսի դրությամբ դուրս յեկավ, վոր ամենից շատ նման է այն մարդու դրությանը, վորին ծեծել են մինչև կի-

սամահ դարձնելը, 7 տարի ծեծել են նրան, և աս- տված տա վոր անթացուպերով կարողանա շար- ժվել: Ահա թե ինչ դրության մեջ ենք մենք: Մտածել, թե առանց անթացուպերի կարող ենք դուրս գալ, կնշանակի վոչինչ չհասկանալ: Քանի մյուս յերկիրներում հեղափոխություն չկա, մենք տասնամյակներ պիտի անթացուպերով դուրս գանք և այս դեպքում ցավ չէ մեր անբավ հարս- տություններից, հում նյութերի մեր հարուստ աղբյուրներից հարյուր միլիոններ, մինչև իսկ միլիարդներ զիջել, միայն թե խոշոր, առաջավոր կապիտալիզմի ոգնությունը ստանանք: Հետո, մենք մի բան ել ավելի յետ կբերենք: Իսկ պրոլե- տարական իշխանությունը պահել չլաված չափով ավերված մի յերկրում, վորի մեջ գյուղացիությու- նը հսկայական գերակշռություն ունի, և նույնպես ավերված է, այդպիսի մի յերկրում առանց կապի- տալի ոգնության, վորի համար իհարկե, նա հար- յուրավոր տոկոսներ կկորզի— անկարելի յե: Այդ բանը հարկավոր է հասկանալ: Այդ պատճառով ել, կամ տնտեսական հարաբերությունների այս տիպը, կամ վոչինչ: Ով այլ կերպ է դնում հարցը, գործնական տնտեսությունից կատարելապես վոչինչ չի հասկանում և ոճիք է թափ տալիս այս կամ այն սրախոսությամբ: Պիտի ընդունել այն փաստը ինչպիսին հոգնածությունն " ուժաս-



սպառութիւնն ե: Պատերազմի յոթ տարիները  
ինչպիսի ազդեցութիւն պիտի գործեյին, յեթե  
պատերազմի չորս տարին առաջավոր յերկրներ-  
ըում մինչև որս ել իրենց զգացնել են տալիս:

Իսկ մեզ մոտ, մեր յետամնաց յերկրում,  
ոթնամյա պատերազմից հետո— ուղղակի ու-  
ժասպառ զրութիւնն ե ստեղծվել: Ուժասպառու-  
թիւնը մի գրութիւնն ե, վոր մոտ ե աշխատելու  
լիակատար անկարելիութիւնը: Այստեղ հարկա-  
վոր ե սնտեսասպես շունչ առնել: Յես կկարգամ  
յայն տեղեկանքը, վոր ստացել եմ ընկ. Լեժա-  
վայից<sup>14</sup>): Այդ տեղականքից իմանում ենք, վոր մի  
քանի հարյուր հազար փութ պարենավորման  
զանազան առարկաներ արդեն գնված են և ամե-  
նաշտապ կարգով գալիս են Լիտվայից, Ֆինլանդիա-  
ից և Լատվիայից: Այսոր տեղեկութիւնն ե ստա-  
ցված, վոր Լոնդոնում ստորագրված ե գոր-  
ծարք 18<sup>1</sup>/<sub>2</sub> միլ. փութ քանակութեամբ ա-  
ծուխի, վորը վորոշել եյինք գնել Պիտերի և  
տեքստիլ արդյունագործութիւնը կենդանացնե-  
լու նպատակով: Յեթե մենք գյուղացու համար ապ-  
րանքներ ստանանք, դա իհարկե, ծրագրի խախ-  
տումն ե, դա անկանոնութիւնն ե, բայց հարկա-  
վոր ե թողնել, վոր շունչ քաշվի, վորովհետև ոժ-  
ղովորդը այնքան ե հոգնել վոր, այլապես, նա  
աշխատել անկարող ե:

Պիտի ասեմ նաև անհատական ապրանքափո-  
խութեան մասին: Յեթե խոսում ենք շրջանառու-  
թեան ազատութեան մասին դա նշանակում ե ան-  
հատական ապրանքափոխանակութիւնն, այսինքն  
նշանակում ե խրախուսել կուլակներին: Ուրեմն ի՞նչ  
անել: Չպիտի աչք փակել, վոր հավասարաբ բաշ-  
խումի փոխարինումը հարկով, նշանակում ե այն,  
վոր կուլակութիւնը տվյալ հասարակակարգից պի-  
տի աճի ավելի շատ, քան մինչև որս: Նա պիտի  
աճի այնտեղ, ուր առաջ աճել չեր կարողա-  
նում: Բայց դրա գեմ չպիտի կովել արգելիչ մի-  
ջոցներով, այլ պետական միասնացումով և պե-  
տական միջոցներով: Յեթե դու կարող ես պե-  
տութեանը մեքենաներ տալ, դրանով դու կբար-  
ձրացնես նրան, և յեթե դու մեքենաներ կամ ելեք-  
տրականութիւնն ստա, այն ժամանակ տասնյակ  
ու հարյուր հազարավոր մանր կուլակներ կսպան-  
վեն: Քանի չես կարող այդ տալ, վորոշ քանա-  
կութեամբ ապրանք տուր: Յեթե նրանք քո ձեռ-  
քում են—դու պահում ես իշխանութիւնը, բայց  
կանգնեցնել, սպանել, դեն շարտել այդ հնարա-  
վորութիւնը—նշանակում ե խլել շրջանառու-  
թեան ամեն մի հնարավորութիւնն, նշանակում  
ե չբավարարել միջակ գյուղացիութեանը: Գյու-  
ղացիութիւնն Ռուսաստանում ավելի շատ մի-  
ջակ ե դարձել, և պատճառ չկա վախենալու, թե



ըրջանառությունն անհատական կղաննա: Ամեն  
մեկը փոխարենը կըկարողանա պետութեանը վո-  
րևե բան տալ: Մեկը կարող ե տալ ավելորդ  
հացը, մյուսը բանջարանոցային մթերքներ  
կտա, յերրորդը՝ աշխատանքի պահկությու-  
նը: Հիմնականում դրությունն այնպես ե, վոր  
մենք սնտեսապես պիտի բավարարենք մի-  
ջակ գյուղացիութեանը և համաձայնենք ըրջա-  
նառութեան ազատութեանը, այլապես, յերբ մի-  
ջագոյին հեղափոխությունն ուշանում ե, պրո-  
լետարիատի իշխանությունն Ռուսաստանում  
պահպանել չենք կարողանա: Այս լանը պիտի  
ստորդ գիտակցել և ամենևին չվախենալ դրա  
մասին խոսելուց: Նախագծում, դուք կտեսնեք  
չհամաձայնացրած շատ բան, կան հակասու-  
թյուններ, այդ պատճառով ել վերջում մենք  
գրել ենք. «Համագումարը՝ հիմնականում իր հա-  
վանությունը տալով հովասարար բաշխումը բնա-  
տուրքով փոխարինելու առթիվ Կ. Կ. առա-  
ջարկած դրություններին, հանձնարարում ե կու-  
սակցութեան Կ.Կ.-ին ամենաշտապ կարգով հա-  
մաձայնացնել այդ դրությունները»: Մենք գիտենք,  
վոր նրանք համաձայնեցրած չեյին, մենք չե-  
յինք կարողանա հասցնել այդ, մենք այդ ման-  
րամասն աշխատանքին ձեռք չենք զարկել:  
Հարկն իրականացնելու ձևերը մանրամասն կմշա-

կի և համապատասխան որենքը կընդունի համա-  
ուսական Կ. Գ. Կ. և ժողովրդական կոմիսար-  
ների խորհուրդը: Յեթե դուք այսոր ընդունեք,  
այս այդ դեպքում նա կվորոշվի համառուս. Կ.  
Գ. Կ. առաջին սեսիային, վորը նույնպես վոչ  
թե որենք, այլ միայն ձևափոխված կանոնա-  
դրություն կհրատարակի, ապա ժողովուրդն  
ու Աշխատանքի և Պաշտպանութեան խորհուրդը  
դա որենք կգարձենն, և վոր ավելի կարևորն ե  
— գործնական հրահանգներ կտան: Կարևոր ե,  
վոր տեղերում սրա նշակությունն հասկանան և  
մեզ ընդառաջ գան:

Ինչու հարկավոր եր, վոր հովասարար բաշ-  
խումը հարկով փոխարինեյինք: Հավասարար  
բաշխումը յենթադրում եր վերցնել բոլոր ավե-  
լցուկները, պարտադիր պետական մենաշնորհ  
ստիմանել: Մենք այլ կնրպ վարվել չեյինք կա-  
րող, մենք ծայրանդ կարիք ունեյինք: Թեոր-  
յապես սա պարտադիր չե, սոցիալիզմի տեսա-  
կետից պետական մենաշնորհը ասենալով միջոցն  
ե, սակայն իբրեվ անցողական մի միջոց այն գյուղա-  
ցիական յերկրում, վորն արդյունագործություն ունի  
յեվ վորի արդյունագործությունն աշխատում ե: Յեվ  
յեթե վորոշքանակութեամբ ապրանքկա, հնարավոր  
ե հարկի և ազատ ըրջանառութեան սիստեմը կի-  
բառել: Հենց այդ ըրջանառությունը — խիտան,



դրդիչ, զարկ և գյուղացու համար: Տերը կարող է  
և պիտի ջանք գործ դնի իր սեփական շահի հա-  
մար, վորովհետև նրանից ամբողջ ավելցուկը չեն  
առնի, այլ միայն հարկը, վորն ըստ հնարավո-  
րության նախապես վորոշված կլինի: Հիմնականն  
այն է, վոր մանր յերկրագործին խթան, դրդիչ,  
զարկ լինի: Մենք մեր պետական տնտեսությունը  
պիտի կառուցենք համաձայն միջակ գյուղացու  
տնտեսություն, վորը յերեք տարվա ընթացքում  
չկարողացանք փոփոխել, և ելի տասը տարի փո-  
փոխել չենք կարողանալու: Պետության առաջ  
վորոշ պարենավորական պարտականություն էր  
կանգնած: Մեր հավասարար բաշխումն անցյալ  
տարի մեծացրվեց: Հարկն ավելի քիչ պիտի լինի:

Յեթե հունձը վատ լինի, ավելցուկները չի  
կարելի վերցնել, վորովհետև ավելցուկ չի լինի:  
Հարկ կլինի դրանք գյուղացու բերնից վերցնել:  
Յեթե հունձը վատ լինի—բոլորն էլ մի քիչ քաղցա-  
ծություն կբաշխեն, և—պետությունը կփրկվի, կամ,  
յեթե չկարողանանք վերցնել մարդկանցից, վորոնք  
անկարող են կուշտ ուտել, պետությունը կկործան-  
վի: Սա մեր պրոպագանդի խնդիրն է, վոր պետք  
է իրագործենք գյուղացիների մեջ: Յեթե հուն-  
ձը տանելի յե—մինչև կես միլիարդ ավել-  
ցուկ կմնա: Դա սղառումը կծածկի և վորոշ  
ֆոնդ կտա: Ամբողջ խնդիրը նրանումն է, վոր

գյուղացիներին տնտեսության տեսակետից խը-  
թան, դրդիչ տրվի: Պիտի ասել գյուղական  
տնտեսության տիրոջը—դո՛ւ տեր, տո՛ւր մը-  
թերքները, իսկ պետությունը նվազագույն  
հարկն է վերցնում: Այդ պատճառով էլ առա-  
ջարկում ենք բանաձևն ընդունել իբրև հիմք  
և հանձնարարում ենք համաձայնեցնել այն: Տե-  
ղերի աշխատավորները կջանան համաձայնեցնել  
ու լրացնել: Մինչև վերջ համաձայնեցնել ան-  
հնար է, դա անլուծելի խնդիր է, վորովհետև  
կյանքը չափազանց խայտաբղետ է: Անցողական  
միջոցներ վորոնելը—շատ դժվարին խնդիր է:  
Չաջողվեց արագ և ուղղադիժ կատարել այդ—  
մենք չենք վհատվի, մենք մերը կվերցնենք:  
Ինչ շատ գիտակից գյուղացին չի կարող չհաս-  
կանալ, վոր մենք, իբրև կառավարություն, ներ-  
կայացնում ենք բանվոր դասակարգն ու այն աշ-  
խատավորներին, վորոնց հետ կարող են համա-  
ձայնել աշխատավոր գյուղացիները (իսկ նրանք  
<sup>9/10</sup>ին), վոր ամեն մի դարձը դեպի յետ  
կնշանակի վերադարձ դեպի հին ցարական կա-  
ռավարությունը: Կրոնշտադտի<sup>15)</sup> վորձն այդ է  
ցույց տալիս: Այնտեղ չեն ցանկանում սպիտակ  
գվարդիականներին, իսկ ուրիշ իշխանություն  
չկա, մեր իշխանությունը չեն ցանկանում, և  
կանգնել մնացել են այնպիսի դրության մեջ,



վորն ամենալավ ազիտացիա յե հանգիսանում հոգուտ մեզ և ընդդեմ ամեն տեսակի նոր կառավարութեան:

Մենք այժմ գյուղացիների հետ համաձայնելու հնարավորութեան ունենք, և այդ պիտի գլուխ բերել գործնականորեն, հմտորեն, ուշիմ կերպով և ճկնութեամբ: Մենք գիտենք Պարենկոմի մեր ապարատը, մենք գիտենք, վոր նա մեր ամենալավ ապարատներից մեկն է, և նա պիտի պահպանվի, բայց ապարատը պիտի յենթարկվի քաղաքականութեանը: Ինչներիս է պետք ամենաքանչեւի պարենկոմի ապարատը յեթե մենք չկարողանանք մեր հարաբերութեանը գյուղացիները հետ կարգի ձգել: Այն դեպքում այդ ամենաքանչեւի ապարատը մեր դասակարգին չի ծառայի, այլ Դենեկինին ու Կոլչակին: Յերբ քաղաքականութեանը վճռական փոփոխումն, ճկունութեան, հուտանցումն է պահանջում, դեկավարներն այդ պիտի հասկանան: Հաստատուն ապարատը պիտանի պիտի լինի ամեն տեսակի մանեովրդների համար: Իսկ յեթե ապարատի հաստատունութեանը քարացում է դառնում, խանդարում է թեքումներ կատարելուն, այն ժամանակ պայքարն անխուսափելի յի: Ուստի և բոլոր ուժերը պիտի գործ դնել, վոր անսպաժամ հասնենք մեր ուղածին, հասնենք ապարատը լիովին քաղաքա-

կանութեանը յենթարկելուն: Քաղաքականութեանը՝ հարաբերութեանն է դասակարգերի միջև—նա յե վճռում Հանրապետութեան բախտը: Ապարատը, իբրև ոժանդակիչ միջոց, քանի ավելի պինդ է, այնքան ավելի լավ ու պիտանի յե մանեովրդների համար: Իսկ յեթե նա անկարող է այդ կատարել՝ նա բոլորովին անպետք է: Յեվ յես հրավիրում եմ ձեզ ի նկատի ունենալ հիմնականը—վոր հավասարաբ քաղաքում իր մանրամասներով ու մեկնաբանութեաններով—մի քանի ամսվա աշխատանք է: Իսկ այժմ մենք ի նկատի պիտի ունենանք հիմնականը, հարկավոր է, վոր հենց այս յերեկո, ռադիով, աշխարհի բոլոր ծայրերն ուղարկվի այն, վոր, կառավարչական կուսակցութեան համագումարը հիմնականում հավասարաբ քաղաքում փոխարինում է հարկով, դրանով մանր յերկրագործին մի ամբողջ շարք խթաններ տալով տնտեսութեանը լայնացնելու, ցանքսը մեծացնելու, վոր համագումարը վրաք դնելով այդ ճամբան ուղղում է պրոլետարիատի ու գյուղացիութեան միջև յեղած հարաբերութեանների սիտեմը և վստահութեան հայտնում վոր այդ ճանապարհով կիրականա՞յա պրոլետարիատի ու գյուղացիութեան հաստատուն կապը:

(Собр. соч., т. XVIII, стр. 142—147.)



### ՅԵՉՐԱՓԱԿԾԱՆ ԽՈՍՔ

(15 մարտի 1921 թ.)

Ընկերներ, յես կցանկանայի հենց սկզբից մի քանի խոսք ասել կոոպերացիայի մասին: Ընկ. Յյուրուպայի<sup>(16)</sup> զեկուցումը, ինչպես նա ինքը հայտարարեց և ինչպես մենք բոլորս այստեղ լսեցինք, զեկուցողի կողմից համազեկույց չէր — սկզբունքորեն այլ տեսակետ հակադրելու իմաստով: Կ. Կ. վորոշումը հավասարաբ քաշխումը հարկով փոխարինելու մասին այնքան միասիրտ էր, և, վոր գլխավորն է, մենք դեռ համազումարի աշխատանքների բացումից առաջ մի անգամից տեսանք վոր, սեղերում զանազան ընկերներ անկախ սրանից, գործնական փորձի ցուցումների հիման վրա, յեկել են նույն յեզրակացություններին — վոր, ըստ էյության, անհնար է կասկածել այդ միջոցի նպատակահարմարության ու անհրաժեշտության վրա և ընկ. Յյուրուպայի զեկուցումը մի շարք հարցերի վերաբերմամբ լրացումների ու նախադրուշացումների էր հան-

գում, բայց այլ քաղաքականության առաջարկությունն չէր պարունակում:

Ընկ. Յյուրուպայի զեկուցման մեջ ընդհանուր գծից շեղումն էր հանդիսանում միայն կոոպերացիայի հարցը: Այստեղ, ընկ. Յյուրուպան առարկում էր ընդգեմ իմ առաջարկած բանաձևի, սակայն ինձ թվում է, թե նրա առարկությունները համոզիչ համարել չի կարելի: Ինչ կերպ պիտի զարգանան տեղական ազատ տնտեսական շրջանառության հարաբերությունները — կոոպերացիայի միջոցով, թե մանր, մասնավոր առևտուրը վերականգնելու ճանապարհով, — մենք հազիվ թե այժմ այդ կարող ենք վերջնական կերպով վորոշել: Այդ հարցը հարկավոր է քննել, — սա անկասկած է, — և այդ տեսակետից մենք ուշադրությամբ պիտի դիտենք տեղական փորձը, սրան, իհարկե, մենք բոլորս կը համաձայնենք: Կարծում եմ սակայն, թե կոոպերացիայի վորոշ առավելությունը մնում է: Յեթե նա քաղաքականորեն, ինչպես արդեն մատնացույց եմ արել, ծառայում է իբրև վայր քաղաքականորեն մեզ թշնամի, էյապես Կոլչակյան ու Դենիկինյան քաղաքականությունն վարող տարրերի կազմակերպման, կենտրոնացման, միավորման — սպա, իհարկե, կոոպերացիան համեմատած մտնր տնտեսությունների,



մանր առևտրի հետ, խնդրի միայն ձևն է փոխում:  
Հասկանալի չե, վոր կուլակուլթյան առաջացումը  
և մանր-բուրժուական հարաբերություն-  
ների զարգացումը համապատասխան քաղաքա-  
կան կուսակցություններ են առաջացնում, վո-  
րոնք Ռուսաստանում կազմվել են տասնամյակ-  
ներով և վորոնք մեզ լավ ծանոթ են: Այստեղ  
ընտրություն պիտի կատարվի վոչ թե նրա մի-  
ջև—ընթացք տալ արդյոք այդ կուսակցություն-  
ներին—նրանք անխուսափելիորեն առաջանում  
են մանր-բուրժուական տնտեսական հարա-  
բերությունների շնորհիվ, —այլ մենք ընտրու-  
թյուն պիտի կատարենք, այն ել միայն վորոշ  
սատիճան, մի միայն այդ կուսակցությունների  
համակենտրոնացման, միավորման և գործողու-  
թյունների ձևերի միջև: Վոչ մի կերպ չի կա-  
րելի ապացուցանել, թե կոոպերացիան այդ տե-  
սակետից ավելի վատ կարող է լինել: Ընդհակա-  
ռակը, կոոպերացիայի վերաբերմամբ կոմունիստ-  
ները սխտեմատիկ ներգործության ու վերա-  
հակողության միջոցներ այնուամենայնիվ մի քիչ  
ավելի շատ կունենան:

IX համագումարի բանաձևը կոոպերացիայի  
մասին այստեղ ընկ. Յուրուպայի վճռական պաշտ-  
պանությունը գտավ և ընկ. Միլյուստինի վճռա-  
կան առարկությանը հանդիպեց:

Ընկ. Յուրուպան, ի միջի այլոց, ասում էր,  
թե յես ինքս վկա յեմ յեղել այն պայքարին,  
վոր տեղի ուներ կոպերացիայի հարցի վերաբեր-  
մամբ մինչև համագումարի կողմից նրա լուծումն  
ստանալը: Այդ փաստը յես պետք է հաստատեմ:  
Հիրավի, պայքարը տեղի ուներ. և IX համագու-  
մարի բանաձևը վերջ գրեց գրան այն ուղղությամբ  
վոր հոգուտ պարենավորման գերատեսչության ա-  
պահովեց ավելի շատ գերակշռություն՝ կամ ավելի  
ճիշտն ասած, ամենալիակատար գերակշռություն:  
Այժմ, այդ նկատառումի պատճառով կոպերացիա-  
յի վերաբերմամբ գործողությունների ավելի մեծ  
ազատությունից և քաղաքական միջոցների ընտ-  
րության ազատությունից չհրաժարվելն արդեն,  
անկասկած, քաղաքականորեն սխալ կլիներ: Ինձ  
համար, իհարկե, շատ ավելի անհաճո չե, հենց ա-  
սենք, ժողկոմխորհի նախագահի տեսակետից,  
տասնյակ նիստերի ընթացքում դատապարտված  
լինել մանր պայքարը դիտելու, քան յեսևում ունե-  
նալ համագումարի բոլորի համար պարտադիր բա-  
նաձևը, վոր վերջ է դնում այդ պայքարին: Բայց  
հարկավոր է հաշվի առնել վոչ թե այդ տեսակի  
հարմարությունները, այլ վորոշ տնտեսական  
քաղաքականություն անցկացնելու շահերը: Դուք  
բոլորդ այստեղ տեսաք մեծ քանակությամբ տոմ-  
սակներ, վոր յես ստացել եմ—տոմսակների մի  
կոյտ—այս բանն ե՛լ ավելի պարզ ապացուցեց,



վոր այդ կոնկրետ հարցում, մեր քաղաքականութեան այդ փոփոխութիւնն անցկացնելիս բազմաթիւ մանրամասն դժվարութիւններ են առաջանում: Սրանում ե հարցի ելութիւնը: Յեւ վոչ մի կասկած չկա, վոր մենք, դրանք մի անգամից լուծել չպիտի կարողանանք: Յեթե թողնենք IX համագումարի բանաձևը կոոպերացիայի մասին, ապա մենք մեր ձեռքերը կկապենք: Մենք մեզ այնպիսի դրութեան մեջ կգտնենք, վոր ամբողջովին յենթակա լինելով համագումարին հաշիւ տալու և պարտական նրա քաղաքականութիւնն անցկացնելու՝ մենք այդ բանաձևի տառիցը շեղվել չենք կարող: Բանաձևը շարունակ հիշեցնում ե հալասարար բաշխման մասին, իսկ դուք հարկով եք փոխարինում այն: Մենք մինչև վորոշ աստիճան, պիտի թողնենք տնտեսական շրջանառութեան ազատութիւնը, այդ անկասկած ե: Դրա տնտեսական պայմանները հարկավոր ե հաշիւ առնել ու ստուգել: Այդ պատճառով ել, իհարկե, IX համագումարի բանաձևի վերացումը նորից մեզ բերում ե այնպիսի դրութեան, վոր կարծես թե, փակված հարցը, մինչև վորոշ աստիճան բացվում ե: Բայց դա կատարելապես անխուսափելի յե: Այդ անտես առնել կնշարակե հիմքից փչացնել մեր նշած տնտեսական քաղաքականութեան հարաբերութիւնները, վոր

րոնք անկասկած ափելի ընդունելի յեն գյուղացիներին համար:

Վոր հավասարար բաշխման փոխարինումը հարկով գյուղացիներին համար ափելի ընդունելի տնտեսական քաղաքականութիւն ե, այդ մասին, ըստ յերևույթին, ներկա համագումարում յերկու կարծիք չկա, և ընդհանրապես յերկու կարծիք չկա կոմունիստների միջև: Դրա մասին մի շարք հայտարարութիւններ ենք ստացել նաև անկուսակցական գյուղացիութիւնից: Դա կատարելապէս հաստատված ե: Հենց, միայն դրա համար հարկավոր ե, վոր մենք այդ փոփոխութեան համաձայնենք: Ուստի և վերստին կարդում եմ կոոպերացիայի մասին գրված բանաձևը. «Ի նկատի ունենալով, վոր Ռ. Կ. Կ. IX համագումարի բանաձևը ղեպի կոոպերացիան ունենալիք վերաբերմունքի մասին ամբողջովին կառուցված ե հավասարար բաշխման սկզբունքի ճանաչման վրա, վորն այժմ հարկով ե փոխարինվում, Ռ. Կ. Կ. X համագումարը վորոշում ե մատնանշված բանաձևը վերացնել: Համագումարը հանձնարարում ե Կ. Կ.-ին մշակել և կուսակցական ու խորհրդային կարգով անցկացնել այնպիսի վորոշումներ, վորոնք բարելավելին ու զարգացնելին կոոպերատիվները՝ կազմութիւնը ու գործունեութիւնը՝ համաձայն Ռ. Կ. Կ. ծրագրին ու հավասարար բաշխումը բնական հարկով փոխարինելուն»:



Կ. Կ.-ի անունից պիտի առաջարկեմ համագումարին ընդունել առաջին բանաձևը—հավասարաբ քաշխումը հարկով փոխարինելու նախնական նախագիծը, հավանութունն առ նրան հիմնականում և հանձնարարել կուսակցութեան Կ. Կ.-ին համաձայնեցնել, մշակել և մտցնել Համագում. Կ. Գ. Կ. պիտի առաջարկեմ նույնպես և յերկրորդ բանաձևը կոպերատիվների մասին:

Այժմ, անցնում եմ այն նկատողութեաններին, վոր այստեղ արվեցին: Պիտի ասել, վոր սոմսակներով ստացած հարցերն այնքան բազմթիվ են, սոմսակներն այնպիսի մի կույտ են կազմում, վոր յես վոչ միայն չեմ կարող թվել նրանց շոշափած հարցերը, այլև հարկադրված եմ կատարելապես հրաժարվել դրանք բոլորը լրիվ կերպով այնպես համախմբելուց, վոր նույնիսկ կարելի լիներ դրանց առթիվ զրույցնել շարունակել: Յես հարկադրված եմ, ցավոք սրտի, դրանից հրաժարվել և սոմսակները կպահեմ, իբրև նյութ հարցի հետագա քննութեան համար:

Գուցե, աշողլի դրանք ավելի մանրամասն ոգտագործել մամուլի համար, կամ գոնե հավաքել ու համախմբել այնպես, վոր մանրամասն և հիշարժի լրիվ մի ժողովածու արվի բոլոր այն տրամեսագետ, վարիչ և քաղաքական ղեկավար ընկերներին, վորոնք ամենամոտ կերպով պիտի

դբաղվեն հավասարաբ քաշխումը հարկով փոխարինելու որենքների նախապատրաստմամբ: Յև կարող եմ հենց հիմա ջոկել միայն յերկու հիմնական հոսանք, և մի քանի խոսք ասել յերկու հիմնական առարկութեանների կամ զիտողութեանների մասին, այդ սոմսակներում հարուցված հարցերի յերկու հիմնական տիպերի կամ լամբերի մասին:

Առաջինը դա տեխնիկայի մատնանշումն է: Մի ամբողջ շարք բազմաթիվ և մանրամասն մատնանշումներ այն բանի, թե վորքան ղեկավար կլինի և վորքան շատ չլուծված հարցեր են ծագում այդ առաջընթացները կյանքում իրականացնելիս: Յես արդեն առաջին ղեկուցմանս մեջ նախապես հայտնեցի, վոր այդ տեսակի մատնանշումները կատարելապես անխուսափելի յեն և վոր այժմ վոչ մի հնարավորութուն չկա միանգամից իմանալու թե այդ ղեկավարութեանների լուծմանը մենք ինչպես ձեռնամուխ կլինենք:

Յերկրորդ՝ ընդհանուր մատնանշումն արդեն հանգում է տնտեսական քաղաքականութեան հիմունքներին: Յեվ այն, ինչ վոր այստեղ իրենց ձառերում ասում եյին արտահայտվող հոստորներից շատերը և նույնիսկ մեծամասնութունը և վոր մատնանշույց է արվում ինձ տված սոմսակներում—դա մանր բուրժուազիայի ու կա-



պիս. ալիզմի անխուսափելի ուժեղացումն է: Դուք  
այդպիսով, — գրում են մի քանիսն իրենց տոմ-  
սակներում, — դռներն լայն բաց եք անում բուր-  
ժուազիայի, մանր արդյունագործության և կա-  
պիտալիստական հաշարերությունների զարգաց-  
ման համար: Այդ առթիվ, ընկերներ, յես պիտի  
ասեմ, վորոշ աստիճան կրկնելով այն, ինչ ասել  
եմ առաջին զեկուցմանս մեջ թե վոչ մի կասկած  
չկա, վոր կապիտալիզմից դեպի սոցիալիզմ ան-  
ցնելն հնարավոր է գանազան ձևերով, նայած  
թե մեր յերկրում արդեն խոշոր կապիտալիստա-  
կան հարաբերությունների գերիշխումն, թե նգա-  
նում մանր անտեսությունների գերիշխումն  
զոյություն ունի: Այս տեսակետից, ես պիտի  
նկատեմ, վոր հռետորների վոչ մեկի կող-  
մից, և վոչ մի տոմսակում, (յես այնու-  
ամենայնիվ նրանց մեծ մասը կարդացի, իսկ  
նրանք մը քանի տասնյակ եյին) այդ հիմունք-  
ները չեն քննադատվել: Յեթե մենք ունենա-  
յինք մի պետություն, ուր գերակշռում է խո-  
շոր արդյունագործությունը, կամ թե, ասենք  
նույնիսկ, չի գերակշռում, այլ շատ ուժեղ զար-  
գացած է և շատ զարգացած է խոշոր արտա-  
դրությունը յերկրագործության մեջ, այդ դեպ-  
քում կոմունիզմին ուղղակի անցնելն հնարավոր  
է: Առանց դրան կոմունիզմին անցնելն անտես-

սապես անհնարին է: Ընկ. Միլյուտինն այստեղ ա-  
սում եր, թե մենք համաչափ ու կանոնավոր սիս-  
տեմ ունեյինք, և վոր մեր որենսդրությունը, ինչ-  
պես նա արտահայտվեց, իրենից ներկայացնում է  
նման անցումի վորոշ աստիճան համաչափ ու կա-  
նոնավոր մի սիստեմ, վորը սակայն հաշվի չեք առ-  
նում մանր բուրժուազիային մի շարք զիջումներ  
անելու անհրաժեշտությունը: Այս ասելով՝ ընկ.  
Միլյուտինն այն յեզրակացությունը չհանեց, վորը  
յես եմ հանում: Այն համաչափ սիստեմը, վորը  
ստեղծվում եր, դա թելադրվում եր, վոչ թե  
անտեսական այլ պատերազմական կարիքներով,  
նկատառումներով և պայմաններով: Չլսված ավեր-  
մունքի այն պայմաններում, վորոնց մեջ մենք ե-  
յինք գտնվում, յերբ մենք մեծ պատերազմից հե-  
տո հարկադրված եյինք մի շարք քաղաքացիական  
պատերազմներ վարել, — ուրիշ ելք չկար: Թերես  
վորոշ քաղաքականություն կիրառելիս սխալներ  
տեղի ունեյին, տեղի ունեյին մի շարք չափազան-  
ցություններ — այս բանը բոլորովին վորոշակի պի-  
տի ասել: Բայց պատերազմի այն պայմաններում,  
վորոնց մեջ մենք եյինք դրված, այդ քաղաքակա-  
նությունը հիմնականում ուղիղ եր: Մենք վոչ մի  
ուրիշ հնարավորություն չունեյինք, բացի մենա-  
շնորհը անհաջող և ամենամեծ չափով կիրառելուց  
— մինչև բոլոր ավելցուկների վերցնելը, թեկուզ



առանց վորեւ հատուցման: Յեւ այլ կերպ այդ խնդրին մոտենալ չեյինք կարող: Դա կանոնավոր ու համաչափ անտեսական սխտեմ չէր նշանակում: Դա մի միջոց էր, վոր առաջացել էր վոչ-անտեսական պայմանների շնորհիվ, այլ նշանավոր չափով թելադրված էր մեզ պատերազմական պայմաններով: Իսկ ինչ վերաբերում է անտեսական նկատառումներին՝ այս դեպքում, այժմ հիմնական նկատառումը պրոդուկտների քանակի ավելացումն է: Մենք գտնվում ենք գլխավոր արտադրողական ուժերի՝ գյուղացիների ու բանվորների, այնպիսի աղքատացման, ավերման, հոգնածության և ուժասպառության պայմաններում, վոր այդ գլխավոր նկատառման—ինչ գնով ել լինի ավելացնել պրոդուկտների քանակությունը—ամեն ինչ մի առ ժամանակ պիտի յենթարկենք:

Ինձ հարց են տալիս՝ ինչ աննշության մեջ է գտնվում հավասարաբ քաշխման փոխարինումը հարկով սերմանման այն կամպանիայի հետ, վոր այժմ մղվում է, և, իրենց տոմսակներում ընկերներն աշխատում են այս խնդրում մի շարք հակասություններ գտնել: Յես կարծում եմ, վոր այստեղ հիմնականում անտեսական համաձայնեցումն կա, և վոչ հակասություն: Սերմանման կամպանիան մղելիս հույս ենք դրել

մի շարք միջոցների վրա, վորոնք նրանք մեծագույն չափով կողտադործեն բոլոր անտեսական հնարավորությունները ցանքսի քանակությունն ավելացնելու նպատակով: Դրա համար հարկավոր է վերաբաշխել սերմացուն, սահապանել, փոխադրել: Իսկ մենք նույնիսկ սերմացուի այդքան աղքատիկ ֆոնդ ունենալով, չենք կարողանում փոխադրել այն. շարունակ կարիք է լինում դիմել փոխադարձ ոգնության մի ամբողջ շարք միջոցների, վորպեսզի ինվենտարի ապշեցուցիչ պակասություն զգալով հանդերձ մեծացնենք ցանքսը, հասցնենք լրիվ չափին: Մի ամբողջ շարք նահանգների վերաբերմամբ այդ հարցի մասին մտածելու կարիք չկա: Յեթե անկուսակցական գյուղացին, վորը շատ ու շատ դեպքերում ինքն է արդեն դրել հավասարաբ քաշխումը հարկով փոխարինելու պահանջը, վորը խրթան է հանդիսանալու տվյալ անտեսական հիմունքի վրա նրա անտեսության զարգացմանը, յեթե նա մինչև գարնան կամպանիան պետական իշխանության կողմից հայտարարություն է ստանում, թե այդ միջոցն ընդունված է ու պիտի իրականացվի—հակասում է արդյոք սա սերմանման կամպանիայի ընդհանուր քաղաքականությանը: Վո՛չ, չի հակասում: Իսկ սա մի միջոց է, վորը խրախուսանքի տարբ է մտցնում:



Վոր շոգենավերը ածուխով, պարենի փոքր քանակով բեռնված դուրս են գալիս Անգլիայից, այդ մենք գիտենք. գիտենք վոր մինչև առևտրական դաշնագրի կնքումը, վորը դեռ չի ստորագրված, առևտուր տեղի ունի առանձին վաճառականների հետ, վորոնց բուրժուական կառավարութիւնը, իհարկէ, այդ բանն արգելել չի կարող: Տընտեսական պաշարման ողակում, վորով մենք շրջապատված ենք, ճեղքվածք առաջ բերելը— դժվար գործ է, և վորևէ լայն խոստում տալ մենք, իհարկէ, չենք կարող: Համենայն դեպս, ինչ վոր կարելի յետանել, մենք անում ենք այդ տեսակետից, ներմուծման ծրագրի մեջ փոփոխում կատարում ենք:

Մանր սեփականատիրոջ, մանր յերկրագործի տեսակետից հարկը, վոր ավելի քիչ գումար կկազմի, քան հավասարար բաշխումը, վորը ավելի ճշտութեամբ կվորոշվի և վորը նրան հնարավորութիւն կտա ավելի շատ ցանելու, հնարավորութիւն կտա նրան վստահ լինելու, վոր ավելցուկները կգնան անտեսութեան բարելավմանը— սա ջանասեր տիրոջը ամենամեծ չափով աջակցութիւն ցույց տալու վարքագիծն է, վոր առաջադրվեց նաև սերմանման կամ պանիայում: Բոլոր առարկութիւնները վերջի վերջոյ հանգում են այն հարցին, թէ ավելի շատ կշահի՞ կոմունիզմին

անտեսապես թշնամի մանր բուրժուազիան, թէ խոշոր արդյունաբերութիւնը, վորը իրենից ներկայացնում է սոցիալիզմին անցնելու հիմքն և վորը արտադրողական ուժերի վիճակի տեսակետից, այսինքն՝ ամբողջ հասարակական զարգացման հիմնական չափանիշի տեսակետից, սոցիալիստական անտեսական կազմակերպութեան հիմքն է հանդիսանում— միավորելով առաջավոր արդյունաբերական բանվորներին, միավորելով այն դասակարգը, վոր պրոլետարիատի զիկտատուրան է իրականացնում:

Այստեղ, մի քանիսը փորձում եյին ասել, կամ անտեսազիտներն յեզրակացնել, թէ անկասկած ավելի շատ կշահի մանր բուրժուազիան, անայնազործական ապրանքային արտադրութիւնը, և առանձնապես աշխատում եյին այդ հիմնավորել այն տեսակետից, թէ հատկապես խոշոր արդյունաբերութիւնը, շնորհիվ կոնցեսիաների, սոցիալիստական չի լինելու: Յես կարծում եմ, վոր այս դատողութիւնները մեջ հիմնական անտեսական անճշտութիւն կա: Յեթե նույնիսկ կատարելապես ստույգ ապացուցված լիներ, վոր համեմատաբար, նույնիսկ, զիցուք թէ բացարձակ, շատ ավելի կշահի մանր արդյունաբերութիւնը, սա վո՛չ տեսականապես, վո՛չ էլ գործնականապես ամենևին չի հերքում



մեր ձեռնարկած քայլերի ուղիղ լինելը: Յեզրակացությունն այն է, վոր սոցիալիզմը կառուցանելու մեր ամբողջ գործը տնտեսապես ամրացնելու համար, այլ նեցուկ չի կարող լինել: Յենթադրենք, այժմ, սոսկ որինակի համար, — յես սա բերում եմ ակնառու ձևով — բացատրելու համար, վոր մանր արդյունագործությունն արտահայտվում է մի մեծությամբ, վոր նշանակում ենք 100 (լինի դա 100 միլիոն աշխատանքային միավոր, թե վորևէ այլ 100 միավոր — դա միևնույն է), իսկ խոշորը — 200\*): Յենթադրենք, թե խոշորը կանգ է առել, իսկ մանրը ահագին չափով զարգանում է: Յես նույնիսկ կարծում եմ, թե դա ամենավատ յենթադրությունն է, վոր արեցի, բայց սա յեղ մեզ համար անկասկած ոգուտ կնշանակեր:

Անցնենք կոնցեսիաներին: Կոնցեսիաների բընույթն հարկավոր է պարզ պատկերացնել: Սա տնտեսական դաշինք է առաջավոր ֆինանսական կապիտալի հետ, դաշինք է, վորը պրոդուկտների փոքր չափով ավելացումն կտա, բայց կտա նաև դաշնորդի պրոդուկտների ավելացումը: Յենթամենք հանքը կամ անտառը տանք կոնցեսիոններին, նա

\*) Որինակի համար, յենթադրենք, թե մանրը կապիտալիստական հիմքի վրա աճում է 175-ով, իսկ խոշորը մնում է միայն 200:

կվերցնե այդ պրոդուկտի ահագին բաժինը և մեզ փոքր բաժին կհասցնի: Բայց մեզ համար կարելի է ընդհանրապես պրոդուկտների քանակն ավելացնել, ուստի փոքրիկ բաժինն էլ այնուամենայնիվ պլյուս է մեզ համար:

Ուրեմն, անհիմն է վախենալ, վոր մանր յերկրագործությունն ու մանր արդյունագործությունը կբարձրանա այն չափերով, վոր կկարողանան վտանգավոր հանդիսանալ մեր խոշոր արդյունագործության համար:

Յենթե մեզ մոտ հունձը լավ չի լինի, (յես ձեզ արդեն մատնանիշ արի Պասլովի բրոշյուրը), յենթե մենք ստանանք վատ հունձ և նույնքան էլ աղքատիկ միջոցներ, ինչպես և անցյալ տարի, այդ զեպը ում կրիզիսի նվազման և մանր արդյունագործության զարգանալու մասին խոսքանգամ լի՛ք էլ չի կարող: Այն հարցը թե ավելի շատ կշահի, մանր արտադրությունն թե խոշորը — դա մեր ֆոնդի ոգտագործման և շուկայի զարգացման ու միացման խնդիրն է, վորին մենք հասնում ենք կապիտալիզմի հետ համաձայնության գալով, կոնցեսիաների միջոցով, և դա կտա մեզ գյուղատնտեսական արտադրության բարձրացումը: Նայած թե մեզնից ով ավելի լավ կոգտագործի այդ միջոցները, դրանից էլ կախված են հետևանքներն: Յես կարծում եմ վոր բան-



վոր դասակարգը իր ձեռքում ունենալով խոշոր արդյունագործության ամենակարևոր ճյուղերը, յեթե նա իր ուշադրությունը նրանցից ամենակարևորներին վրա կենտրոնացնի նա ավելի շատ կշահի, քան կշահի մանր արդյունագործությունը, թեկուզ վերջինս նույնիսկ համեմատաբար ավելի արագ աճի: Մեզ մոտ տեքստիլ արդյունագործության մեջ գրությունն այնպես էր, վոր 1920 թվի վերջում անկասկած բարելավումն էր նկատվում, բայց վառելիքը հերիք չարեց, իսկ յեթե մենք բավականաչափ վառելիք ունենայինք՝ մինչև 800,000,000 արշ. գործվածք կստանայինք և գյուղացիական պրոդուկտների հետ փոխանակելու համար սեփական արտադրության նյութ կունենայինք:

Բայց վառելիքի ճգնաժամն սկսվելու հետ հսկայական չափով ընկավ արտադրությունը: Յեթե այժմ ածուրի գնումն արտասահմանում ունալիզացիայի էլ յենթարկվի, և մենք մի կամ յերկու շաբաթ հետո դրանով բեռնված նավերն ստանանք, մենք, միևնույն է, արդեն մի քանի շաբաթ կամ նույնիսկ ամիս կորցրել ենք:

Խոշոր արտադրության վիճակի ամեն մի բարելավումը, մի քանի խոշոր ֆաբրիկաներում աշխատանքն սկսելու հնարավորությունը—այնքան է ամրացնում պրոդետարիատի գրությունը,

վոր մանր բուրժուազիայի, նույնիսկ աճող տարերքից վախենալու կարիք չկա: Վոչ թե պիտի վախենալ նրանից, վոր մանր բուրժուազիան և մանր կապիտալը կաճի: Պիտի վախենալ նրանից, վոր չափազանց յերկար է շարունակվում կարիքը, մթերքների պակասը, վորից էլ բղխում է արդեն պրոդետարիատի ուժասպառումը, նրանկարողությունը դիմադրելու մանր բուրժուական տատանումների տարերքին: Յեթե պրոդուկտների քանակն ավելանա մանր բուրժուազիայի վոչ մի զարգացումն մեծ միևնուս չի լինի, քանի վոր դա զարգացնում է խոշոր արդյունագործությունը, և մանր գյուղական տնտեսությունը մենք պիտի խրախուսենք: Այն ամենը, ինչ վոր կարող ենք անել նրան խրախուսելու համար, մենք պարտական ենք անել: Հարկը—այդ տեսակետից համեստ միջոցներից մեկն է, սակայն անկասկած այն միջոցներից մեկը, վորը կտա այդ խրախուսանքը և վորն ընդունել հարկավոր է անպայման:

(Собр. соч., т. XVIII, ч. I, стр. 148—155.)



«ՊԱՐԵՆՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ԲՐՈՇՅՈՒՐԻՅ

...Վերցնենք կոոպերացիան: Իզուր տեղը չեք, վոր պարենտուրքի մասին հրատարակված զեկրեան անմիջապես կոոպերացիայի կանոնադրութեան վերաքննութիւնը և նրա «ազատութեան» ու նրա իրավունքների վորոշ ընդլայնումն առաջացրեց: Կոոպերացիան ել պետական կապիտալիզմի մի տեսակն է, բայց այնպիսի մի տեսակը վոր ավելի քիչ պարզ է, ավելի քիչ ճիշտ ուրվագծված, ավելի շատ խճճված և ուստի գործնականում մեր իշխանութեան առաջ ավելի մեծ դժվարութիւններ դնող: Մանր ապրանք-արտադրողների կոոպերացիան (այստեղ խոսքը դրա մասին է, իբրև մանր-գյուղացիական յերկրում գերիշխողի, բնորոշի և վոչ թե բանվորական կոոպերացիայի մասին) անխուսափելիորեն ռաջացնում է մանր-բուրժուական, կապիտալիստական հարաբերութիւններ, նպաստում է նրանց զարգացմանը, առաջին տեղն է քաշում կապիտալիստիկներին, նրանց է տալիս ամենամեծ

ոգուտը: Ուրիշ կերպ չի կարող լինել, յերբ գոյութիւն ունի մանր սեփականատերերի գերիշխումը և փոխանակութեան հնարավորութիւնը, ուրեմն և անհրաժեշտութիւնը: Կոոպերացիայի ազատութիւնն ու իրավունքները, Ռուսաստանի տվյալ պայմաններում, կապիտալիզմի ազատութիւնն ու իրավունքներն են նշանակում: Աչք փակել այս աղիներև ճշմարտութեան զիմաց—հիմարութիւն կամ հանցանք կլիներ:

Սակայն «կոոպերատիվային» կապիտալիզմը հակառակ մասնավոր-տնտեսական կապիտալիզմին, խորհրդային իշխանութեան որով, պետական կապիտալիզմի տեսակներից մեկն է հանդիսանում և, իբրև այդպիսին, նա մեզ համար այժմ անշուշտ, վորոշ չափով ձեռնտու յե ու ոգտակար: Վորչափ պարենտուրքը նշանակում է մնացած (հարկի ձևով չվերցվող) ավելցուկները վաճառելու ազատութիւն, նույնչափ անհրաժեշտ է ջանք գործ դնել, վոր կապիտալիզմի այդ զարգացումը—վորովհետև վաճառքի ազատութիւնը, առևտրի ազատութիւնը կապիտալիզմի զարգացումն է—կոոպերատիվային կապիտալիզմի հունով գնա: Կոոպերատիվային կապիտալիզմը նման է պետականին այն տեսակետից, վոր հեշտացնում է հաշվառումը վերաստուգութիւնը, վերահսկողութիւնը, դաշինքա-



յին հարաբերությունները պետութեան (ներկա դեպքում՝ Սորհրդային) և կապիտալիստի միջև. կոպերացիան իբրև առևտուրի ձև, ավելի ձեռնառու յե ու ոգտակար, քան մասնավոր առևտուրը, վոչ միայն մատնանշված պատճառներով, այլ և այն պատճառով, վոր նա հեշտացնում է միլիոնալոր ազգաբնակութեան, սպա ամբողջ ազգաբնակութեան միասնացումը, կազմակերպումը, խկ այդ պարագան, իր հերթին պետական կապիտալիզմից դեպի սոցիալիզմ հեռագա անցում կատարելու տեսակետից հսկայական պլյուս է:

Համեմատենք կոնցեսիաներն ու կոոպերացիան իբրև պետական կապիտալիզմի ձևեր: Կոնցեսիան հիմնվում է խոշոր, մեքենական արդյունագործութեան վրա, կոոպերացիան մանր, ձեռքի, մասամբ նույնիսկ նահապետականի վրա: Կոնցեսիան յուրաքանչյուր առանձին կոնցեսիոն պայմանագրում վերաբերում է մի կապիտալիստի կամ մի ֆիրմայի, մի սինդիկատի, կարտելի, արեստի: Կոոպերացիան շատ հազարավոր, նույնիսկ միլիոնավոր մանր սեփականատերեր է ընդգրկում: Կոնցեսիան թույլ է տալիս և նույնիսկ յենթադրել է տալիս ճշգրիտ պայմանագիր և ճշգրիտ ժամկետ: Կոոպերացիան վոչ լիովին ճշգրիտ պայմանագիր, վոչ լիովին ճշգրիտ ժամկետ թույլ չի տալիս: Շատ ավելի հեշտ է կոոպերացիայի մասին յեղած

որենքը վերացնելը, քան կոնցեսիոն պայմանագիրը պատուելը. ոակայն պայմանագրի պատուելը նշանակում է մի անգամից, ուղղակի, անմիջապես քանդել կապիտալիստի հետ անտեսական միություն ունենալու կամ անտեսապես «կենակցելու» փաստական հարաբերությունները, միջդեու կոոպերացիայի մասին եղած որենքի վերացումն և, ընդհանրապես վոչ մի որենք, վոչ միայն մի անգամից չեն քանդի խորհրդային իշխանութեան և մանր կապիտալիստիկների փաստային «կենակցությունը» այլ և ընդհանրապես ի վիճակի չեն փաստական անտեսական հարաբերությունները խզելու: Կոնցեսիոնների վրա «հսկելը» հեշտ է, կոոպերատորների վրա՝ դժվար: Կոնցեսիայից սոցիալիզմին անցնելը, խոշոր արտագրութեան մի ձևից դեպի մյուս ձևն անցնելն է: Մանր սեփականատերերի կոոպերացիայից սոցիալիզմին անցնելը, մանր արտագրությունից խոշորին անցնել է, այսինքն՝ ավելի բարդ անցումն, սակայն, դրա փոխարեն, աջողութեան դեպքում, նա ընդունակ է ընդգրկելու ազգաբնակութեան ավելի լայն մասսաները, ընդունակ է պոկելու, հին մինչսոցիալիստական, նույնիսկ մինչկապիտալիստական հարաբերությունների ավելի խորը և ավելի կենսունակ արմատները, հարաբերություններ վորոնք անչափ համառն են ամեն տեսակի ճնորա-



մուծություններին» ղիմադրելու իմաստով: Կոն-  
ցեսիաների քաղաքականությունը, աջողության  
դեպքում, մեզ կտա մի փոքր թիվ որինակելի—  
մերոնց հետ համեմատած—խոշոր ձեռնարկու-  
թյուններ, վորոնք կանգնած են ժամանակակից  
առաջավոր կապիտալիզմի մակարդակի վրա, մի  
քանի տասնամյակից հետո, այդ ձեռնարկություն-  
ներն ամբողջովին մեզ կանցնին: Կոոպերատիվա-  
յին քաղաքականությունը, աջողության դեպքում,  
մեզ կտա մանր անտեսության վերելքը և կհեշ-  
տացնի նրա անցումը, անորոշ ժամանակամի-  
ջոցում, դեպի խոշոր արտադրությունը— կազմա-  
կերպված, կամավոր միասնացման սկզբունքով:

(Собр. соч., т. XVIII, ч. I, стр. 218—220)

## ԿՈՈՊԵՐԱՅԻՆՍԻ ՄԱՍԻՆ

### I

Մեզ մոտ, թվում է ինձ, կոոպերացիայի  
վրա բավականաչափ ուշադրություն չի դարձ-  
վում: Հազիվ թե բոլորն են հասկանում, վոր  
այժմ, հոկտեմբերյան հեղափոխությունից հետո և  
անկախ նեպից (ընդհակառակը, սրա վերաբեր-  
մամբ պիտի ասենք՝ հենց նեպի շնորհիվ) կոոպե-  
րացիան մեզ մոտ բոլորովին բացառիկ նշանակու-  
թյուն է ստանում: Հին կոոպերատորների յե-  
րազներում շատ ֆանտազիա կա: Նրանք ծի-  
ծաղելի յեն հաճախ իրենց ֆանտաստիկությամբ:  
Բայց ի՛նչու՞ն է նրանց ֆանտաստիկությունը:  
Նրանում, վորայդ մարդիկ չեն հասկանում շա-  
հազործողների աիրապետության ապալուման հա-  
մար բանվոր գոսակարգի մղած քաղաքական  
պայքարի հիմնական, արմատական նշանակու-  
թյունը: Մեզ մոտ այժմ այդ տապալումը կա-  
տարված է, և հիմա շատ բան նրանից՝ ինչ հին  
կոոպերատորների յերազանքներում ֆանտաս-



տիկ, նույնիսկ ումանտիկ, նույնիսկ գուեհիկ  
բնույթ եր կրում, ամենևին չգուճափորված իրա-  
կանությունն է դանուում:

Մեզ մոտ, հիրավի, քանի վոր պետական իշխա-  
նությունը բանվոր դասակարգի ձեռինն է, քանի  
վոր այդ պետական իշխանությանն են պատկա-  
նում արտադրության բոլոր միջոցները, մեզ մոտ  
հիրավի, իբրև խնդիր մնացել է միայն ազգաբնա-  
կության կոոպերացնել: Ազգաբնակությունը մե-  
ծագույն չափով կոոպերացնելու գեպքում՝ ինքն  
ըստ ինքյան իր նպատակին է համնում այն սո-  
ցիալիզմը, վոր դրանից առաջ որինական ծաղր,  
ժպիտ, արհամարհական վերաբերմունք եր հա-  
րուցանում այն մարդկանց մեջ, վորոնք արդարացի  
կերպով համոզված եյին, թե անհրաժեշտ է դա-  
սակարգային կռիվ մղել, կռիվ քաղաքական իշ-  
խանության համար և այլն: Յեվ ահա, վոչ բո-  
լոր ընկերներն են իրենց հաշիվ տալիս, թե  
այժմ մեզ համար վորքան հսկայական, անհուն  
նշանակությունն է ստանում Ռուսաստանի կոո-  
պերացումը: Նեպի խնդրում մենք գիշում արինք  
գյուղացուն իբրև առևտրականի, և մասնավոր առ-  
ևտրի սկզբունքին. հենց դրանից է բղխում (հա-  
կառակ շատերի կարծիքին) կոոպերացիայի հրա-  
կայական նշանակությունը: Ճիշտն ասած, բա-  
վականաչափ լայն ու խոր կոոպերացնել ուս

ազգաբնակությունը նեպի տիրապետության որով  
այդ է այն բոլորը, ինչ հարկավոր է մեզ, վո-  
րովհետև այժմ մենք գտել ենք մասնավոր շահի,  
մասնավոր առևտրական շահի միացման, նրան  
պետության ձեռքով ստուգելու ու վերահսկե-  
լու այն տատիճանը, նրան ընդհանուր շահերին  
յինթարկելու այն աստիճանը, վոր առաջ շատ ու  
շատ սոցիալիստների համար փորձաքար եր հան-  
դիսանում:

Յեվ հիրավի, պետության իշխանությունը  
արտադրության բոլոր խոշոր միջոցների վրա,  
պետության իշխանությունը — պրոլետարիատի  
ձեռքում, այդ պրոլետարիատի դաշնակցությունը  
բազմամիլիոն մանր ու մանրագույն գյուղացի-  
ների հետ, այդ պրոլետարիատի՝ գյուղացիու-  
թյան վերաբերմամբ ունենալիք դեկավարության  
ապահովումը և այլն, — միթե այս չէ՞ այն ամե-  
նը, ինչ հարկավոր է, վորպեսզի կոոպերացիայից,  
միմիայն կոոպերացիայից, վոր առաջ մենք ար-  
համարհում եյինք իբրև չարչիություն և վորը  
վորոշ տեսակետից իրավունք ունենք արհա-  
մարհելու նույնպես և այժմ՝ նեպի որով, միթե  
այս չէ՞ այն ամենը՝ ինչ անհրաժեշտ է լիակա-  
տար սոցիալիստական հասարակություն կառու-  
ցելու համար: Սա գեռ ևս սոցիալիստական հասա-  
րակության կառուցումն չէ, սակայն այս այն



ամենն ե, ինչ անհրաժեշտ ու բավական ե այդ կառուցման հումար:

Անա այս հանգամանքն ե, վոր լիովին չի գնահատված մեր պրակտիկ աշխատավորներից շատերի կողմից: Մեզ մտա կոոպերացիայի վրա արհամարհանքով են նայում, առանց հասկանալու թե այդ կոոպերացիան վորպիսի բացառիկ նշանակութուն ունի, նախ՝ սկզբունքային տեսակետից (արտադրութեան միջոցների սեփականութիւնը պետութեան ձեռքում), յերկրորդ՝ նոր կարգերին գյուղացու համար հնարավոր չափով ավելի պարզ, ճիշտ ու մատչելի ձանապարհով անցնելու տեսակետից:

Իսկ չե վոր գլխավոր խնդիրը դարձյալ սրանում ե: Այլ բան ե սոցիալիզմի կառուցման համար ամեն տեսակի բանվորական միութիւնների մասին ֆանտազիաներ ստեղծել, այլ բան ե սովորել սոցիալիզմը գործնականորեն այնպես կառուցանել, վոր ամեն մի մանր գյուղացի կարողանա մասնակցել այդ կառուցմանը: Այդ աստիճանին ե, վոր այժմ մենք հասել ենք: Յեւ անկասկած ե այն, վոր հասնելով դրան, մենք զրախից անչափ քիչ ենք ոգտվում:

Նեպին անցնելիս, մենք չափազանցութեան մեջ ընկանք վո՛չ այն տեսակետից, վոր չափազանց շատ տեղ ավինք ազատ արդյունագործու-

թեան ու առևտրի սկզբունքին, այլ, նեպին անցնելիս, չափազանցութեան մեջ ընկանք այն տեսակետից, վոր մոռացանք մտածել կոոպերացիայի մասին, վոր արդեն սկսեցինք մոռացութեան տալ կոոպերացիայի հակայական նշանակութիւնը, այդ նշանակութեան վերը մատնանշած տեսակետներից:

Այժմ, մտադիր եմ ընթերցողի հետ խոսել այն հարցի մասին, թե գործնականորեն ի՛նչ կարելի յե ու հարկավոր ե անել հենց հիմա, յե՛ր ներսով այդ «կոոպերատիվային» սկզբունքից: Ի՛նչ միջոցներով կարելի յե ու հարկավոր ե այժմ և յեթ սկսել զարգացնել այդ «կոոպերատիվային» սկզբունքն այնպես, վոր բոլորի և յուրաքանչյուրի համար պարզ լինի նրա սոցիալիստական նշանակութիւնը:

Կոոպերացիան քաղաքականորեն այնպես պիտի գնել, վոր նա վո՛չ միայն ընդհանրապես ու միշտ վորոշ արտոնութիւն ունենա այլ և, այդ արտոնութիւնը լինի զուտ գույքային արտոնութիւն (բանկային սովորի բարձրութիւն և այլն): Կոոպերացիային հարկավոր ե փոխառութիւն տալ պետական այն միջոցներից, վոր թեկուզ քչով բայց ելի գերազանցեն այն միջոցները, վոր փոխ ենք տալիս մասնավոր ձեռնարկութիւններին, թեկուզ մինչև ծանր արդյունագործութիւնը և այլն:



Յուրաքանչյուր հասարակակարգ առաջ է գալիս միայն վորոշ դասակարգի ֆինանսական աջակցութեան գեպքում: Կարիք չկա հիշեցնելու այն հարյուրավոր ու հարյուրավոր միլիոն ոււրլինների մասին, վոր նստել է «ազատ» կապիտալիզմի ծրնունդը: Այժմ, մենք պիտի գիտակցենք ու իրագործենք այն, վոր ներկայումս այն հասարակակարգը, վորին սովորականից ավելի պիտի ոժանդակենք—կոոպերատիվային հասարակակարգն է: Բայց նրան պիտի ոժանդակել այս բառի բուն իմաստով, այսինքն՝ այդ ոժանդակութեան ներքո բավական չէ հասկանալ, վոր ամեն մի կոոպերատիվային շրջանառութեան պիտի աջակցել.— այդ աջակցութեան տակ հարկավոր է հասկանալ աջակցութեան այնպիսի կոոպերատիվային շրջանառութեան, վորին, հիրավի, ազգաբնակչության իսկական մասսաներն են մասնակցում: Մրցանակ տալ այն գյուղացուն, վոր մասնակցում է կոոպերատիվային շրջանառութեան, այս անպայման ճիշտ ֆորմուլա չէ, բայց միևնույն ժամանակ ստուգել այդ մասնակցութեանը, ստուգել նրա գիտակցականութեանը ունրա լավվորակութեանը—ահա, ինչումն է հարցի ամենաեյակական կետը: Յերբ կոոպերատորը գյուղ է գալիս և այնտեղ կոոպերատիվ խանութ հիմնում, հասարակութեանը, ճիշտն ասած, զրան վոչ մի կերպ

չի մասնակցում, բայց միևնույն ժամանակ, սեփական շահով առաջնորդվելով, կշտապի նրան մասնակցելու փորձ անել:

Այս հարցն էլ մի ուրիշ կողմ ունի: Մենք պետք է դեռ ևս շատ քիչ բան անենք «քաղաքակրթված» (ամենից առաջ զրազեա) յեւրոպացու տեսակետից, վորպեսզի ստիպենք բուրժուազու ամբողջովին մասնակցել կոոպերատիվային ոպերացիաներին, և մասնակցել վոչ պասսիվ, այլ ակտիվ կերպով: Իսկապես ասած, մեզ մնացել է «միայն» մի բան՝ մեր ազգաբնակչութեանը այնքան «քաղաքակիրթ» դարձնել, վոր նա հասկանա կոոպերացիային ամբողջովին մասնակցելու բոլոր ոգուտները և կարգի դիի այդ մասնակցութեանը: «Միայն» այս: Սոցիալիզմին անցնելու համար մեզ այժմ ուրիշ վոչ մի գերիմաստութեան հարկավոր չէ: Սակայն այդ «միայնը» կատարելու համար հարկավոր է մի ամբողջ հեղաշրջում, վորը ժողովրդական մասսայի կուլտուրական զարգացման մի ամբողջ շրջան: Այդ պատճառով էլ մեզ համար կանոն պիտի լինի՝ վորքան կարելի չէ խելքին քիչ գոռ տալ և վորքան կարելի չէ քիչ հունար թափել: Նեպն այս կողմից առաջադիմութեան է հանդիսանում այն տեսակետից, վոր նա հարմարվում է ամենասովորական գյուղացու մակարդակին, վոր նա



գյուղացուց զբանից բարձր վոչինչ չի պահոն-  
ջում: Բայց վորպեսզի նեպի միջոցով հասնենք  
վողջ ազգաբնակության ամբողջական մաս-  
նակցությանը՝ կոտպերացիային—ահա զբա հա-  
մար պահանջվում է մի ամբողջ պատմա-  
կան եպոխա: Լավ դեսլքում այդ եպոխան  
կարող ենք անցնել մի յերկու տասնամյա-  
կում: Բայց և այնպես այդ մի առանձին եպո-  
խա կլինի, և առանց այդ պատմական եպոխայի,  
առանց ընդհանուր գրագիտության, առանց բա-  
վականաչափ հասկացողության, առանց ազգա-  
բնակությունը գրքույկներից բավականաչափ  
ոգտվել վարժեցնելու, և առանց զբա նյու-  
թական հիմքի, առանց վորոշ ապահովության,  
ասենք՝ վատ բերքից, սովից և այլն, առանց  
սրան մեր նպատակին հասնել չենք կարողա-  
նա: Այժմ, ամբողջ խնդիրն նրանումն է, վոր կա-  
րողանանք այն հեղափոխական թափը, այն  
հեղափոխական բուռն վոգեօրությունը, վոր  
մենք արդեն ցույց ենք տվել ու ցույց ենք տվել  
բավական չափով, ու պատկել ենք լիակատար աջո-  
ղությամբ, կարողանանք միացնել (այստեղ  
համարյա պատրաստ էմ ասել) հասկացող ու  
գրագիտ չարչի լինելու հմտության հետ, վորը  
լիովին բավական է լավ կոտպերատորի համար:  
Չարչի լինելու հմտության տակ յես հասկանում

էմ քաղաքակիրթ չարչի լինելու հմտությունը:  
Ես մեկը թող ականջներին ող անեն ուս մար-  
դիկ կամ սոսկ գյուղացիները, վորոնք մտածում են  
—վոր առևտուր անողը՝ ուրեմն կարող է չարչի  
լինել: Այս ամեննին ճիշտ չէ: Առևտուր անե-  
լուց, մինչև քաղաքակիրթ չարչի լինելու հմտու-  
թյունը, գեռ շատ հեռու յէ: Մեզ մոտ առև-  
տուր են անում ասիացու պես, իսկ վորպես-  
զի կարողանալ չարչի լինել՝ հարկավոր է առև-  
տուր անել յեվրոպացու պես: Սրանից մեզ  
բաժանում է մի ամբողջ եպոխա:

Վերջացնում էմ. մի շարք անտեսական,  
Ֆինանսական ու բանկային արտոնություններ—  
կոտպերացիային, սրանում պիտի կայանա մեր  
սոցիալիստական պետության աջակցությունը  
ազգաբնակության կազմակերպության նոր սկզբ-  
բունքին: Բայց սրանով խնդիրը գեռ ընդհանուր  
գծերով է զբված, վորովհետև այստեղ խնդրի  
ամբողջ բովանդակությունը գործնականորեն,  
գեռ անորոշ, մանրամասն չնկարագրված է մնում.  
այսինքն հարկավոր է գտնել «մրցանակներին»  
այն ձևը, (և մրցանակները տալու այն պայ-  
մանները), վոր մենք հատկացնում ենք կոտպե-  
րացման համար, մրցանակներին այն ձևը, վորի  
որով մենք բավարար չափով ոժտանդակում ենք  
կոտպերացիային, մրցանակներին այն ձևով,



վորի որով մենք հասնում ենք քաղաքակրթված կոոպերատորին: Իսկ քաղաքակրթված կոոպերատորների հասարակակարգը, յերբ արտադրության միջոցները հասարակական սեփականություն են կազմում, յերբ պրոլետարիատը դասակարգային հաղթանակ է տարել բուրժուազիայի դեմ—դա սոցիալիզմի հասարակակարգն է:

## II.

Միշտ, յերբ յես գրել եմ տնտեսական նոր քաղաքականության մասին, քաղվածքներ եմ մեջբերել պետական կապիտալիզմի մասին 1919 թ. գրած իմ հոդվածից: Այս հաճախ կասկածներ է հարուցել մի քանի յերիտասարդ ընկերների մեջ: Սակայն նրանց կասկածները առավելապես վերաբերում էյին վերացական-քաղաքական հայացեյին:

Նրանց թվում էր թե, չի կարելի պետական կապիտալիզմ անվանել այն կարգերը, ուր արտադրության միջոցները պատկանում են բանվոր դասակարգին, և այդ բանվոր դասակարգին պատկանում է պետական իշխանությունը: Սակայն նրանք չեյին նկատում, վոր յես «պետական կապիտալիզմ» անունը գործ եմ ածել, նախ՝ մեր այժմյան դիրքի և այսպես կոչված ձախ կոմուն-

նիստների դեմ վարած իմ բանակովում ունեցած դիրքի պատմական կապի համար. նույնպես և յես դեռ այն ժամանակ ապացուցում էյի, թե պետական կապիտալիզմը մեր ժամանակակից տնտեսությունից բարձր կլիներ. ինձ համար կարևոր էր հաստատել հաջորդական կապը սովորական պետական կապիտալիզմի և այն արտասովոր, նույնիսկ բոլորովին արտասովոր պետական կապիտալիզմի միջև, վորի մասին խոսում էյի յես, ընթերցողին անսեսական նոր քաղաքականությունը մուծելիս: Յերկրորդ՝ ինձ համար միշտ էլ կարևոր է յեզել գործնական նպատակը: Իսկ մեր տնտեսական նոր քաղաքականության գործնական նպատակը կոնցեսիաներ ստանալումն էր. կոնցեսիաներն արդեն անշուշտ, մեր պայմաններում պետական կապիտալիզմի մաքուր տիպը կլինեյին: Ահա թե ինչ կերպ էյին պատկերանում ինձ դատողությունները պետական կապիտալիզմի մասին:

Բայց հարցի մի ուրիշ կողմն էլ կա, յերբ վոր մեզ կարող է հարկավոր գալ պետական կապիտալիզմը կամ գոնե, վերջին հաշվով բաղա-տումը նրա հետ: Այդ կոոպերացիայի հարցն է:

Անկասկած է, վոր կոոպերացիան կապիտալիստական պետության պայմաններում կողեկտիվ կապիտալիստական հիմնարկ է հանդիսա-



նում: Անկասկած է և այն, վոր մեր ներկա տըն-  
տեսական իրականության պայմաններում, յերբ  
մենք միացնում ենք մասնավոր կապիտալիստա-  
կան ձեռնարկությունները, բայց վոչ այլ կերպ,  
քան հասարակական հողի վրա, և վոչ այլ կերպ, քան  
պետական վերահսկողության ներքո, վորը բան-  
վոր դասակարգին է պատկանում, — հետևողական  
սոցիալիստական տիպի ձեռնարկությունների  
հետ (թե՛ արտադրության միջոցներն են պատ-  
կանում պետության, թե՛ հողը, վորի վրա զը-  
տընվում է ձեռնարկությունը, թե վողջ ձեռ-  
նարկությունն ամբողջովին), ապա այստեղ հարց  
է ծագում նաև յերրորդ տեսակի ձեռնարկու-  
թյունների մասին, վորոնք առաջ սկզբունքային  
նշանակության տեսակետից ինքնուրույնություն  
չունեյին՝ — այն է՝ կոոպերատիվ ձեռնարկություն-  
ների: Մասնավոր կապիտալիզմի դեպքում կոո-  
պերատիվ ձեռնարկությունները տարբերվում են  
կապիտալիստական ձեռնարկություններից, ինչ-  
պես կոլլեկտիվ ձեռնարկությունները՝ մասնավոր  
ձեռնարկություններից: Պետական կապիտալիզմի  
դեպքում, կոոպերատիվ ձեռնարկությունները  
տարբերվում են պետական-կապիտալիստական-  
ներից, նախ՝ վորպես, մասնավոր և յերկրորդ՝  
իբրև կոլլեկտիվ ձեռնարկություններ: Մեր ի-  
րականություն մեջ կոոպերատիվ ձեռնարկու-

թյունները տարբերվում են մասնավոր-կապի-  
տալիստական ձեռնարկություններից, ինչպես  
կոլլեկտիվ ձեռնարկություններ, բայց չեն տար-  
բերվում սոցիալիստական ձեռնարկություննե-  
րից, յեթե հողը, վորի վրա հիմնված են նրանք, և  
արտադրության միջոցները պատկանում են  
պետությանը, այսինքն՝ բանվոր դասակարգին:

Ահա այս պարագան մեզ մոտ, յերբ դատում  
են կոոպերացիայի մասին, բավականաչափ հա-  
շվի չի առնվում: Մոռանում են, վոր կոոպերա-  
ցիան մեզ մոտ՝ շնորհիվ մեր պետական կազմի  
առանձնահատկության՝ բոլորովին բացառիկ նը-  
շանակություն է ստանում: Յեթե առանձնացը-  
նենք կոոպիսաները, վորոնք, իդեպ ասենք, մեզ  
մոտ քիչ-չատ նշանակելի դարգացում չստա-  
ցան, այդ դեպքում կոոպերացիան մեր պայման-  
ներում միշտ և ամեն տեղ լիովին կհամապա-  
տասխանի սոցիալիզմին:

Պարզեմ իմ միտքը: Ի՞նչու մն է կայանում հին  
կոոպերատորների ծրագիրների ֆանտաստիկու-  
թյունը, սկսած Ռոբերտ Ուոլենից<sup>17</sup>): Նրանում, վոր  
նրանք յերազում էյին սոցիալիզմի միջոցով խա-  
ղաղորեն կերպարանափոխել ժամանակակից հա-  
սարակությունը՝ առանց հաշվի առնելու այնպիսի  
մի հիմնական հարց, ինչպիսին է դասակարգային  
պայքարի, բանվոր դասակարգի կողմից քաղաքա-



կան իշխանության նվաճման, շահագործողներին դասակարգի տիրապետության տապալման հարցը: Ուստի և իրավացի յենք մենք՝ այդ «կոոպերատիվային» սոցիալիզմի մեջ միայն Փանտաստիկա, ինչ վոր ումանտիկ, նույնիսկ գուհիկ բան գտնելով այն յերազանքներում, թե սոսկ ազգաբնակչության կոոպերացմամբ կարելի յե դասակարգային թշնամիներին դասակարգային աշխատակիցներ դարձնել և դասակարգային պատերազմը՝ դասակարգային խաղաղություն (այսպես կոչված քաղաքացիական խաղաղություն):

Անկասկած, այժմեյության հիմնական խնդրի տեսակետից մենք իրավացի եյինք, վորովհետև առանց պետության մեջ քաղաքական իշխանություն ձեռք բերելու համար միվոր դասակարգային կռիւ սոցիալիզմը չի կարող իրագործվել:

Բայց տեսեք, թե այժմ ինչպես փոխվեց հարցը, յերբ պետական իշխանությունն արդեն բանվոր դասակարգի ձեռքին ե, յերբ շահագործողներին քաղաքական իշխանությունը տապալված ե և յերբ արաազրության բոլոր միջոցները (բացի նրանցից, վորոնք բանվորական պետությունն իր կամքով ժամանակավոր ու պայմանով տալիս ե շահագործողներին իբրև կոնցեսիա) գտնվում ե բանվոր դասակարգի ձեռքին:

Այժմ մենք իրավունք ունենք ասելու, վոր կոոպերացիայի պարզ աճումը մեզ համար նույնանում ե (վերևում հիշված «փոքրիկ» բացառությամբ) սոցիալիզմի աճման հետ, ու սրա հետ ել ստիպված ենք խոստովանելու սոցիալիզմի մասին ունեցած մեր ամբողջ տեսակետի արմատական փոփոխությունը: Այդ արմատական փոփոխությունը կայանում ե նրանում, վոր առաջ ծանրության կենտրոնը դնում եյինք և պիտի դնեյինք քաղաքական կռիւի, հեղափոխության, իշխանության նվաճման վրա և այլն: Այժմ, ծանրության կենտրոնը փոխվում ե այն սատիճան, վոր տեղափոխվում ե խաղաղ կազմակերպչական «կուլտուրական» աշխատանքի վրա: Յես պատրաստ եմ ասել, վոր մեզ համար ծանրության կենտրոնը տեղափոխվում ե կուլտուրայի տարածման վրա, յեթե միայն չլինեյին մեր միջազգային հարաբերությունները, չլինեյ մեր դիրքի համար միջազգային մաշտաբով պայքարելու պարտականությունը: Բայց յեթե սա մի կողմ թողնենք և բավականանք ներքին տնտեսական հարաբերություններով, այդ դեպքում մեզ մոտ ճիշտ վոր այժմ աշխատանքի ծանրության կենտրոնը կուլտուրա տարածելն ե հանդիսանում:

Մեր առաջ եպիսա կազմող յերկու խնդիր



կա: Առաջինը՝ վերափոխել մեր ապարատը, վոր ամենևին բանի պետք չե և վորն ամբողջովին վերցրել ենք նախկին եպիսոպոսից, կովի հինգ տարվա ընթացքում այս շրջանում մենք լուրջ կերպով վոչինչ չկարողացանք վերափոխել, և չեյինք ել կարող: Մեր յերկրորդ խնդիրը գյուղացիութեան համար վարած կուլտուրական աշխատանքն է: Իսկ գյուղացիութեան մեջ վարած այդ կուլտուրական աշխատանքին, իբրև տնտեսական նպատակ, հենց կոոպերացումն է հետամուտ: Լիակատար կոոպերացման դեպքում մենք արդեն յերկու վտարով կանգնած կլինեյինք սոցիալիստական հողի վրա: Բայց լիակատար կոոպերացման այդ պայմանն իր մեջ գյուղացիութեան համար այնպիսի կուլտուրականութուն է պարունակում (հատկապես գյուղացիութեան, իբրև ահազին մասսայի), վոր այդ լիակատար կոոպերացումն անհնարին է առանց մի ամբողջ կուլտուրական հեղափոխութեան:

Մեր հակառակորդները մեզ քիչ անգամ չեն ասել, թե մենք ձեռնարկում ենք մի անմիա գործի՝ սոցիալիզմը հաստատել վոչ բավականաչափ կուլտուրական մի յերկրում: Բայց նրանք սխալվեցին նրանում, վոր մենք սկսեցինք վոչ այն ծայրից, ինչպես սահմանված էր ըստ թեորիայի (ամեն տեսակի պեղանաների), և վոր

մեզ մոտ քաղաքական ու սոցիալական հեղաշրջումը նախորդ հանդիսացավ այն կուլտուրական հեղաշրջման, այն կուլտուրական հեղափոխութեան, վորի դիմաց մենք, այնուամենայնիվ, կանգնած ենք այժմ:

Մեզ համար այժմ բավական է այդ կուլտուրական հեղափոխութունը, վորպեսզի լիովին սոցիալիստական յերկիր հանդիսանանք, բայց մեզ համար այդ կուլտուրական հեղափոխութունն արտասովոր դժվարութուններ է ներկայացնում և՛ զուտ-կուլտուրական տեսակի (վոլովհետև մենք անգրագետ ենք), և՛ նյութական տեսակի (վորովհետև կուլտուրական լինելու համար հարկավոր է արտադրութեան նյութական միջոցների վորոշ զարգացում, հարկավոր է վորոշ նյութական բաղա):

(Собр. соч., т. XVIII, ч. 2, стр. 139—145.)



## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1) ՅՈՒԶՈՎ, Ո. Ի. — Կարլիցի կեղծ անունն է (1848 — 1890): Իր հասարակական գործունեությունը սկզբում յեղել է բակունինական, սակայն դառնում է հետադիմական-սլավյանոֆիլական նարոդնիկության գաղափարախոսը: Գլխավոր աշխատություններն են: «Ум и чувство, как факторы прогресса» և «Основы Народничества»: Այդ աշխատություններում Յուզովը «իր վտաքի տակ հող ունեցող և ճշմարտության ձգտող ժողովուրդը հակադրում է վտաքի տակ հող չունեցող և ժողովրդի նկատմամբ իմաստասիրելի ձգտող մտավորականությանը»:

2) Ն.-ՈՆ. — 80—90 թվականների տնտեսագետ Ն. Ֆ. Դանիելսոնի կեղծ անունն է. Նարոդնիկության ամենացայտուն ներկայացուցչներից մեկն է: Առաջինն է յեղել, վոր ուսերեն լեզվով թարգմանել է Մարքսի «Կապիտալը»: Մեծ մասնակցություն է ունեցել այն բանավեճին, վոր 90 թվականներին վարվում էր մարքսիստների և նարոդնիկների միջև:

3). ՏՈՏՈՄՅԱՆՅ. — Տնտեսագետ, մանր-բուրժուական կոոպերացիայի տեսաբան:



4) ԲՈՒԼԳԱԿՈՎ.— «Լեզալ մարքսիզմի» ներկայացուցիչներին մեկն էր. աստիճանաբար մարքսիզմից թեքվում է դեպի իդեալիզմը, մի շարք աշխատություններում քննադատություն յենթարկում մարքսիզմը և Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո քահանա ձեռնադրվում:

5) ԲԱՖՅՈՑ.— Ֆրանսական Մեծ Հեղափոխություն ակնավոր գործիչն էր: «Ժողովրդական տրիբուն» իր թերթում և «Հավասարների Մանիֆեստը» բրոշյուրում կոմունիզմի քարոզով հանդես յեկավ: Բարյոֆը գտնում էր, Վոր հեղափոխության նպատակը կիրառործվի այն ժամանակ, յերբ հավասարության իդեալները անտեսական ընտրվառում կիրականանան ամբողջովին, այնպես, ինչպես նրանք իրականացան քաղաքական ասպարիզում: Ֆրանսական բուրժուազիան Բարյոֆին և նրա կողմնակիցներին 1797 թվին մահվան պատժի դատապարտեց:

6) ԺՈՐՆԱ.— Ֆրանսական սոցիալիստական կուսակցության հայտնի առաջնորդն էր, Վորին համաշխարհային պատերազմի նախորդակին ֆրանսական բուրժուազիան սպանել ավեց:

7) ԵԼՄ.— Գերմանական սոցիալ-դեմոկրատ, պատկանում էր ռեֆորմիստական թևին:

8) ԱՆՍԵԼ.— Բելգիական խոշոր աջ սոցիալիստներին մեկն էր. հիմնել և և ղեկավարել Գեների հոշակավոր «Vooruit» (Յառաջ) կոոպերատիվը:

9) Leipziger Volkszeitung («Լայպցիգի ժողովրդական Լրագիր») — գերմանական սոցիալ-դեմոկրատիայի հեղափոխական թևի որգանը:

10) ԳԵԴ.— Մի ժամանակ ֆրանսական սոցիալիստական կուսակցության հեղափոխական թևի հայտնի առաջնորդն էր: Համաշխարհային պատերազմի ժամանակ դարձավ պատերազմի կողմնակից և ֆրանսական բուրժուական կառավարությունից անդամ:

11) Ա. ԲԵԲԵԼ.— (1840—1912) գերմանական սոցիալ-դեմոկրատիայի հիմնադիրներից մեկն է և առաջնորդը: Պրուսական զինվորի վորդի յեր, 14 տարեկան վորբ Բերելը մտնում է խառատի արհեստանոցը: 1865 թ. պատահելով Վ. Լիբկնեխտի հետ սոցիալիստ է դառնում և հարում Ինտերնացիոնալին, 1867 թ. սաքսոնական ժողովրդական կուսակցության կողմից ընտրվում է ռայխստագի անդամ և մնում մինչև մահը: 1869 թ. Բ. և Վ. Լիբկնեխտը Եյդենախի կոնգրեսում հիմնում են գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը: Ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ Բեբելը և Լիբկնեխտը բողոքում են Ելզաս-Լոտարինգիայի անեքսիայի դեմ: 1872 թ. Բեբելը յերկու տարով բանտարկության է դատապարտվում: Բեբելը իր գործունեությունը ընթացքում միշտ պայքարել է գերմանական միլիտարիզմի, մարքսիզմի խեղաթյուրման և ուղորտունիզմի դեմ:

12) ՄԻԼՅՈՒՏԻՆ Վ. Պ.— Ռ. Կ. Կ. IX համագումարին պահանջում էր կոոպերացիան պետականացնել և գյուղատնտեսական կոոպերատիվները յենթարկել գյուղական գործադիր կոմիտեներին:

13) ՉՈՒՉԻՆ.— Ռ. Կ. Կ. IX համագումարի անդամ, համագումարին պաշտպանում էր Միլյուտինի տեսակետը:

14) ԼԵՃԱՎԱ.— Հին բոլշևիկ:



15) ԿՐՈՆՇՏԱՆԻ ՓՈՐՁԸ.— Լենինը նկատի ունի 1921 թվի գարնան Կրոնշտադի ապստամբությունը:

16) ՅՅՈՒՐՈՒՊԱ.— Հին բոյլշևիկ. այժմ ԽՍՀՄ ժողովրդական կոմիսարներին նախագահի տեղակալն է:

17) ՌՈՒՆԵՐՏ ՈՌԻՆՆ (1771—1858).— Անգլիական ուսուցիչական սոցիալիզմի ներկայացուցիչն է, վոր սոցիալական բարենորոգումների յեռանդուն քարոզող էր տարված. փորձեց գործնականորեն կառուցել սոցիալիստական համայնք: Անգլիական կոոպերատիվ շարժման հոգևոր հայրն է համարվում:

## ՀՍԽՀ ՊԵՏՆԱՆՍԻ ՄՈՍԿՎ. ԲԱԺԱՆՄ.

### ԼԵՆԻՆՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

#### ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. ԼԵՆԻՆ.— Ժողովածու—Վ. Վահանյանի, Ա. Կարինյանի և Դ. Սիմոնյանի խմբագրությամբ:
2. Ա. ԳԵՐՈՐԻՆ.— «Լենինը վորպես մարտնչող մատերիալիստ» — հեղինակի նախաբանով հայկական հրատարակության առթիվ:
3. Ն. ԲՈՒՆՍՈՒՐԻՆ.— «Լենինը վորպես մարքսիստ»:
4. Մ. ՊԱՎԼՈՎԻՉ.— «Լենինը և ազգային հարցը»:
5. Ա. ԿԱՐԻՆՅԱՆ.— «Լենինը և պետությունը»:
6. Կ. ՌԱԳԵԿ.— «Լենին» — Հեղինակի նախաբանով հայկական հրատարակության առթիվ:
7. Ն. ԼԵՆԻՆ.— «Մարքսի և մարքսիզմի մասին», — խմբագրութ. Վ. Վահանյանի և Դ. Սիմոնյանի, Վ. Վահանյանի նախաբանով և ծանոթություններով:
8. Ի. ՍՏԱԼԻՆ.— «Լենինի և լենինիզմի մասին»:
9. Ն. ԼԵՆԻՆ.— «Կրոնի մասին». Դ. Սիմոնյանի նախաբանով:
10. ԼԵՆԻՆ.— «Կոոպերացիայի մասին»:
11. Ն. ԿՐՈՒՊՍԿԱՅԱ.— «Հիշողություններ Լենինի մասին»:

### ԳԻՏԱԿԱՆ ՍՈՅԻԱԼԻԶՄԻ ՀԱՆՐԱՄԱՏՁԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ

1. Կ. ՄԱՐԲՍ և Ֆ. ԵՆԳԵԼՍ.— «Կոմունիստական մանիֆեստ»: Թարգմ. Պ. Մակինցյանի, Դ. Ռյազանովի պարզաբանումներով և նախաբանով հայկական հրատարակության առթիվ:
2. Դ. ՌՅԱՋԱՆՈՎ.— «Մարքս և Ենգելս».



**ՀՍԽՀ ՊԵՏՂՐԱՏԻ ՄՈՍԿՎ. ԲԱԺԱՆՄ.**

3. ՊԼԵԽԱՆՈՎ. — «Սոցիոլոգիական աշխատություններ»։ Յերկերի ժողովածու III հատոր։ Թարգմանություն Գ. Սիմոնյանի և Գ. Մեհրաբյանի, նախարան Վ. Վահանյանի։

**ՍՈՅԻԱԼ - ԲԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԳԱՐԱՆ**

1. Ս. ՇԱՀՈՒՄՅԱՆ. — «Յերկերի ժողովածու» — խմբագրություն և նախարան Ա. Կարինյանի։
2. Ա. ԿԱՐԻՆՅԱՆ և ԳՐ. ՍԻՄՈՆՅԱՆ. — «Այլ Մարտունի-Մյանսիկյան»։
3. ԶՈՆ ՌԻԳ. — «Տաս որ վոր ցնցեցին աշխարհը»։
4. Ա. ԿԱՐԻՆՅԱՆ. — «Ս. Շահումյանի կյանքն ու գործունեությունը»։
5. ՊԼԵԽԱՆՈՎ. — «1825 թ. դեկտեմբերի 14-ը»։

**ՆԿԱՐՉԱԿԱՆ ՍԵՐԻԱ**

**ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ**

1. ԳՐՈՍՍ. — (նկարներ), տեքստ Կ. Հալաբյանի։
2. ԳՈՅԻԱ. — (նկարներ), տեքստ Մ. Մաղմանյանի։
3. ՍՏԵՅՆԼԵՆ. — (նկարներ), տեքստ Ա. Կարինյանի։
4. ՊԼԵԽԱՆՈՎ. — Ֆրանսական թատերգությունն ու ներկարչությունը XVIII դարում. — թարգմ. Ստ. Զորյանի, խմբագրությունը Դր. Սիմոնյանի, նախարան Վ. Վահանյանի։
5. ՅԱՎՈՒՂՈՎ. — «Ինքնակենսագրություն և նկարներ»։

**ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԳԱՐԱՆ**

1. ՎՍԵՎՈՂՈՂԻ ԻՎԱՆՈՎ. — «Զրահագնացք № 1469»։
2. ԵՐԵՆԲՈՒՐԳ. — «Կոմունարի ծխամորճը»։
3. ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻ. — «Բասնվեց և մեկ»։
4. ԿԼՈՒ ՄԱԿ-ԿԵՅ. — «Լինչի դատաստանը»։



«Ազգային գրադարան»



NL0170578



